№ 2—3 (200) XIX ՏԱՐԻ ՓԵՏՐՎԱՐ—ՄԱՐՏ 1909

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՍՏՕԼԻՊԻՆ—ՎՕՐՈՆՑՈՎԻՆ ՐԷԺԻՄԸ ԵՒ „ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ"

Մի վայրենի հալածանք է սկսուած հայ ժողովրդական կազմակերպութեան դէմ։ Բոլոր սև ուժերը միացել են՝ նրա գոյութիւնը վտանգելու համար։ Տաճկաստանում, սահմանադրական բէժիմի ներքոյ, դեռ չեն մարսում նրա բացարձակ, հրապարակային գործունէութիւնը։ Ռուսաստանում, Պետերբուրգից մինչև Թիֆլիս, ատամների կրճտոցով են յիշատակում նրա անունը և անխնայ ճարակում են հայ ինտելիգենտ երիտասարդութիւնը „դաշնակցական" որակումի տակ։ Պարսկաստանում... այո՛, նոյնիսկ Պարսկաստանում, „Դաշնակցութեան" ուրուականը հանգիստ չէ տալիս համառուսական բէակցիայի պարագլուխներին, որոնք երկար ամիսներից ի վեր, իրենց քսու մամուլի մէջ տենդենցիոզ նենգամտութեամբ հռչակում են դաշնակցականների „ղեկավարող դերը" պարսկական ներքին փոթորիկներում...

Կովկասում, բէակցիայից քաջալերուած գլուխ է բարձրացրել նոյն կազմակերպութեան դէմ՝ հայ ու վրացի հասարակութիւնների տականքը... „Դաշնակցութեան դէ՛մ" ամօթալի մարտակոչը հնչում է նորէն մեր եզակի մթնոլորտում, ուր ազատական թռիչքների հետ այնքան ուժեղ են և դաւաճան տրամադրութիւնները...

Անգամ եւրոպական կապիտալիզմի „խստալուրջ" օրգանների էջերից՝ նետում են „Դաշնակցութեան" հասցէին ամենածանր ամբաստանութիւններ, համեմուած անօրինակ սպառնալիքներով... Հետևեցէք այդ բոլոր մեղադրականներին, կարդացէք այդ արտառոց սպառնալիքները, որոնք մատնում են մի տարապայման հոգեբանութիւն, յաճախ շշմեցնում են իրազեկ ընթերցողին իրենց անլուր հրէշաւորութեամբ։ „Դաշնակցութիւնը" հանդէս է գալիս, որպէս մի վիթխարի, խորտակիչ ուժ ահագնածաւալ պետութիւնների համար, որպէս շանթակիր մի փոթորիկ, որ մշտապէս սաւառնում է Արևելքի հորիզոններում... Պէտք է անհետացնել նրան—ինչ գնով էլ որ լինի. այդպէս են վճռել հայ ժողովրդի բազմապիսի թշնամիները։ Եւ ահա՝ մինչդեռ դաշնակցական գործիչներին քմահաճօրէն բանտեն նետում ազատագրուած Տաճկաստանում, մինչդեռ ռուսական Սև-հարիւրակը, բռնուած հակահայ ու հակադաշնակցական մի վայրենի ատելութեամբ՝ քարոզում է այդ մարմնի դէմ անվերջ կախաղաններ, Սիբիր ու տաժանակիր աշխատանք,—մի այլ ասպետ, հօհենցօլլերներեան Գերմանիայի զաւակներից մինը, մի թափառական հրապարակախօս, հանդիսանալով Եւրօպայի առաջ, իբրև հաւատարիմ porte-parole սուլթանական բէակցիայի, մի շարք ընդարձակ յօդուածներում, „Բերլիներ Տագեբլատտ" խոշոր ու ազդեցիկ օրգանի մէջ՝ հիւսում է անհնարին զրպարտութիւններ „Դաշնակցութեան" ու հայութեան հասցէին և հրաւիրում է թիւրք ու ռուս կառավարութիւններին՝ ընդհանուր, միաբան ճիգերով տապալել հայ մարտական կուսակցութիւնը, սանձ դնել „յաւիտենօրէն ըմբոստ" ու „անջատական" հայ ժողովրդի ախորժակներին։

Այո՛—և ամենուրեք նոյն տարրերն են այդ արշաւանքի կազմակերպողը, նոյն վայրագ փաստաբանները հակահարուածների, բռնութեան ու յաւիտենական ստրկութեան։ Նրանց բոլորին արդէն սարսափեցրել է „ազատութեան" ու „երջանկութեան" այն չափը, որին արժանացաւ հայ ժողովուրդը օսմանեան յեղափոխութեամբ։ Նրանք գտնում են, որ դա չափազանց շատ է այդ ժողովրդի համար, որը ստրկական իր գոյութեան մէջ արդէն իսկ „վտանգաւոր" էր, իսկ այժմ, ազատուելով, շղթայազերծ մրրկի պէս կարող է յորձանք տալ դէպի աշխարհի չորս բոլորը, և հեղեղել և՛ նուաճել...

Թիւրքական բէակցիան դժգոհ է, որ „դաշնակցականները" ուզում են խօսել ու գործել իրենց հայրենիքում, որպէս ազատ մի երկրի մէջ։

Ռուսական Սև-հարիւրակը համոզուած է, կամ, յամենայն դէպս, հաւատացնում է, որ „Դաշնակցութիւնը" պիտի վերականգնէ հայկական թագաւորութիւնը մինչև Վօրոնէժ։ Գերմանացի հրապարակախօսը, բացի այդ բոլորից, հասկացնում է նաև, որ դաշնակցական կոմիտէները թիւրքաց Հայաստանում ճնշում են միսիոնարների գործունէութիւնը, ըմբոստութեան կրակ են արծարծում հայ նորածիլ սերունդի մէջ և ամեն կերպ ձգտում են թումբ դնել պանգերմանիզմի յառաջխաղացութեան, Drang nach Osten-ին...

կարդացէք, հետևեցէք այդ այլանդակ իրողութիւններին, որոնք բնաւ պատահական երևոյթների հանգամանք չունին, այլ թարգման են շատ որոշ, ձևաւորուած հոսանքների...

Ապահովաբար կարելի է ասել, որ երբէք, ոչ մի յեղափոխական կազմակերպութիւն իր ժողովրդաշէն գործունէութեան ընթացքում չի յուզել այդքան կրքեր, չի յարուցել այդքան թոյն ու ատելութիւն, չի տեսել իր դիմաց սև, յետադէմ ուժերի այդքան ահեղ ու այլազան մի բանակ։

Հպարտանա՞լ... Ոչ։ Շափազանց շատ է տուժել հայ տարաբախտ ժողովուրդը այդ համատարած ու գազանային որսախուճապից, որպէս զի մենք փորձենք պարծենալ մեր „ահազդեցիկ մեկուսացումով", իբսենական մեր ճակատագրով...

Բոլորը, բոլորը մեր դէմ, հայ ժողովրդի դէմ, հայ ազատութեան ու վերածնութեան դէմ. — արևելքի, նոյնիսկ արևմուտքի բռնակալութեան ու շահատենչ աւատականութեան բոլոր վիժումները՝ որոնց ատելի է հայ ժողովուրդը իր քաղաքակրթական հակումներով և իր միակ յեղափոխական կազմակերպութեամբ...

Ահա մի պարլամենտ, աշխարհի ամենահզօր բռնապետութեան „պարլամենտը", ռուսական Դուման՝ ամբողջ մի շարք նիստերի ընթացքում զբաղուած „Դաշնակցութեամբ"։ „Դաշնակցութիւնը" և նրա հետ կապուած „հայկական սեպարատիզմը" (անջատականութիւնը) կազմում են, արդարև, „Կովկասեան հարցապնդումի" ու յարուցած վիճաբանութիւնների կարևորագոյն առարկան, գրեթէ կենտրոնը։

Հնչում են Դումայի ամբիոնից սարսափելի ամբաստանութիւններն այդ կազմակերպութեան դէմ, գալիս են և պատասխանները կովկասեան փոխարքայական պալատից։ Ստացւում է մի այլանդակ շփոթ։ Երկու ծայրայեղ, տրամագծօրէն հակադիր կարծիքներ բաղխւում են իրար։ Մէկը — ծայր-աջակողմը, ի դէմս Մարկովների ու Պուրիշկեվիչների — ներկայացնում է „Դաշնակցութիւնը" որպէս այն ահեղ ու աշխարհակոխ ուժը, որ պատրաստ է հարիւր հազարանոց իր բանակով արշաւել... մինչև Վլադիվոստոկ։ Միւսը ցուցադրում է նոյն կազմակերպութիւնը, որպէս արդէն յաղթահարուած, չգոյ մի գոյութիւն։ Եւ առաջին կարծիքը համաձայն իր ըմբռնումին, թելադրում է արեան բաղանիքներ սարքել Կովկասում, միանգամ ընդմիշտ խեղդել „Դաշնակցութիւնը", որպէս զի Ռուսաստանը հարկադրուած չը լինի ապագայում „վերստին նուաճել Կովկասը"...

„Հոկտեմբերեան" մեծամասնութիւնը, որից կախուած է խնդրի ելքը, ուզում է հետևել juste milieu-ի, „միջին ճանապարհի" քաղաքականութեան։ Նա մերժում է քէարկել աջակողմեանների եզրակացութիւն-բանաձևը, բայց միևնոյն ժամանակ հրահանգում է, որ փոխարքայութիւնը ոչնչացուի և Կովկասեան կառավարութիւնը ստորադրուի անմիջապէս մինիստրական խորհրդին։ Հոկտեմբերեան մակեավելիզմը „փրկում է երևոյթը", պահպանում է էութիւնը։ Նրա համար ևս „Դաշնակցութիւնն" ու հայկական ըմբոստութիւնը կօշմարներ են և նա ևս իր երկդիմի բանաձևով ներշնչում է կառավարութեանը՝ ծածանեցնել միշտ հայերի վրայ կնուտի ու արեան քաղաքականութեան դրօշակը։

Եւ այդպէս միանում են սրտառուչ մի դաշնակցութեան մէջ ցարական կամարիլլան, Դումայի աջակողմն ու կենտրոնը։ Ստոլիպին, Պուրիշկեվիչ և Գուչկով կազմեցին — վաղուց արդէն կազմում են — երրորդութիւն ու մէկ բնութիւն... „ամենահարուստ ծայրագաւառի" յեղափոխական ու կուլտուրական բոլոր ուժերը խեղդելու համար։ Միշտ բացասական գործունէութեան նպատակով են դաշնակցում երրորդ Դուման ու կառավարութիւնը. միշտ արիւնոտ մարզանքների, երբէք դրական ու շինարար աշխատանքի համար...

Իսկ կովկասեան կառավարութի՞ւնը... Մի՞թէ նա, յիրաւի, դուրս է մնում այդ „սրբազան դաշնակցութիւնից". մի՞թէ յիրաւի, որևէ էական տարբերութիւն կայ վօրոնցովեան ու ստոլիպինեան վարչական մեթոդների միջև։ Մի՞թէ ինքնուրոյնութեան որևէ յաւակնութիւն կարող է ունենալ „փոխարքայութիւնը" մի կայսրութեան մէջ, մի ռէժիմի տակ, որ իր պողպատեայ բռունցքի հարուածներով ձգտում է ամեն բան „հաւասարեցնել", ձգտում է ստեղծել իր բովանդակ տարածութեան վրայ այն գերեզմանային, անապատական միակերպութիւնը, ուր ոչ մի օվասիս չը կարողանայ իր կենսաշունչ ու զովարար ներկայութեամբ „վտանգել" ցարիզմի մեռելատիպ հմայքը...

Վօրոնցով-Դաշկով նոյնպէս մտնում է պետերբուրգեան նիզակակցութեան մէջ։ Իր զեկուցումներով և իր ներկայացուցիչների բերնով, Դումայում, նա յայտարարում է ի լուր Ռուսաստանի, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը յաղթահարուած է, թէ նա հող էլ չունի հայկական իրականութեան մէջ. բայց դա չի արգելում „ազատամիտ կոմսին" միաժամանակ որս կազմակերպել հայ մտաւորականութեան ու երիտասարդութեան դէմ, որոնց նա, անշուշտ, նոյնացնում է յեղափոխական գաղափարի ու „Դաշնակցութեան" հետ։ Մասսային բանտարկութեան զոհերը Թիֆլիսում ու գաւառներում դեռ մնում են իրենց խուցերում և հալածողական տենդը — խուզարկումներով, ձերբակալումներով ու աքսորներով — անընդհատ շարունակւում է։ Անխնայ հարուածում են Վօրոնցովեան դատարանները և բոլոր նրանց, որոնք 1905—906-ի աղէտաւոր օրերում, թիւրք-հայկական ընդհարումների մէջ, „Դաշնակցութեան" դրօշակի տակ ակամայ զէնք են առել ու պաշտպանել հայ խաղաղ ազգաբնակութիւնը։ Իսկ նոյն դատարանները

որքա՜ն ներողամիտ են դէպի այդ հսկայական աղետ-ոճրի ճշմարիտ հեղինակները...

Ոչ մի նշոյլ բարենորոգչական լուրջ ու շինարար աշխատանքի։ Դրա փոխարէն — անվերջ ու անդադրում հալածանք, սիններեր անտառներ, զինուորական դրութիւն, գեներալ-նահանգապետներ ու բացառիկ օրէնքներ։ Հալածանք նոյնիսկ այն ժամանակ, երբ հակառակորդին հաստատում են չ'եղած, ուժասպառ...

Ուժասպա՞ռ—երբէ՛ք։ Կովկասեան վարչութիւնը չը նայած իր վարդագոյն զեկուցումներին, ինքն ևս զգում է, այնուամենայնիւ, որ հայկական մթնոլորտում „ամեն բան կարգին չէ"։ Նա գիտէ, որ „Դաշնակցութիւն" կոչուած „պատրանքը" իրօք ձուլուած, միս ու արիւն է դարձած հայ աշխատաւոր ժողովրդի, հայկական լաւագոյն մտքի ու գործի հետ։ Եւ նա պիտի շարունակէ պահպանել այդ միտքն ու գործը իր բացառիկ օրէնքների տակ, իր յարաճուն բռնութեան ճիրաններում, պիտի ձգտէ խեղդամահ անել այն փոքրիկ նուաճումները ևս, որ ձեռք են բերուած արիւնալի ըմբոստացումներով, եթէ մենք մշտապէս վառ չը պահենք հակազդելու տրամադրութիւնը։ Մեր լակէյ-մամուլը կարող է շռայլել Վօրոնցով-Դաշկովին „խաղաղարարի", „դպրոցները վերաբացողի" և այլն տիտղոսները. մենք չենք, որ պիտի մոռանանք անցեալ ու ներկայ իրողութիւնները և մենք չենք, որ պիտի անբարոյացնենք ժողովուրդը սարկական խնկարկումներով։

Հ. Յ. Դաշնակցութիւնը ատւում ու հալածւում է բռնակալական Ռուսաստանում հէնց այն պատճառով, որ նա 1903—905—906-ին իր զինուած ու համատարած դիմադրութեամբ Պլեվէ-Գոլիցինեան ըէժիմի և „Կովկասեան վանդէայի" հսկայական յորձանքի դէմ, ստիպեց վերջ ի վերջոյ մեր սանձարձակ բիւրոկրատներին՝ լինել փոքր ինչ զգուշաւոր հայ տարրի վերաբերմամբ, ստիպեց նրանց à contre-coeur, ակամայօրէն ստանձնել „դպրոցները վերաբացողի", „խաղաղարարի" պաշտօնը։

Հայ դաշնակցական մարտիկներին, ինքնապաշտպանութեան զինուորներին վօրօնցովեան դատարանները տանջում են անվերջ բանտային նահատակութեամբ հէնց այն պատճառով, որ նրանք սովորեցրել են հայ ժողովրդին Իրաւունքի սրբազան կռիւը, արծարծել են ինքնապաշտպանութեան փրկարար բնազդը, բարձրացրել են հայ մասսաների դիմադրական կորովը, ներշնչել են թշնամիներին յարգանք ու ակնածութիւն և միանգամ ընդմիշտ դուրս են վտարել մեզ շրջապատող բռնաւոր խուժանների ու իշխողների գիտակցութիւնից հայի համար ծայրայեղօրէն անարգական այն դօգմը, որի համեմատ հայ մարդուն կարելի էր անվերջ տրորել, ոտնահարել և անպատիժ մնալ...

Այդ տեսակ պատմական փաստերից է բղխում մեր թշնամիների թունոտ ատելութիւնը — և մենք չենք զարհուրում նրանից։

Տասնեւութ տարուայ ծանր, տագնապոտ փորձութիւններին կուրծք տալուց յետոյ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համար դիւրին է արհամարհել և այն խելագար արշաւանքը, որ բորբոքւել է ներկայումս, մի քանի տարբեր միջավայրերում։

Ոչ դրակոնեան սպառնալիքները, ոչ սեպարատիզմի, „անջատականութեան" վայնասունը, ոչ էլ մեր ներքին գաճուճ, գարշահոտ ըէակցիան չեն կասեցնի նրա ընթացքը։

Հալածանքից ամրապնդուած՝ նա մի օր նորէն կը ծառանայ հալածողների դէմ։

Հսկող ժողովրդի անկապտելի իրաւունքների վրայ, նւիրուած նրա վերածնութեան վսեմ աշխատանքին,— նա կ'երթայ միշտ այդ ժողովրդի հետ, նրան մարգելով, դաստիարակելով ու կազմակերպելով։ Յեղափոխական կը մնայ նա—ոչ իբրև կուի մոլեռանդ սիրահար, արեան աստուծոյ երկրպագու, այլ իբրև ծնունդ կենսական մի չարաշուք անհրաժեշտութեան, իբրև թարգման հարազատ ժողովրդի տառապանքների, իբրև կրող նրա անհատնում բողոքի... Նրա ծրագիրը, քաղաքական ու հասարակական նրա դաւանանքը վաղուց արդէն հրապարակի վրայ են։ Վաղուց ու բազմիցս յայտարարել է նա, որ իր նպատակը չէ մեռած կուռքերի ետևից ընկնել, յարութիւն տալ անցեալի սխուր պաշտամունքներին, այլ որ նա ձգտում է իր պատմական միջավայրում—Անդրկովկասում, թէ օսմանեան Հայաստանի մէջ—ձեռք ձեռքի տուած ուրիշ ազգերի ժողովրդական կուսակցութիւնների հետ՝ ստեղծել մի այնպիսի համակենցաղ, ուր, ընդհանուր պետականութեան հովանիի տակ, ժողովուրդների ռամկավարական դաշնակցութեան մէջ, հայ համայնքը ևս գտնէ, վերջապէս, իր ազգային ու քաղաքացիական իրաւունքների անկաշկանդ վայելումը։

Ո՞Ւ Ր Ե Ն

Արդեօք անցե՞լ են անդարձ այն երանելի օրերը, երբ մեր նորածիլ երիտասարդութիւնը թողած կեանքի ամեն վայելք՝ ահագին զոհողութիւններով և կեանքի բոլոր վտանգները արհամարելով՝ գնում էր դէպի այնտեղ— սահմանի միւս կողմը — տանջանքի երկիրը այցելելու համար։

Գնում էր նա խոր գիտակցութեամբ, թէ անձնական ոչ մի հաճոյք չի սպասում իրեն այնտեղ, դժբախտների այս աշխարհում. գնում էր միակ համոզումով, թէ իր ներկայութեամբ կարող կը լինի թերևս մի թաց աչք չորացնել արտասուքի այդ երկրում. գնում էր նա շատ անգամ միակ մի ուխտով՝ գէթ բաց աչքով տե-

սած լինելու այն, որի մասին նա յաճախ լսում էր կամ կարդում, ինչպէս առեղծուածային մի վայրի, որի դռները փակ են եղել միշտ ամեն մի գիտակցողի դէմ, որպէս մի ժանտաբերի, և որի այցը կարող էր վարակել ամեն ինչ։

Բոլոր արգելքների, սւինի ու գնդակի դէմ այդ սերունդը ամրակուռ էր ու երկաթեայ. նա յամառ էր չը հասկանալու չափ, թէ իր կամքի ուժը զօրեղ չէ ամեն մի խոչընդոտի դէմ, և գնում էր նա ու շատ անգամ սահմանն անցնում միայն մի քայլ՝ յաւիտեան հանգչելու համար անհաւասար կռւի մէջ, որ նրան ընծայում էր պատահող քիւրդ աւազակախումբը կամ սահմանի պահակ գունդը. իսկ եթէ բախտը ժպտար նրան, ներս անցնէր, դա ամենամեծ երջանկութիւնն էր որ նա ապրել էր իր կեանքում։

Բայց ի՜նչ կեանք շարունակ գաղտնի, շարունակ զգոյշ, մութ նկուղներում ու յարդանոցներում, լեռների փապարներում ու թաւուտների մէջ խշտակեաց ու միշտ արթուն։

Ամեն րօպէ պատրաստ՝ բլթակը քաշելու, երբ այդ էր պէտք, ամեն վայրկեան տրամադիր՝ ներշնչելու հային, քիւրդին, թիւրքին իր հմայողումները, երբ այդ էր պէտք։

Նրա ամեն մի խօսքի մէջ ցաւն ու վիշտն էր շեշտուած տառապող աշխարհի համար. նա ֆանատիկ առաքեալն էր իր հաւատամքի ու խղճի. նա մոլեռանդ լաւատեսն էր գալիք օրերի։

Մի կարճ միջոց և նա այլ ևս մենակ չէր. ամբողջ մի դպրոց էր շուրջը, խտացած, ամրացած, մի ոգի դարձած, որ պարագային անյայտանում էր, ցրւում, անէանում, կրկին համախմբւելու, կրկին համբուրւելու համար։

Տրամադրութիւնը միշտ նոյնն էր—նոյնչափ ջերմ ու ընկերական—և՛ երկար անջատումից, և՛ մի անսպասելի յաղթանակից յետոյ, և՛ մի ժողովրդական ցեց գնդակահարելիս և՛ գնդակի հարւածի տակ աչքերը փակելիս։

Սիրտը նոյն բաբախումը, նոյն թրթիռն ունէր թէ մահւան դէմ, թէ կեանքի հանդէպ. նա գիտէր որ այդ օրւայ կեանքը վաստակն է օրւայ, թէ մահը ուշացաւ մի օրւայ արևով միայն։

Ծպիտը նրան երբէք չը դաւռճանեց, ոչ քաղցից նւաղած, ոչ ծարաւից պապակած ժամին և ոչ յարդեայ անկողնի մէջ կամ խոնաւ գետնի վրայ՝ ջերմի օրերում։

Գաղափարի մարդն էր նա, իդէալին կառչած զինւորը և պարտքի վեհ կոչումին իր արևը զոհաբերողը։

Այդ անցեալն էր, շատ մօտ անցեալը։

Բայց այսօ՞ր... Երբ ազատութեան թափը սաւառնում է ամբողջ Թիւրքիայում, երբ վերացած են այնտեղ մտնելու դժոխային բոլոր պայմանները, երբ սահմանին մօտեցողը ժպիտով է ընդառաջւում, երբ երկրի ներսը մտքի կմախքներ ակնդէտ դուրսն են դիտում, դէպի Կովկաս, Պոլիս, Եւրոպա, Եգիպտոս՝ այնտեղից յուսադրող խօսքեր, տաք սիրտ, մտքի անձնուրացներ սպասելով, նրանք ուշանում են, նրանք չը կան, և կարծես գոյութեան նշաններ էլ ցոյց չեն տալիս։

Խօսքի, մամուլի, հաւաքումների ազատութիւնները, որչափ և գնահատելի, մնում են առանց բարերար հետևանքների, շնորհիւ այն բանի, որ այդ ազատութիւնները շահագործող տարր յօգուտ տառապող մասսայի չը կայ կամ համարեա չը կայ։

Բայց ո՞ւր են նրանք, ներկայ սերնդի ներկայացուցիչները, որոնք ժողովրդի իրաւունքների, նրա մտքի մշակման, նրա գիտակից շարժումների, նրա տնտեսական զարգացման ֆակտօրների մէջ են որոնել նրա բախտն ու ապագան։

Ո՞ւր են նրանք, որոնք առթի էին սպասում խմբերով անցնել այդ աւեր երկիրը, և եթէ ոչնչով, գէթ իրենց ներկայութիւնով, իրենց մի յուսադիր խօսքով նեցուկ լինին ընկճւած ժողովրդին։

Ո՞ւր են նրանք, որոնք միշտ հանելուկային են երևակայել այդ երկրի հասարակա-տնտեսական պայմանները, գիւղացու ծով ցաւերով բեռնաւորւած տուրքերը, նրա ապրուստի միակ միջոց՝ հողի մշակութեան գործը, նրա նահապետական արհեստները։

Ո՞ւր են նրանք, որոնք անդադար երազել են Տաճկաստանի ժողովուրդների տգէտ շրջաններում մտաւոր լոյս տարածել և նրա կրթութեան գործով զբաղւիլ։

Ո՞ւր են նրանք, որոնք անբաւարար են գտած այդ երկրի մասին ստացած վիճակագրական տեղեկութիւնները, աշխարհագրական դիրքի, քաղաքների հեռաւորութեան, գիւղերի քանակի, բնակիչների թւի և հազար ու մի այրող հարցերի վերաբերմամբ։

Եւ վերջապէս ո՞ւր են նրանք, որոնք իրաւացիօրէն համոզւած են եղել, թէ հայ ժողովրդի թշւառութիւնը պայմանաւորւած է նրա դրացիների տգիտութեամբ, թէ նրանց մէջ ևս դպրոց, մամուլ, գիրք տարածելը, նրանց մտաւոր կրթութեան բարձրութիւնը անհրաժեշտութիւն է և հայի առաջադիմական գործի համար։

Բաց է ասպարէզը բոլոր մտաւոր-շինարար ուժերի առաջ։ Աշխատանքը միակողմանի՝ մի ցեղի կողմից չը պէտք է լինի, այլ ընդհանուր. Տաճկաստանի բոլոր ցեղերի ներկայացուցիչները միացած հաւասարաբար պիտի գործեն ընդհանուր երկրի համար, բոլոր ցեղերի մէջ։ Թշւառութիւնը ընդհանուր է, դարմանն էլ ընդհանուր է լինելու։

Նախկին սև օրերի հսկայական զոհողութիւնները չեն պահանջւում այսօր, թէպէտ առանց զրկանքների չեն լինելու և ներկայ աշխատանքները։ Խուլ գաւառները անցնել-շրջել այլևս կեանքի գնով չէ պայմանաւորւած, բայց անշուշտ այդ կեանքը մտնողը զուրկ է բարեկեցիկ քաղաքների հանգստաւէտութիւնից։ Եթէ ոչ գաղափարի վեհութիւնը գնահատելով, գէթ այնտեղ վերաստեղծւող նոր կեանքով և նրա հետ կապւած մտքի թռիչքների հարուստ երևոյթներով հրապուրւած հարիւրաւոր մտքի մշակներ պէտք է լցւած լինէին մինչև այժմ պահանջի վայրերը։ Բայց մեր տեղեկութիւնները շատ աղքատ են նման բովանդակութիւնից և մինչև այժմ լուրջ ձեռնարկ չը կայ այդ ուղղութեամբ։

Վերածնւող կեանքը գործիչներ է պահանջում. այդ է շեշտւում ամեն մի նամակի մէջ, որ հասնում է մեզ սովի, մտաւոր քաղցի և անհամերաշխութեան աշխարհից։

Ծով պահանջների դէմ եղած ուժերը շատ են քիչ։

Համատարած սովի հետ միասին և գործիչի սով կայ

Քսան տարուայ սև ու մութ օրերի հալածանքներով է գօսացած այդ արդիւնաւէտ ու աշխատասէր ժողովրդի ձեռքը. տարիների արգելք-կապանքները քարացրել են այնտեղ միտքը. բերրի հողերը անապատների են փոխուած երկար ժամանակեայ անխոփ մնալուց. երթևեկութեանց խզումը իսպառ դադարեցրել է գոնէ հում նիւթերի փոխանակութեան գործը. կեանքը կանգ է առած իր բոլոր կողմերով։ Թշուառացած քրիստոնէայի մօտ նոյնչափ թշուառ է և իսլամ տարրը. նրա մոլեռանդ մասը դժբախտ անհեռատեսութիւնն ունեցաւ տխուր գործիք դառնալ իր դրացուն թալանելու գործում և մասամբ վարժուեց անաշխատ կեանքի։ Զարիքը երկրի տնտեսութեան համար կրկնակի եղաւ։ Երկրագործութիւնը, արհեստը մոռացութեան մատնուեցին. արդիւնաբերութիւնը դադարեց. հացահատիկը սպառեցաւ և ամբողջ երկիրը սովի դէմ յանդիման ցցուած մնաց։ Ցնտեսականի չգոյութեան պատճառով հետզհետէ գաւառական դպրոցները փակուեցան կամ ամուլութեան ենթարկուեցին։

Իսկ որ ցաւալին է, այսօր, սահմանադրութեան հրուչակումից ամիսներ վերջ, համերաշխութեան քայլերը ժողովուրդների մէջ դէպի ետ են ընկրկում և գաւառներից բողոքի ձայները խլացնող աղաղակով թափւում են դէպի մայրաքաղաք։ Անշուշտ կան սև ոգիներ, որոնք ուժ են տալիս պառակտող հակումներին։ Կառավարութիւնը մատերի միջով է նայում այդ բոլորին և տրամադիր էլ չէ այդ կարևոր խնդրով երբևէ զբաղուելու. դա այնքան էլ հերթական մի խնդիր չէ նրա համար, որչափ, օրինակ, մամուլի կամ համախմբումների սահմանափակումների հարցը։

Համերաշխութի՜ւն ցեղերի մէջ. ահա մի գործ, որ կոչումն ունի ոչ միայն ամրացնել սահմանադրութիւնը Թիւրքիայում, այլ և նա է միակ ազդակը, որին կրոնթնած շինարար ձեռքը կարող է կուլտուրական առաջադէմ քայլերին ուժ ու որոշ ուղղութիւն տալ։

Բոլոր մտաւոր ու ազնիւ ուժերը ձեռք ձեռքի տուած, հայ, թիւրք, քիւրդ, բարոյական պարտք ունին, քանի դեռ ուշ չէ, քանի դեռ յարաբերութիւնները ցեղերի մէջ յուսահատական լարումի չեն հասած, շտապեն դէպի կասկածոտ տեղերը, յորդորեն, յուսադրեն, ժողովրդական ցաւերի թարգմանն հանդիսանան, նրա շահերի մեկնիչները դառնան։

Պահանջել ամեն մէկից փոքր ինչ զոհողութիւն, դժուար է և անկարելի. ամեն մէկին չէ տրուած այդ արժանիքը։ Հանգիստ և կարիէրա փնտրողներին ոչ ոք անհանգիստ անելու ցանկութիւն էլ չունի։ Այդ պահանջը ուղղուած է այն անձնաւորութիւններին, այն թարմ ուժերին, որոնց մէջ պարտքի գիտակցութիւնը խտացած է՝ նրանց մինչև ժողովրդական խոր խաւերը, ետ ընկած խուլ անկիւնները մղելու, մինչև ժողովրդական գործիչներ դարձնելու աստիճան։

Իսկ ուսումնասիրութեանց տեսակէտով այդ համարեա կոյս մնացած երկրում բարեխիղճ աշխատողները կարող են հրաշքներ գործել։

Ասպարէզը նրան է, ով գործել գիտէ։

Ճանապա՜րհ նրան դէպի աւերակները։

ԹԻՒՐՔԻԱ

Այն ծայրայեղ կեդրոնացումը՝ որ թիւրք տիրապետութեան բանակային հոգեբանութիւնը կազմած է դարերէ ի վեր, կը շարունակէ տակաւին սահմանադրական վարչութեան տակ ալ միևնոյն աստիճանով ու միևնոյն ճակատագրապաշտ թափով։ Այս պատճառով ալ ընդարձակածաւալ պետութեան գաւառներուն ու մայրաքաղաքին միջև դժգոհութեան, անհասկացողութեան և բողոքի վէճը ոչ միայն չէ կորսնցուցած իր սաստկութիւնը, այլ երթալով կը դառնայ աւելի սուր ու աւելի բուռն։

Սահմանադրական կարգերը և փոփոխութիւնները, իրենց անարիւն ու խաղաղ վերահաստատումով, չի կրցան ցնցել ընկերական կեանքը, չի կրցան ներգործական հեռք ձգել ըմբռնումներու, բարքերու և հայեացքներու վրայ, հետևաբար երևոյթները փրկեցան, բայց պետութիւնն իր աւանդութիւններով, իր ներքին կազմով և իր էութեամբ մնաց նոյնը։

Ինքնակալութիւնը տապալեցաւ, բայց անոր մեքենական ուժը, զայն ստեղծագործող զօրութիւնը՝ մնաց իր տեղը, անձեռնմխելի և միշտ շոգիի վրայ։ Կեդրոնացման բանակային դրութիւնը Եըլդըզէն տեղափոխուեցաւ միայն նախարարական ժողովին մէջ՝ որ կոթնած իթթիհատեան բանակին ու նաւատորմիղին, կը շարունակէ վարել պետութիւնը միևնոյն վարչական եղանակով, միևնոյն վարչական հայեացքներով ու միևնոյն աւանդութիւններով։

Արագ հաղորդակցութենէ զուրկ և տասնեակ, քսան օրերով կեդրոնէն հեռու ինկած գաւառները կը թիւն ոչ մէկ բարոյական, ոչ մէկ հոգեկան առնչութիւն ունենալ մայրաքաղաքին հետ, և մինչդեռ իրենց սանձը երևութապէս կը գտնուի նախարարական ձեռքերու մէջ, իրենց ուղղութիւնն ու ընթացքը սակայն չի հպատակիր սահմանադրական քննթրոլի և կեդրոնական իշխանութեան դերը կը մնայ առկախ ու երերուն։

Ահա Պասրան՝ որ կը ներկայացնէ կատարեալ անիշխանութիւն. ահա Արաբիան՝ որ կը շարունակէ իր անապատային ապստամբութիւնը ընդհատաբար, բայց աննկուն կամքով. ահա Հայաստանը՝ որուն վրայէն ջղաձգութեան մը պէս, մէկ քանի ամիս անգամ մը կ'անցնի ջարդերու երկիւղալի ալիքը. ահա վերջապէս Մակեդոնիան՝ ուր յեղափոխական հրոսախումբերը կամեցողութիւն չեն ցոյց տար հրաժարելու իրենց արիւնոտ պայքարէն։

Ստոյգ և վճռական ախտանիշեր ամենքն ալ՝ որ ուրիշ բան չեն ապացուցաներ, այլ միայն այն որ՝ պետութեան ներքին կազմը ստիպողաբար պէտք ունի արմատական խոր բարեշրջութեան։

Այդ բարեշրջութիւնը, այս պահուս, ամենէն աւելի պայմանաւորուած է գործադիր իշխանութեան, դատարաններու և տնտեսական նոր օրէնքներու հետ։ Իսկ կեդրոնական իշխանութիւնը՝ իր մինչև այժմ բռնած անվճռական, թոյլ ու երկդիմի ընթացքովը ոչ միայն անաչառ խստութեան ակնկալուած նոր ոգին չի մտցուց դատարաններուն, ոստիկանութեան ու կառավարող պաշտօնէութեան մէջ, այլ ընդհակառակը իր այդ գաղջ ու ներքինի վերաբերումովը՝ ամրացուց զեղծ, հարստահարիչ ու բռնաւոր կարգերուն դիրքը, անոնց նախկին անպատասխանատու գործունէութեան վայրկեան մը խախտուած հաւատքը և ստեղծեց հմայաթափութեան, տարակոյսի ու անվստահութեան դառն հոգեբանութիւն մը ժողովրդական խաւերուն մէջ։

Սահմանադրութեան հրատարակութենէն ի վեր բովանդակ պետութեան, առանձնապէս հայկական գաւառներու մէջ չի նշանակուեցաւ ոչ մէկ կուսակալ և ոչ մէկ կառավարիչ՝ որ զերծ ըլլար քննադատական անցեալէ. իսկ դատական և ոստիկանական կազմը ամբողջովին մնաց նոյնը։ Աւելին կայ. յուլիսեան օրերուն ձերբակալուած և դատաստանի ենթարկուելու համար բանտարկուած յայտնի

չարագործներ և մեծահուչակ աւազակապետներ, ինչպէս Վանի, Պիթլիսի, Տիգրանակերտի և Խարբերդի վիլայէթներուն մէջ՝ հետզհետէ անպարտ արձակուեցան վարչական կարգադրութեամբ կամ սուլթանական իրատէով, օրինակ Խարբերդի մէջ։

Հայկական գաւառները՝ բնական բէժիմին կեդրոնական ծանրութեանը ենթակայ իբրև բացառիկ երկրամաս, բնական էր որ բացառիկ հոգածութեան և ուշադրութեան ալ առարկայ դառնային սահմանադրական կառավարութեան կողմէ. այսպէս կը պահանջէր տարբրական արդարութիւնը, այսպէս կը պահանջէր պետութեան շահը՝ որ ուրիշ բանէ չի բղխիր, այլ նոյն ինքն ժողովուրդին ազատութենէն, ազատ զարգացման պայմաններէն և գոհունակութենէն։ Եւ սակայն կեդրոնական իշխանութիւնը ոչ միայն չի դիմեց բացառիկ պայմաններու, ոչ միայն առանձին հոգածութիւն ցոյց չի տուաւ տնտեսապէս սպառած և քաղաքականապէս արդէն անտանելի կացութեան տակ գտնուող հայկական նահանգներուն, այլ մինչև անգամ իր հասարակ, բնական և ընդհանուր պարտաւորութիւններուն մէջ ևս եղաւ զանցառու, միակողմանի ու անբաւական։ Հետևաբար գանգատները մնացին նոյնը, դժգոհութեան բողոքները՝ յաճախաւոր ու պահանջները՝ ցաւագին։

Այն քննիչ Ցանձնախումբը՝ որ հինգ ամիսներէ ի վեր ճամբայ պիտի ելլէր դէպի Հայաստան, պաշտօն ունենալով դատական, ոստիկանական, քաղաքական և հողային գեղծումներու և անարդարութեանց քննութիւնը կատարել և տեղւոյն վրայ կատարած անաչառ ուսումնասիրութենէ մը ետք՝ իրաւակարգ հաստատել և ժողովուրդին բռնաբարուած իրաւունքները նոր վերադարձնել, ոչ միայն դեռ Պոլիսէն մեկնած չէ, ոչ միայն դեռ մեկնելու յոյս չի ներշնչեր, այլ իր շուրջը դարձած մէկէ աւելի խորհրդաւոր մեքենայութիւններովը՝ ինքնին դադրած է լուրջ նշանակութիւն մը ունենալէ։

Նախ իր կազմը՝ որուն մէջ առաջին օրէն իսկ կառավարութիւնը ուզեց կասկածելի տարրեր սպրդեցնել, չի ներկայացներ վստահելի երաշխաւորութիւն, քանի կը պարունակէ տակաւին քիւրդ Մստաֆա Զիհնի աւտապետը՝ որ վերին աստիճանի տխուր և վատահամբաւ անցեալ մը կը քաշէ իր ետևէն, կաշառակերի և կեղեքիչի անջնջելի արատով. երկրորդ՝ իր իրաւասութեան իբրև սահման գծուած գործնէութեան ծրագիրը իր էութեամբ ու օրինական առաձգականութեամբ՝ ոչ թէ նպատակ ունի տասնեակ ու աւելի տարիներու ընթացքին մէջ հայ երկրագործ աշխատաւորութեան կրած հողային զրկումներուն, կեղեքումներուն և այս կամ այն ձևի տակ կատարուած յափշտակութիւններուն արդար հատուցումն ընել, այլ ընդհակառակը նուիրագործել այդ յափշտակութիւնները և բռնատիրութիւնները, վերջնապէս գոցելով ասկէ ետք նոյն իսկ բողոքի ու դատական պահանջի ամեն դուռ զոհերուն առջև։

Դեռ այս բոլոր մաքիավելական օյինպազութիւններն ալ բաւական չ՚ըլլային Հիլմի փաշայի դժգոյն դահլիճին համար, վերջին անագան պահուն ահա նոյն Ցանձնախումբը կը կրէ բոլորովին նոր, բոլորովին անակնկալ այլակերպութիւն մը։ Քննիչ Ցանձնախումբը դադրելով հայկական գաւառներու անուանը նախասահմանուած ըլլալէ, կը դառնայ բովանդակ Անատոլուի բարեկարգութեան նուիրուող մարմին մը։ Իրաւասութեան այս ընդարձակումը վերջին պակն է ինքնին՝ խաչելութեան առաջնորդելու համար բարեկարգիչ մարմին մը, որ ամենէն առաջ պէտք ունի իր էութիւնը, իր կազմը և իր ծրագիրը բարեկարգելու։

***

Քրիստոնեաներու զինուորագրութեան հարցը նոյնպէս ամիսներէ ի վեր դրուած է կառավարութեան և թիւրք պետական անձնաւորութիւններու առջև՝ այրող հանգամանքով և կը մնայ նոյն հրատապ ու սպառողական վիճակին մէջ։ Զեռնհաս պաշտօնարանները չեն համարձակիր մօտենալ անոր և կը շարունակեն վարանումն ու ձրգձգումները, մինչդեռ գաւառներու քրիստոնեայ տարրերը, մասնաւորապէս հայերը՝ թախանձագին հեռագրական դիմումներ կը կատարեն պատրիարքարանի, Խորհրդարանի և ներքին գործերու նախարարութեան, բողոքելով տեղական իշխանութեանց դէմ, որոնք կը պահանջեն 1909 տարուան համար զինուորական տուրքի բաշխում կատարել և շարունակել հին դրութիւնը։

Բացայայտ է կառավարութեան և որ նոյնն է ըսել՝ Իթթիհատի կուսակցութեան ներքին համոզումը քրիստոնեայ տարրերու զինուորագրութեան նկատմամբ. այդ համոզումը բացասական է։ Թիւրք նեղմիտ և կոյր շովինիզմը կ՚ուզէ զինուորական գերակշռութիւն պահպանելով՝ մնալ երկրին մէջ միակ տիրապետող և գերակայ տարրը, չի ճանաչելով քրիստոնեայ միւս տարրերուն իրաւահաւասարութիւնը de facto, զանոնք նկատելով կասկածելի և վտանգաւոր ու այսպէս հարկադրելով զանոնք տևականապէս մնալ իշխող ժողովուրդին զինական ուժին և մարտական սպառնալիքին տակ։

Բանակային հոգեբանութեան երկրորդ փաստ։

Եւ այդ հոգեբանութիւնը սակայն, իրերու բռնադատութեամբ, դրուած է երկու երկաթէ անիներու մէջ. կամ բացէ ի բաց վճռական բայց եղերական յանդգնութեամբ մը ամեն ինչ հրապարակով յայտարարել և սահմանադրական հաւասարութիւնը մահուան դատապարտել, կամ բիւզանդական քաղաքականութեամբ մը միջին ելք մը գտնել՝ որ փրկէ երևոյթները, առանց մնասելու էութեան։ Այս մեկնակէտէն ահա՝ ստոյգ տեղեկութիւններ, որ կը հաստատեն թէ զինուորագրմանը օրինագիծը թէ պիտի ընդունի քրիստոնեաներու զինուորագրութիւն, թէ պիտի չ՚ընդունի. ուրիշ խօսքով՝ քրիստոնեայ տարրերը թէ պիտի շարունակեն մէկ կողմէն զինուորական տուրք տալ և թէ միւս կողմէն զինուոր։ Քան տարիքին հասած նոր սերունդը պիտի զինուորագրի, իսկ քան տարեկանէն վեր գտնուող բոլոր միւս քրիստոնեայ քաղաքացիները կանոնաւորաբար և ըստ առաջնոյն ենթակայ պիտի ըլլան զինուորական տուրքի։

Եւ ի՞նչ տարակոյս որ Հիլմի փաշայի դահլիճին խորհրդարանական մեծամասնութիւնը՝ անքննադատօրէն և պատրաստակամ պիտի փութայ քւէարկել այդ կարգի անհեթեթ ու անիրաւ օրինագիծ մը, քանի որ խորհրդարանական քննութիւններէն և վիճաբանութիւններէն առաջ, նոյն խորհրդարանական մեծամասնութեան ղեկավար անձնաւորութիւնները նախապէս ամեն հարց լուծած կըլլան արդէն, Բանկալտիի իրենց երկրորդ ժողովատեղին՝ Հիլմի փաշայի ապարանքին մէջ...

Այսպէս, իշխանութեան գլուխը գտնուող վարչութիւնը՝ իր ընդհանուր և ամենօրեայ հակասութիւններով կը լարէ իր դէմ ոչ միայն ընդդիմադիր կուսակցութիւններուն քննադատութիւնն ու դժգոհութիւնը, այլ և ներքին կացութիւնը իր բոլոր կնճռոտ ու բարդ խնդիրներովը ձգելով երեսի վրայ կամ աւելի թնճկռելով կը սատկացնէ երկրին բողոքի ձայները և կ՚արագացնէ իր անկման վտանգը։

Ֆէրիտ փաշայի կրկին պաշտօնի կոչուիլը և իբրև Իզմիրի կուսակալ նշանակումը՝ բաւականէն աւելի յատկանշական երևոյթ մըն է, որ իր նշանակութիւնն ունի թէ արտաքին և թէ ներքին քաղաքականութեան տեսակէտով։ Ֆէրիտ փաշան այն նախարարապետն է՝ որ սահմանադրութեան հրատարակութեամբ պաշտօնանկ եղաւ և որ իր պաշտօնավարութեան միջոցին հետևեցաւ գերմանասէր քաղաքականութեան, գերմաններու տալով Պաղտատի երկաթուղիին և բազմաթիւ ուրիշ մեծարժէք առանձնաշնորհումներ, ի վնաս պետութեան և անոր շահերուն։ Ցեղաշրջման առաջին օրերուն Ֆէրիտ փաշայի դէմ ևս սկսան ամբաստանութեանց շշուկներ, սակայն շուտով խեղդուեցան, մինչ հեռատես փաշան շտապով կը մեկնէր Եւրոպա, որպէս զի իր ներկայութիւնը աւժամապէս ծածկելով հասարակութեան աչքէն, պատեհու-

թիւն ունենար ժամանակ շահելու և իր անձը հեռու պահելու անմիջական յարձակումներէ։ Կասկած չի կայ թէ վերադարձաւ Եւրոպայէն գաղտնի հրաւէրի մը համաձայն, ապահով ըլլալով թէ յարմարագոյն ժամանակը հասած է ակնկալուածէն իսկ արագ, արժեցնելու դարձեալ իր կարևորութիւնն ու պետական մարդու ազդեցութիւնը։

Այժմ կը մեկնի դարձեալ առժամապէս Իզմիր, յուսալից թերևս վերակոչելու քիչ առենէն Պոլիս, փոխարինելու համար Հիլմի փաշան և անցնելու միշտ Իթթիհատեան դահլիճի մը գլուխը՝ իբրև նախարարապետ։

Ֆէրիտ փաշան պահեսի զօրավարն է Իթթիհատի թևին մէջ՝ ընդդէմ Քեամիլ փաշայի, որուն երկրորդ անգամ իշխանութեան կոչիլը պիտի ըլլար մահացու հարուած մը և ջախջախիչ պարտութիւն մը խորհրդարանական այժմեան մեծամասնութիւն կոչուող տարերային, լոյծ և անհաւասարակշիռ կուսակցութեան համար։

***

Ելլադզը մնա՞նկ իր ապդեցութեամբ, կը մնայ Իթթիհատի ափին մէջ մանկական խաղալիք մը և հասարակ գործիք մը միանգամայն, ի հաշիւ Ազգայ կուսակցութեան դէմ մղուած պայքարին, կամ աւելի ճիշտը՝ հաւասարակշռութիւնը պահպանող ծանրութիւնը՝ երկու պահաժառանգներուն, Ռէշատ Էֆէնտիի և Եուսուֆ Իզզէդինի միջև խուլ կերպով բայց կատաղօրէն առաջ տարուած մրցակցութեան։ Ինչպէս յայտնի է, գահին օրինական ժառանգութիւնը կը վերաբերի Ռէշատի, որուն կողմնակից են Ազգայականները, մինչ Իթթիհատեանները կը ձգտին բոլոր ուժով՝ Մեծ Մարդասպանին յաջորդը տեսնել անպատճառ եղեռնամահ Ագիզի տղան՝ Եուսուֆ Իզզէդինը։ Եւ որպէս զի կարելի ըլլայ ժամանակ վաստկիլ և իր մտադրութեան մէջ յաջողիլ, Իթթիհատը կը մնայ միշտ կողմնակից կարմիր սուլթանի իշխանութեան։ Սուլթան Համիդ երախտագէտ բնականաբար այս շնորհքէն ու բարեացակամութենէն, ինքալ իր կողմէն կը ջանայ ըլլալ աւելի քան հաճոյակատար ու պատրաստակամ դէպի իր վեհանձն պաշտպանները... Ամեն սպանութեան, ամեն ոճիրի ու եղեռնի ընդունակ այդ իսլամ Կալլիկուլային համար այս կարգի նուաստութիւնները չէին որ պիտի կրնային արժանապատուութեան և մեծանձնութեան զգացումներ արթնցնել իր մէջ. կարևորը ապրիլն էր և բաւական է որ կապրի ինք և կարող է յոյս ունենալ՝ աւելի հաստատուն թերևս, քան բռնակալութեան ահասարսափ օրերուն, միշտ իր վերջին շունչը փչելու արքայական անկողնի վրայ և խաղաղութեան մէջ։

Այս երախտիքն ու պաշտպանութիւնն էին ահա որ արիութիւն ներշնչեցին իրեն՝ անձամբ բանալու Խորհրդարանի առաջին նիստը, համամիտ գտնուելու սահմանադրութեան վերաքննութեանը և ստորագրելու խորհրդարանական առաջին նստաշրջանին երկու ամսով աւելի երկարաձգման իրատէն։

Իթթիհատ ու սուլթան Համիդ նոյնացած են այժմ և միախառնուած, բայց տակաւին յայտնի չէ թէ տիրապետութեան ժանիքներով զինուած երկու երախներէն որը բարոյապէս պիտի կլանէ միւսը։

ՓՈՔՐ-ՀԱՅՔԻ ՀԱՅԵՐԸ

I

Ինչպէս „Հայ“ անունին հետ կապ ունեցող ամեն գաւառի նոյնպէս և Փոքր-Հայքի շրջանին մէջ կարծէք ճակատագրական է դարձեր տառապանքին տիրապետութիւնը. բարոյական և ֆիզիքական, քաղաքական թէ տնտեսական, բազմատեսակ, բազմերանգ, ահաւոր քայքայումը, սև-պաղ օձի պէս, տարածուեր է այս կողմերուալ հայ ազգաբնակչութեան վրայ...

Առաջին անգամ որ ճանապարհորդը ոտք կը կոխէ Սև-Ծովի ափին, Սամսոն, արդէն կըզգայ իր շուրջը տեսակ մը մթնոլորտ, տեսակ մը կեանք, տեսակ մը նոր վիճակ ու կ'ունենայ տպաւորութիւն մը՝ „որ անկումի“ կը նմանի ամեն բանէ աւելի։ Եւ այդ նոր „մթնոլորտն“ ու նոր „կեանքը“, և ստացուած այդ անկումի տպաւորութիւնը կը դառնան հետզհետէ աւելի ճնշող, աւելի հեղձուցիչ և աւելի տանջալի, քանի ճանապարհորդը կը շարունակէ իր ճամբան դէպի հարաւ։

Ամեն տեղ բան մը պակաս է. հոս՝ հոգին, հոն՝ մարմինը, ասդին՝ միտքը, անդին՝ բարոյականը, անդին՝ առողջութիւնը և ամենուրեք պակաս է մանաւանդ հա՞ցը...

Փողոցին մէջ երկու տղաք, ձեռք ձեռքի բռնած, կը քալեն ու կը խօսակցին.

— Եթէ այս իրիկուն ալ հաց չգտանենք նորէն անօթի պիտի պառկինք, ի՞նչ ընենք,—կը բացատրէ մեծը փոքրիկին։ Եւ այդքանը կը բաւէ սակայն որ այնտեղէն անցնողը հասկնայ թէ ինչ նիւթի շուրջը կը դառնայ Հայաստանի երեխաներուն խօսակցութիւնները։

Ստուգած եղելութիւն է որ դպրոց գացող տղաքներու մեծամասնութիւնը ամբողջ օրուան համար իբրև կերակուր կը տանին իրենց հետ կամ երկու հատ ստեպղին կամ երկու հատ գետնախնձոր։ Հաց չկա՛յ Ու հացին պէս հագուստ ալ չկայ, կօշի՛կ ալ չկայ, գլխարկ ալ չկայ։

Առաջնորդարաններու գրասեղաններուն վրայ տասնեակներով կուգան կը դիզուին, ամեն օր, անօթութեան հառաչանքները, հացագինի խնդրանքները, թշուառութեան նկարագրութիւններուն էն իրապաշտօրէն սրտաճմլիկները։ „Ութ օրէ ի վեր երկու զաւակներով անօթի ենք“ կը գրէ մէկը, միւսը կը պատմէ թէ ինչպէս „ա՛լ ճարերնին հատած է, և եթէ այդ օրն ալ ուտելիք չստանան, սովամահ պիտի ըլլան“, և շարքը կ'երկարի, կը լայնայ, հետզհետէ կ'ահաւորնայ ու կը պատէ ամբողջ ազգաբնակչութիւնը։ Եւ տարբեր տարբեր բառերով բացատրուած, տարբեր եղանակներով երգուած, միշտ նոյն ցաւատանջ պատուհասային երգը՝—Անօթութի՛ւն *)։

Ու այս ցաւը, այս սովի իրականութիւնը մանաւանդ ճանապարհորդ-դիտողի աչքին կ'երևան առեղծուածային հակասութեան մը, եղերական հեգնանքի մը նման մեր բնաշխարհի հողային անհամար հարստութիւններուն դէմ։ Սեբաստիան, իր՝ պարարտ ու բարեբերութիւնովը անուանի դաշտերով երբեմն „Ցորենի Ընտեմարան“ կոչուած ու տարիներով ինքը հացահատիկ հայթայթած ամբողջ շրջանի մը բնակչութեան, երբ այսօր այսպէս կը վերածուի լայնատարած „աղքատանոցի“ մը, զարհուրա՛նք է պարզապէս։

Եւ ալ անհրաժեշտ կը դառնայ հարցումը մտածողի մտքին.—Ի՞նչ է պատճառը այս տարապայման աղքատութեան։ Երբ հող մը կայ, որ բարեբեր է ու արտադրելու ընդունակ և երբ անոր քով բազմութիւն մը կայ մարդերու, որոնք առոյգ են և աշխատելու տրամադիր, ի՞նչն է պատճառը, որուն համար և՛ այդ հողը

*) Ցորենին չափը (12 օխա) ասկէ 4—5 տարի առաջ 4 դրուշ, յետոյ անցեալ տարի 7 դրուշ, իսկ հիմա եղած է արդէն 20—21 դրշ.։

կը մնայ այսպէս խոպան ու անպտուղ, և՛ այդ մարդիկ կը մնան անգործ և հետևաբար՝ անօթի։

Ա՛խ, պատճառը՝ այստեղ ալ՝ այն միևնոյն „պատճառն“ է, որուն մասին շատ է գրուեր արդէն. այն պատճառն է որ այնքան տարիներէ ի վեր ահագին հրէշի մը պէս կերեր է ուղղակի ամբողջ Տաճկաստանի ժողովրդին մարմինն ու միտքը, և թէև այսօր մասամբ արդէն անհետանալու վրայ, բայց այնուամենայնիւ իր ձգած հետքերովը, գոնէ, տակաւին կենդանի՝ կը շարունակէ լացնել ու մեռցնել հայաստանցի այրն ալ, կինն ալ, երեխան ալ... Անիծա՛ծ բռնապետութիւն։

Աղքատութիւնը իր զազրելի գլուխը զօրացուց այս շրջանին մէջ ալ ամենէն աւելի 1895—96-ի արիւնի օրերէն ասդին. և անկէ ետքը, տիրող զզուելի կառավարութիւնը փոխանակ ջանալ գոնէ որոշ չափով դարմանելու իր կազմակերպուած ոճրագործութիւնները, արդիւնք եղող տանջանքը, ընդհակառակը սուրէն ու խանջարէն ետք կոտորածի միւս գործիքը ձեռք առաւ,—Սովը, իբրև նեազ աղմկալի և աւելի արագ հնձող մանգաղ։ Եւ այնուհետև տարէ տարի, տարապայման տուրքերու տակ ճնշող ժողովուրդը, ճիւաղական հարկահաւաքներուն ճանկերուն մէջ նետեց ոչ միայն իր գութանն ու լուծքը, այլ նոյնիսկ իր սերմնացուն։ Արդիւնքը այն՝ որ հետզհետէ սակաւացաւ վարուցանքը, հետզհետէ քիչցաւ աշխատանքը և բնականօրէն պակսեցաւ նաև արտադրութիւնը. վերջին տարին ալ այլևս գրեթէ ոչինչ չի ցանուիր, հետևաբար նաև գրեթէ ոչինչ չի հնձուիր, ու հիմա այսպէս բարեբեր լայնատարած արտեր, աշխատիլ ցանկացող գիւղացիութիւն մը և պարապ շտեմարաններ դէմ առ դէմ կանգնած անօթութիւնը կը մահերգեն միասին։

Այս համատարած ցաւին հանդէպ միայն հայ և թիւրք՝ մատի վրայ համրուող՝ քանի մը մեծահարուստներ՝ տաքտաք վառարաններուն դիմաց իրենց ձեռքերը կը շփեն, գոհ, կուշտ և ուրախ՝ իրենց և միայն իրենց շտեմարաններուն լեցուն ըլլալու գիտակցութիւնովը։ Հապա ինչպէ՞ս կ'ըլլայ, որ մէկ-երկու հայ և թիւրք հարուստներ, քանի մը տարուան ընթացքին կը յաջողին այսպէս կրկնապատկել, եռապատկել իրենց գանձը, եթէ ոչ.—1) Կալի ժամանակ, երբ գիւղացիին պահանջատէրերը դիզուած են գլխին վրայ սպառնական, գարին և ցորենը օրուան շուկային գինէն շատ պակասի անկէ առնելով, 2) Գիւղին տասանորդը գնելով և տասանորդի փոխարէն գիւղացիին ամբողջ բերքը ձեռքէն խլելով ու վերջապէս 3) Այս երկու եղանակներով ձեռք ձգուած աժանագին գարին ու ցորենը, ձմեռը դարձեալ նոյն գիւղացիներուն ծախելով, բայց, օրինակի համար 18—20 ղրշ.-նոց ապրանքը 30-35 ղրշ. գինով և վճարելի ամառը, ինչ որ 100-էն 100 տոկոս կ'ընէ *)։

Եւ ասանկով է որ մինչ մէկ կողմէն ամբողջ գիւղական կեանքը կը քայքայուի, ամբողջ գիւղական համայնքներ կ'աղքատանան, կ'ոչնչանան, մուրացիկներ կը դառնան և շէն ըլլալու կոչուած շարան-շարան տնակներուն երդիքին մուխը կը մարի, ասդին անգութ, վաշխառու և դրամապաշտ մեծատունը աւելի կը յղփանայ, աւելի կ'ուրախանայ, որովհետև այդ սովին է որ կը պարտի մանաւանդ իր այդ տարուան շահը...

Եւ եթէ մենք այսպէս ցաւին պատճառներն ուսումնասիրելով ալ չկարողանանք ցոյց տալ պատշաճ դարման, ալ այն միւս բոլոր բարեգործութիւնները, հանգանակութիւններն ու նուիրատուութիւնները առանց ոևէ հիմնական արդիւնքի կը մնան սոսկ պալիատիւներ, ինքխաբէութիւններ։

Դարմանը՝ ահաւասիկ մեր կարծիքով։ Պէտք է ամեն բանէ առաջ ազատել գիւղը վաշխառու դրամատէրերուն ձեռքէն. անխուսափելիօրէն առնելիք առաջին քայլը այն պէտք է ըլլայ, որ գիւղը երբ պէտք ունենայ դրամի, կարողանայ զայն ստանալ պետական աժանատոկոս փոխատուութեամբ. անկէ ետքը միայն կուգայ տուրքերու խստութեանց դէմ պայքարը, որովհետև էն ահաւոր աղէտը այդ գիւղական դրամատէրներու տզրուկական գոյութիւնն է։ Ոևէ գիւղացի ընտանիք անգամ մը որ բռնուած է „աղային“ հետ „առնելիք-տալիքի“ ճիւաղական ցանցին մէջ, ա՛լ ազատում չկայ, ա՛լ սերունդէ սերունդ անոր մէջ պիտի մնայ ան, տարիներով, և, շարունակ պիտի ճզմուի, ճմլուի, անշնչանայ և վերջապէս պիտի ոչնչանայ տոկոսներու անհասկանալի հաշուի մը եղերական անկրընաժին մէջ փշրուելով։

ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԻԳԵՐ

Սեբաստիոյ շրջանին մէջ 5—6000 չէրէզ ստրուկներ (էօլէ) հեռեւեալ խնդրագրով դիմած են Սեբաստիոյ Հ. Յ Դաշնակցական մարմնին, խնդրելով որ ներկայ Սահմանադրութեան օրով, իրենց ազատագրութեան հարար հարկ եղած դիմումները ընէ։ Այդ խնդրագրին բնագիրը կը պահուի Սեբաստիոյ Դաշն. Կոմիտէին մօտ եւ որուն մէկ պատճէնը ուղարկուած է Օսմ. Խորհրդարանին։ Ահա այդ խնդրագրին պատճէնը զոր իբր փաստաթուղթ կը հրատարակենք։

Ամեն մարդ ազատ է և իբրև գերի ծախուիլը դրական օրէնքներու հակառակ ու կայսերական ֆէրմանով ալ բացարձակապէս արգիլուած է, սակայն բռնապետական շրջանին մէջ Սեբաստիոյ կուսակալութեան յարակից Ազիզիէի և ուրիշ գաւառակներու մէջ, չէրքէզ պէյերուն ու ազդեցիկ անձերու միջև գերեվաճառութիւնը տեղի կ'ունենայ մինչև ցարդ։

Ի ներքոյ ստորագրեալքս, ասաւածային հրամանաւ ազատ ապրելու համար ստեղծուած թէև, մեր ընտանիքներով մէկտեղ կը ծախուինք իբրև քէօլ։ Երիկ մարդիկ, իրենց տիրոջ հաշուոյն, գիշեր ցերեկ չարաչար կ'աշխատին, զուրկ ընտանիք ու գերդաստան կազմելու իրաւունքէն։ Կնիկ մարդիկ՝ խոշոր գումարներով կը ծախուին ասոր անոր։

Սա պարագան՝ ընդհանուր տարրերը ուրախացնող եղբայրութեան, հաւասարութեան, արդարութեան ու ազատութեան սկզբունքներու բացարձակապէս հակառակ է. մեր իրաւունքներէն զրկուածք ենք։

Հետևաբար՝ ազատ մեր նմաններու պէս, ազատ ապրելու ընտանիք ու գերդաստան կազմելու փափաքն ունինք։ Մեր այդ փափաքներուն իրագործման մասին, կը դիմենք Դաշնակցութեան Սեբաստիոյ կոմիտէին, որպէս զի դիմէ առ որ անկ է մեր փրկութիւնը ձեռք

---

*) Իսկ ցաս սովորական եւ ընդունուած միջոց մրն է ամեռը չափ մը ցորեն տալ եւ կալի ժամանակ երկու չափ ստանալ։

բերելու համար, ու այս մասին մեր բացարձակ ձայնն ու իրաւանց պաշտպանութիւնը կուտանք անոր սոյն խնդրագրով, ի 18 շուպաթ 324 տարւոյ։

Մաւոով կնքուած 163 էօլէնեռու ստորագրութիւններ

—

Ըստ վերոգրելոյն յիշուածներս կարդալ գրել չգիտնալնուս և հովուութենէ զատ ուրիշ գործի մէջ չգտնուելնուս պատճառաւ մեր կողմանէ ճըրճըր գիւղէն Մէրզէ-Խալիտ պէյ Էօրէն գիւղէն Մահմուտ, Ալթը Քէսէկ գիւղէն Իսա անուն անձինքը փոխանորդ կարգած ենք և ի հաստատութիւն մատի նշաններով կնքած ենք, ի 1 մարտ 325 տարւոյ։

ԿՆԻՔՆԵՐ
Իսա Ալի Մահմուտ Մէրզէ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՏԱԳՆԱՊԸ
ՍՕՑԻԱԼԻՍՏ-ՅԵՂ. (Ս.-Բ.) ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ազեվի հոյակապ դաւաճանութեան փաստը խոր ու ցաւոտ ճգնաժամ է յարուցել ռուսական երբեմն հզօր ու ազդեցիկ այդ կուսակցութեան շարքերուն։ Ամբողջ արտասահմանեան ռուս յեղափոխական մամուլը շարունակ քննում ու քքքրում է այդ սարսափելի անակնկալը։ Քննադատութեան է ենթարկուում տերրորի ու դաւագրութեան ցայժմ կիրառուած մեթոդը, կուսակցութեան կենտրոնացման սիստէմը և այլն։

Քննադատութիւնը սկսած է Նոյնիսկ Ներսում։ Իրենք ս.-ր.-ները ևս (սոց.-յեղափոխականները) չեն թագցնում այն խելակորոյս ու տագնապոտ կացութիւնը, որ առաջ բերաւ այդ անօրինակ հարուածը։ Նրանք չեն թագցնում, որ կուսակցութիւնը մի կատարեալ հոգեվարքի մէջ է, որ վտանգուած է ոչ միայն նրա հմայքը, այլ գոյութիւնն իսկ։ Չէ՞ որ Ազեվի մատնութեամբ բոլոր թղթերը բացուած են արդէն և կառավարութեանը յայտնի են կազմակերպութեան բոլոր ներքին հանգամանքները, նրա ծաւալը, ուժն ու ազդեցութիւնը։ Դա մի յանկարծակի ու շշմեցուցիչ անդամալուծումն է, որ գալիս է հարուածելու դիւցազնական „Նարոդնայա Վոլիայի“ նոյնքան դիւցազնական յաջորդին, Ժելիաբովների, Պերովսկայաների ու Սազոնովների գաղափարակիցներին։ Երբէք մի մեծ յեղափոխական կազմակերպութիւն չի ապրել այսքան արտասովոր, կսկծալի օրեր...

Եւ սակայն, ս.-ր.-ները չեն մատնում լքման, յուսահատութեան։ Նրանք դեռ յոյս ունին առնական ճիգերով վերակազմելու իրենց ճարակուած շարքերը, վերստանալու կորսուած հմայքը։

Այսօր սկսած է փրկարար աշխատանքը։ Արտասահմանեան հրատարակութիւնների մէջ բաց ու անկեղծօրէն ծեծուում են բոլոր կենսական կնճիռները։ Ծեծուում է նախ և առաջ ամենամեծ հարցը — կուսակցութեան վերանորոգումը։ Հին կենտրոնը պէտք է հեռանայ,—այսպէս է ձևակերպուում առաջագոյն պահանջներից մէկը։ Որքան էլ նա — այդ կենտրոնը — կազմուած լինի շիտակ ու գաղափարական անձերից՝ պէտք է, այնուամենայնիւ, հրաժարական տայ, քանի որ Ազեվեան դաւաճանութեան շնորհիւ, արդէն վարկաբեկուած է ժողովրդի ու համակրող ինտելիգենցիայի աչքում։ Ժողովրդային զանգուածները անսահման հաւատ ունէին կենտրոնական մարմնի վրայ։ „Կուսակցութիւն“ ասելով, շատերը ուղղակի հասկանում էին „կենտրոնը“, բայց ահա չարաշուք, ըմբոստացուցիչ „գիւտը“... Տասներկու տարի շարունակ դաւաճանը հաստատուած է եղել հէնց կենտրոնում. տասներկու տարի շարունակ նա խրախուսել ու գուրգուրել է հէնց կենտրոնից։ Ոչ ոք չի կարող կասկածի տակ դնել կենտրոնի մնացած անդամներին. ով որ ճանաչում է նրանց, ով որ գիտէ թէ հերոսութեան քանի դափնիներ, մարտիրոսութեան քանի փշոտ պսակներ են կրում այդ հոյակապ դէմքերը իրենց ճակատին—միայն պատկառոտ երկիւղածութեամբ կարող է արտասանել նրանց անունները։ Խնդիրը դրա մէջ չէ։ Այսպէս թէ այնպէս, խախտել է վարկը, դաւաճանի անարգ ու գարշելի ձեռքով արատաւորել է այն հաստատութիւնը, որի սիւները ջոկուած են Ռուսաստանի մտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչներից — փորձուած ու ձեռնհաս, մաքուր, յեղափոխական փառահեղ ու մրրկոտ անցեալի տէր...

Ամեն ինչ խախտել, տրորել ու աղտոտել է, պէտք է ամեն ինչ տակնուվրայ անել—այսպէս է հընչում անաչառ դատախազի ձայնը, նոյնիսկ ս.-ր.-ական բանակից։

Ազեվի դաւաճանութիւնը միակ պատճառը չէ այդ եղակի ճգնաժամի։ Վերջինը աւելի խոր է. նա կայ արդէն՝ դեռ մատնութիւնից առաջ։ Պատճառները բազմաթիւ են։ Արմատը այդ բազմապիսի պատճառների, նրանց բոլորի խարիսխը յայտնուում է, անշուշտ, տիրապետող ըէակցիան, „երկգլխեան արծուի արիւնոտ նախճիրը“, և ժողովրդի մասնակի լքումն ու վհատութիւնը։ Կազմակերպութեան մէջ արդէն 1905 թւի ձախորդութիւններից ի վեր կատարուում էր ներքին քայքայման գործողութիւն, թուլանում էին հետզհետէ բարոյական ու կազմակերպական կապերը։ Միևնոյն ժամանակ աստիճանաբար խզուում էր կապը, ներդաշնակութիւնը կենտրոնի ու ամբողջ կուսակցութեան միջև, կենտրոնը կտրուում էր կեանքից, գործնական աշխատանքներից, նրա ղեկավարութիւնը դառնում էր օրէցօր ֆիկտիվ ու ամուլ. նա ինքը յաճախ տարուում էր երկրորդական մտահոգութիւններով, միւս, ս.-դ.-ական կուսակցութեան պէս կլանուում էր յաճախ վերացական փիլիսոփայական վէճերով։ Այս առթիւ լսուում է դժգոհութեան ձայնը դարձեալ ներսից, ս.-ր.-ների շարքերից։ Այդ ձայնը վկայում է և մի այլ ծանրակշիռ իրողութիւն. այն՝ որ ս.-ր.-ական կուսակցութեանը յարող տարրերը մեծ մասամբ զուրկ էին և այժմ էլ զուրկ են ծրագրային կուսակցական կերպարանքից, մեծ մասամբ անմշակ, „տարերային“ հետևողներ, որոնց ղեկավարում էին այս կամ այն պատահական հանգամանքները։

Ազեվի ահաւոր դաւթակղութիւնը պայթեց, իբրև վերջին հարուած, որ և նետեց կուսակցութիւնը ներկայ ծանր տագնապի մէջ։ Ի՞նչպէս ելնել... խօսում են

բնականաբար ընդհանուր ժողովի մասին։ Բայց նրա գումարումն էլ ոստիկանական ներկայ պայմաններում ու կուսակցական ուժերի անկայուն, ցաք ու ցրիւ կացութեան մէջ՝ դիւրին բան չէ։ Ռուսի ուզում են բաւականանալ կուսակցութեան Խորհուրդը միայն գումարելով։

Այդ Խորհուրդը կը վերաքննէ յեղափոխական մարմնի ամբողջ անցեալը, հիմնականապէս կը պարզէ և Ազեվի գործը, նրա գաւաճանութեան բոլոր պատճառներն ու հետևանքները. քննութեան կ'ենթարկուի, անտարակոյս, նաև կազմակերպութեան ձևը. թերևս երկար տարիների տխուր փորձը և դժգոհութեան ու բողոքի ներկայ ձայները թելադրեն վերակազմուող ս.-ր.-ական կուսակցութեանը՝ հրաժարուել կենտրօնացման սիստէմից և փոքր ինչ աւելի նախաձեռնութիւն ու անկախութիւն տալ տեղական մարմիններին, մասնաճիւղերին...

ՄԻ ՆՈՐ ՄՈՒԿԴԵՆ

Ռուսական դիւանագիտութեան նոր ու խայտառակ պարտութիւնը իրաւամբ համեմատում են Մուկդենի ու Ցուսիմայի հետ։ Վերջին 6—7 տարուայ ընթացքում ապտակ ապտակի ետևից մարսում է ցարի կառավարութիւնը, որ երբեմն հզօր ու անպարտաւան՝ յաւակնում էր վարել միջազգային յարաբերութիւնները, դառնալ աշխարհի իրաւարարը։ Եապօնական ռումբերով խորտակուած՝ ռուս բռնապետութիւնը վերջերս նորէն „աքլորացաւ“, խրոխտ հովեր առաւ, ուզեց վերականգնել վաղեմի դիրքը. և դարձեալ ընկաւ... աւելի ևս անպատիւ անկումով։

Ահա արդէն ութ ամսից ի վեր խաղացւում է մի ուշագրաւ դրամա մերձաւոր արևելքում. մի կատաղի մենամարտ երկու անհաշտ հակառակորդների միջև. մի կողմից գերմանականութիւնն է, ի դէմս Աւստրիայի ու Հօհենցօլլերնեան պետութեան, միւս կողմից՝ սլաւոնականութիւնը՝ ի դէմս Ռուսաստանի։ Կռիւը մղւում է Բօսնիայի ու Հերցեգովինայի միացման շուրջը։ Ինչպէս յայտնի է փոքրիկ Սերբիան, խոցւած տեսնելով այդ միացմամբ իր ազգային ու պետական շահերը, ուժգին բողոքեց աւստրիական հարուածի դէմ։ Անգլիան ու Ֆրանսիան ևս բողոքեցին այդ միացման դէմ, որ խախտում էր Բերլինի դաշնագրով ընդունուած յանձնառութիւնները։ Գերմանիան, բնականաբար սկզբից ի վեր պաշտպան կանգնեց Աւստրիային և մինիստր Էրենթալ՝ հակառակ Անգլիայի ու Ֆրանսիայի պահանջներին՝ նոր միջազգային խորհրդաժողով գումարելու, միշտ աւելի և աւելի խրախուսւած Գերմանիայից, համարձակ առաջ տարաւ իր ծրագիրը, արհամարհեց Սերբիայի իրաւացի առաջարկները։

Ամենից ուշադրաւն էր Ռուսաստանի դիրքը։ Նա՝ արևելեան սլաւոնների աւանդական հովանաւորը... ի՞նչ դիրք պիտի բռնէր նա պանգերմանիզմի այդ սրարշաւ ու յաղթական ընթացքի հանդէպ... „Աւանդութիւնը“, „պատիւը“ և „շահը“ պահանջում էին հրամայականօրէն դէմ գնալ այդ հոսանքին և ցարիզմը, գլուխ ունենալով Իզվոլսկի անուն դիւանագիտական միջակութիւնը, ոտքով ձեռքով նետւեց մի վտանգաւոր արկածի մէջ... Նա դարձեալ մոռացաւ, որ իր առջև չէր կանգնած Թիւրքիայի պէս թոյլ հակառակորդ։

Իզվոլսկի գլուխ կանգնեց հակաաւստրիական բողոքի և երկար ամիսների ընթացքում գրգռեց ու քաջալերեց Սերբիային... Վերջինս, անշուշտ, թևաւորուած ռուսական „մեծ հովանաւորի“, սպիտակ Ցարի խոստումներով, բռնեց անհաշտ, երբեմն նոյնիսկ գրգռիչ ընթացք Աւստրօ-Ունգարիայի դէմ. շարունակ սպառնաց, շարժման մէջ դրեց իր զօրքը, պատերազմական պատրաստութիւններ տեսաւ։

Վախճա՞նը... Ամենաամօթալի ֆիասկո։ Աւստրիան, միշտ քաջալերուած Վիլհելմ կայսրից, ոչնչի տեղ դրաւ ցարական ու սերբիական յոխորտանքները և շեշտեց միշտ, որ Բօսնիայի ու Հերցեգովինայի միացումը արդէն „կատարուած իրողութիւն“ է, որ Եւրոպան պիտի ընդունէ այդ, նախ քան Խորհրդաժողով գումարելը։ Սաեղծուեց մի անել դրութիւն ռուսական դիւանագիտութեան համար։ Ի՞նչ անել... Պատերազմը սպառնում էր նորէն ժայթքեցնել „ներքին հրաբուխը“... Եւ Իզվոլսկին յանկարծ փոխեց ֆրօնտը, գերմանական ճնշման տակ յայտարարեց պաշտօնապէս, որ ընդունում է Բօսնիայի ու Հերցեգովինայի միացման փաստը... Գերմանիայի պահանջին, համարեա ուլտիմատումին համակերպելով՝ Ռուսաստանը հանդիսաւորապէս լքեց Սերբիային, ամիսներ շարունակ նրան գրգռելուց ու խրախուսելուց յետոյ։ Անգլիան ու Ֆրանսիան մենակ մնացին սլաւոնականութեան պաշտպանի դերում...

Այդտեղ է մեծ, ամօթալի գայթակղութիւնը։ Պանգերմանիզմը տարաւ յաղթանակը։ Ցարի կառավարութիւնը մի նոր Մուկդեն ունեցաւ, թէև անարիւն, բայց աւելի ծանր ու շշմեցուցիչ... Ամբողջ համաշխարհային մամուլը այսօր ապշանքով արձանագրում է այդ պարտութիւնը։ „Նօվոյէ Վրեմիան“ խօսք չի գտնում՝ „ազգային“ այդ ծանր անպատուութիւնը որակելու համար։ Հեռագիրը ծանուցանում է արդէն մինիստր Իզվոլսկու հրաժարականը... Ի՞նչ ասել կուզէ — Սերբիան կատաղած է. նա այժմ զգում է թէ ինչ արժէք ունի „մեծ հովանաւորի“ խրախուսանքը։ Սերբիային մնում է համակերպել։ Պատերազմի վտանգը վերացած է... Մակայն ցարիզմի այդ նոր անկումը հող կը պատրաստէ գպլցահաւոր ընդհարումների համար։ Նոր „կապիտիւլասիօնը“ ցոյց է տալիս, թէ որքան յիրաւի, խարխլած է „հիւսիսի կօլօսը“ իր գոյութեան հիմքերից իսկ։ Բռնապետական կամարիլլայի առաջնորդութեամբ՝ Ռուսաստանը հետզհետէ խաւարում է մեծ ուժերի համաստեղութիւնից, նա արդէն կորցրել է „մեծ պետութիւն“ կոչելու իրաւունքը...

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱԼԻՔՆԵՐԸ

Թէպրիզի հիանալի և յամառ դիմադրութիւնը յեղափոխութեան հմայքը բարձրացուց պարսիկ ժողովրդի աչքին։ Անոր տրտմոյն երևակայութեան մէջ յեղափոխութեան հերոսները հին հէքիաթներու երազանքները կ'արթնցնեն և իր ցաւոտ տառապանքին մեծութեան

առջև, այդ ժողովուրդը որ տգիտութեան ու ամուլ մոլեռանդութեան մը մէջ կ'ոսնէր ու կ'անէանար, կըսկսի ըմբռնել մեծութիւնը ազատամարտ գաղափարին՝ որ մարդկային թշուառութիւնը ամոքելու կոչումը ունի։ Ազատութիւնը կսկսի պիտնալ պարսիկներուն։

Մէճլիսի գլխաւորութեամբ, զոր Մէհմէդ Ալի Շահ օձամտութիւնը ունեցաւ իրագործելու, Պարսկաստանի խաւար և չար ուժերը սիրտ առած վերսկսած էին ծծել հէք ժողովրդին արիւնը։ Մեռելային լռութիւնը և սարսափը, „լութի անապատին" արհաւրութեան պէս, դարձեալ ծանրացաւ երկրին վրայ։

Թէպրիզը որ տուաւ էն կրակոտ և խիզախ „էնճումէնները" և „միլլիները" — ազգայնականները, չուշացաւ յեղափոխական „ճիհատ" յայտարարել երդմնադրուած և եղեռնագործ Շահին դէմ։ „Վէլիահդերու" մայրաքաղաքը, յեղափոխութեան դրօշը բարձրացնելով, հպարտ և վճռական կոչ մըն էր որ կ'ուղղէր Իրանին։ Իրանը պէտք էր մեռնիլ կամ ապրիլ։

Պարսկաստանի ներկայ շարժման մէջ հիւսիսային մասը առաջապահը եղաւ, յուզումը հիւսիսային որոշ լայնութեան մը վրայ գրեթէ մնայուն ողբերգութիւն մը դարձած էր։ Հարաւը դեռ անշարժ էր։ Յեղափոխական ցրիւ ուժերը չէին կրնար, հաղորդակցութիւններու անպատեհութեան պատճառով, գործնէութեան միութիւն մը կազմել և ժողովրդին յոյլ հոգեբանութիւնը յանդուգն ժէստերու ու սպացքներու անընդունակ էր և անզօր։ Յեղափոխականներու կրկնակի յաղթութիւններու արձագանքները քիչ շատ դարբնեցին թէ ժողովրդին հոգեբանութիւնը և կամէութիւնը և թէ շարժեցին շատերուն մէջ ազատութեան ախոյեան հանդիսանալու գրգիռը։

Հարաւը արձագանք տուաւ վերջապէս։

Յունուարի սկիզբը Սպահանը յեղափոխութեան դրօշը պարզեց։ Պախտիարիներու ցեղապետը Սամսան խան, օգնութեան փութալով ազգայնականներուն, վռնտեցին նահանգապետը և սահմանադրական վարչութիւն հաստատեցին։ Սպահանի էնճումէնները դիմելով օտար դեսպաններուն՝ պահանջեցին Շահէն որ սահմանադրութիւնը վերահաստատէ։

Ուրեմն Թէպրիզը և Սպահանը, երկու ամենակարևոր նահանգները այժմ յեղափոխականներուն ձեռքն են. Շահը և իր խուլիգան խորհրդականները սկսած են անդոհիլ։ Յեղափոխութիւնը կ'ալեկոծի և սպառնալից կը դառնայ, Մէհմէտ Ալի Շահը չէ որ իր որդնակեր նաւը պիտի կրնայ թիավարել այդ գոռ ու փրփրացող ալիքներուն վրայէն։

Եթէ հիւսիսը ոչ-զուտ իրանական արիւն կը կրէ, Սպահան և հարաւը իրանական տարրը կը ներկայացնէ, որ հպարտ է իր անցեալով և որ երբէք չմիտեց հաշտիլ քաճար տարարիւն և անարի ցեղին խուժ և պիտակ հարստութեան հետ։

Քաճար վեհապետները, դիւային նենգամտութիւնով մը միշտ հետամուտ եղած են նսեմացնել հարաւի յաւակնութիւնը, անհետ ընելով հին յիշատակարանները, որ Իրանի փառապանծ անցեալը կրնային յիշեցնել։

Դառնալով Շահսէֆեան հարստութեան մայրաքաղաքը Տիզին դարու մէջ, Սպահան Արևելքի համաշխարհային վաճառականութեան կեդրոնը դարձաւ։ Նոր Ջուղայի հայ գաղութը և Հնդկաստանի „պանիան"ները մեծ զարկ տուին կայսրութեան առևտրական գործունէութեան։ Պարսիկները հպարտօրէն իրենց քաղաքը կ'անուանէին „Նըսֆի ճիհան" և իրենց առևտրական հրապարակը „Մէյտանը Նախշը ճիհան" — տիեզերքի պատկերը։

Շահը մէջտեղ հանեց նորէն առասպելական սիփահսալարը, Ֆիրման-Ֆիրմա, որ երթայ պատժէ ըմբոստ Սպահանը։ Բայց Ֆիրման-Ֆիրմա, օդային հերոսը, որ.. իր արշաւանքի ճամբուն սկիզբն է միշտ, քումի մէջ քարացած կեցած է և քայլերը առաջ չեն երթար, մինչ Սպահանը իր պատրաստութիւնները կը տեսնէ, մարտկոցները կը բարձրացնէ, ինքնապաշտպանութեան համար։ Թայմզի թղթակիցը Պախտիարիներու դիմադրութիւնը շատ լուրջ կը նկատէ և մինչև իսկ երկիւղ կը յայտնէ որ գարնան Թէհրանի վրայ կարող են քալել այդ ճերմակ փափախները։

Սպահանի շարժումը սկսած է անդրադառնալ ամբողջ հարաւի վրայ, որ տուած է Իրանի մեծագոյն բանաստեղծները։ Արդէն Ֆարսիստանը ոտքի ելած է։ Ազգայնականները գրաւած են մաքսատները, վռնտած են իշխանութիւնները և մինչև Շիրազ վարչութիւնը յանձնուած է յեղափոխականներուն։

Թէհրան խուլ խմորումի մէջ է. ազգայնականները առիթի կսպասեն իրենց գոյութիւնը ցոյց տալու համար։ Շահը Շահպաղի իր պալատին մէջ ամրացած,— ճիշտ ինչպէս Ապդիւլ Համիդ Եըլդըզի բարձունքին վրայ,—քաղաքը թնդանօթներու ահին տակ կը պահէ, իսկ սէրպազները շունչերնին բռնած կսպասեն ալան թալանի ժամուն։ Երկու արևելեան վեհապետներ — մէկը սիւննի, մէկը շիա—քսաներրորդ դարու արշալոյսին ասպարէզ կը կարդան իրենց հպատակներուն և կսպառնան ոչնչացնել զանոնք։ Ապդիւլ Համիդ անցաւ այդ շրջանը և խածաւ գետինը, նոր Շահը կը շարունակէ դեռ իր սիւննի վարպետին ոճրային սիստէմը և քաղաքականութիւնը։

Արևելեան նահանգներուն, Խորասանի սուրբ քաղաքին՝ Մէշէդի մէջ ևս —որու հոգևորականութիւնը երբէք չէ հակառակած քէրպէլայէն եկած հրահանգներուն—շարժումը սկսած է. բնակիչները վաներ են Շահի պաշտօնեաները և կը մերժեն տուրք վճարել։ Հոն գումարուած պատգամաւորական ժողովը նոյնպէս սահմանադրութեան ստիպողական պահանջը դրած է։ Վերջին հեռագիրները կը գուժեն որ արիւնահեղ կռիւներ տեղի ունեցած են քաղաքին մէջ։

Քիչ մը աւելի հիւսիս, Կասպիցի ափերուն վրայ նոյն յեղափոխական արշաւանքները։ Կովկասէն և Ատրպատականէն եկած 50 յեղափոխականներ՝ Աստէրապատի վրայ կը քալեն, տեղին ժողովուրդը սիրտ առած, գրաւեր է զինարանը։ Շահի իշխանութիւնն հարուածի տակ է Մազանդարանի և Կիլանի նահանգներուն մէջ ևս։

Ռէշտ՝ հիւսիսային կողմը, Կասպիցի ափին վրայ, Թէպրիզի և Սպահանի արձագանք տուաւ յեղափոխական բուռն և ուժգին պոռթկումով մը։ Շահը պաշարած է յեղափոխութեան փոթորիկներով ու շանթերով։ Ահա թէ ինչ կը գրէ Ռէշտի մեր թղթակիցը.

„Փետր. 8-ին (յունուար 26) զինուած ապստամբութեան միջոցով Յեղափոխութիւնը փառաւոր յաղթանակ

տարաւ Ռէշտի մէջ։ Յեղափոխականները ամբհացած ցերեկւայ ժամը 3-ին երկու ժամ կուէ յետոյ գրաւեցին Դարխանը, կրակի տուին զայն և սպաննեցին Նահանգապետը և 50-ի չափ միապետականներ։ Քաղաքը ամբողջապէս ինկաւ յեղափոխականներուն ձեռքը, որոնք այժմ կը կառավարուին էնճումէններով։ Թիւրիմաց տակտիկով մը ազատեցան կարգ մը միապետականներ և Քարգառիի քորենին Ամիր-Սալթանէն, որ փախան ապաստանեցան ռուսաց հիւպատոսարանը։ Ցեսնելու էր սէրպազներու խայտառակ փախուստը, ինչպէս ծակէ ծակ կը մտնէին։ Յեղափոխականներէն ինկան միայն երկու հոգի"։

Շահը 400 հեծելազօրք թնդանօթներով ճամբայ հանած է Ռէշտի շարժումը պատժելու համար, սակայն, ինչպէս միշտ, Շահի այրուձին կէս ճամբան մնացած է նորէն, թերևս իրենց „դայլօնները" ծխելու համար։

Ռէշտը յեղափոխականներուն ձեռքն է և եղած հմուտ ուժերուն նայելով կարող է երկար դիմանալ և մեծ զօրավիգ մ'ըլլալ Թէպրիզին։ Արդէն Ռէշտէն կապին երկարող ռուսական խճուղիին վրայ դիրքեր ամրացուցած և ականներ փորած են, նաև օդը հանած են Մէնճիլիի կամուրջը, որ զօրքերը չկրնան անցնիլ։ Նոյնիսկ զօրքերը եթէ Սէֆիդ գետը անցնին, Կիլանի խիտ անտառներուն մէջ բուռն ընդդիմութեան կարող են հանդիպիլ վճռական յեղափոխականներու կողմէ։

Քաղքին նորակազմ էնճումէնը իսկոյն հեռագրեց դեսպաններուն պահանջելով „մէճլիսի" վերահաստատումը և անպայման հեռացումը Շահի խորհրդականներուն որ աղէտաբեր եղած են երկրին։

Որովհետև Ռէշտի յեղափոխութեան պատճառով ռուս վաճառականութիւնը ժամանակաւորապէս կանգառած էր այդ կողմերը, ռուս կառավարութիւնը, իբր թէ իր շահերը պաշտպանելու և այլ պատրուակով, որոշած է զօրք և թնդանօթ իջեցնել Ռէշտ։ Այս առթիւ տեղական նոր էնճիւմէնը հետևեալ բողոքը հեռագրած է Փարիզի Le Temps լրագրին.

„Կարգը կը տիրէ քաղքին մէջ և ապահովութիւնը ընդհանուր է։ Օտարականներու սեփականութեանց վտանգ չկայ, և բոլոր հիւպատոսները, ինչպէս և ռուսականը, իրենց գոհունակութիւնը յայտնեցին, կարգը պահպանելու համար, մեր էնճումէնին կողմէ ձեռք առնուած միջոցներու մասին։ Այս պայմաններուն մէջ ռուս զօրքերու և երկու արագաձիգներու առաքումը, մեր ազգային պատուոյն դէմ թշնամանք մըն է, որ միայն կարող է գրգռել պարսիկ ժողովրդին յիշաչարութիւնը։ Կը բողոքենք Եւրոպայի հանրային կարծիքի առջև ռուս կօզակներու առաքման դէմ"։

Թէպրիզը, որ կղզիացած իր ուսերուն վրայ կը կրէր ամբողջ յեղափոխական պարտականութիւնը և միակն էր որ Շահի լէշկերներուն կուրծք կուտար, այժմ հպարտութիւնով պէտք է դիտէ յեղափոխական սերմերուն ուռճանալը երկրի զանազան կէտերուն վրայ։

Թէպրիզը մշտակայ վտանգ մըն էր Շահի բռնակալութեան որքան ատեն հոն յեղափոխութիւնը անպարտելի կը մնար։ Պէտք էր ամեն գնով ընկճել զայն։ Այն-էդ-Դովլէն, Շահի միւս բազուկը, բոլոր աւարառու և արիւնարբու ուժերը ժողվեց և փետր. 26-ին, երեք կողմէ գրոհ տուաւ քաղքին վրայ, թնդանօթները կ'որոտային դէպի Խըյապանի թաղը, ուր կեդրոնացած էին յեղափոխականները։ Կռիւը որ տևեց երկու օր, կորակոր և մահացու պարտութիւնը եղաւ Շահի զօրքերուն՝ որոնք հալածական փախուստ տուին մեծ կորուստով։ Իսկ յեղափոխականներուն համար փառաւոր յաղթանակի օր մը եղաւ աննշան կորուստով։ Այն յաղթութիւնը նշանակալից կարելի է համարել, նկատի ունենալով „արքայից արքային" զինուորական ողորմելի ուժը, գրեթէ ոչնչութիւնը և ֆինանսական անձկութիւնը։ Իսկիմ խանը, այդ չարագործ „օղրին", որ Շահի ծառայութեան մէջ մտած է, Ղարամելիք արուարձանին մէջ նոյնպէս մեծ ջարդ կերած է իր զօրքերով։

Այն-էդ-Տօվլէ, որ Ֆիրման Ֆիրմայի հետ իրենց շուքը կը պտտցնեն... պարտութեան դաշտերուն մէջ, միշտ յաղթութեան շոշորթ մը ձեռք ձգելու յոյսով, յեղափոխականներէն իր պարտութեան վրէժը կը յաղեցնէ շրջակայ անմեղ և անվնաս գիւղացիներէն։

Սատտար խան, յեղափոխութեան հմակրելի ռազմիկը, ի տես Շահի զօրքերու վայրագութիւններուն, փետր. 27-ին հետևեալը հեռագրած է Փարիզի „Le Temps" լրագրին.

„Արքայականները ազգայնականներու դէմ իրենց կուին մէջ, փոխանակ զինուած զօրքերուն, ազատութեան պաշտպաններուն դէմ ճակատելու, ինչպէս կը պահանջէ պատերազմական օրէնքը, վայրենաբար կը յարձակին անզէն գեղացիներուն վրայ, կայրեն հարևան գիւղերը որոնք ոչ մէկ մասնակցութիւն չեն ունեցած կուին, կը կոտորեն նոյնիսկ մանուկները։

„Յայտնելով սոյն բարբարոսութիւնները քաղաքակիրթ աշխարհին, բուռն կերպով կը բողոքենք այս վայրենութեան դէմ, որ յարձակում կը գործէ չէզոք գեղացիներուն վրայ"։

ՍԱՏՏԱՐ ԽԱՆ

Շահը ոչ մէկ կերպով չուզեր զիջանիլ, իր խօսքով Թէպրիզի „բուռ մը խռովարարներուն", թէ պիտի. շնորհէ ինչ որ „Գուրանը կը թոյլատրէ իրեն ընել". այսինքն իր շնորհած Սահմանադրութիւնը պէտք է „շէրիաթի" շաւղէն դուրս չ'ելլէ։

Շահի կեղծաւորութիւնն է, որով կը յուսայ պարսիկ ժողովրդի մոլեռանդութիւնը իրեն շահիլ. բարեբախտաբար Շահի այդ մտածելակերպը հող չգտներ։ Առայժմ Թէպրիզի յեղափոխականները անպարտելի են, թէև Թանկագին զոհեր տուած են վերջի ընդհարումներուն միջոցին, որոնց մէջ կան ծանօթ կտրիճ դէմքեր։ Թէպրիզի շուրջը ամբողջ աւերակ եղած է, ջրաղացները քարքանդ ըրուած, որ ազատութեան հերոսները սովամահ ըլլան։ Այդ բուռ մը քաջերուն անզուգական դիմադրութիւնը արդէն սկսած է հիացում և կարեկցութիւն շարժել երկրին մէջ և դուրսը։ Սալմաստցի Հաճի Փիշման, արքայական գարատաղցիներուն լաւ ջարդ մը տալէ յետոյ՝ օգնութեան կը փութայ Թէպրիզի յեղափոխականներուն։ Հոգեբանական բոպէն է. պէտք է ամեն գնով փրկել ազատութեան բերդը և զգետնել արիւնարբու ու անիծեալ բռնակալութիւնը, եթէ չենք ուզեր որ յետինը չար ըլլայ քան առաջինը։

Թէպրիզի աւերումը և աւերիչ բռնակալութեան յաղթանակը քաղաքակիրթ մարդկութեան էն աններելի

դաւաճանութիւնը պիտի շեշտէ Իրանի դժբախտ ժողովուրդին հանդէպ։

Վերջին լուրերը Պարսկաստանի դրութիւնը շատ լուրջ կը նկարագրեն։ Շահի և իր ժողովրդի միջև մահակռիւ մը սկսած է. կռիւ չէ, այլ անգութ վրէժխնդրութեան տեսարաններ։ Արքայական զօրքերը չլսուած վայրագութիւններ գործ կը դնեն անպաշտպան ժողովրդին վրայ. Շահը արիւնարբու վագր դարձած է. ամեն գնով իր „բռնակալի“ դիրքը և կաշին փրկել կը ձգտի, թէկուզ Պարսկաստանը արիւնաւեր ըլլայ—„ոչ մէկ սահմանադրութիւն“ ըսած է։ Երկիրը բացարձակ անիշխանութեան մէջ է։ Մարտ 24-ին, Շահ Ապդիւլ Ազիմ մզկիթին մէջ պաստ մտած երեք անձինք ըսպաննեցան Շահի զօրքերէն, պարսիկներու նիրական օրէնքին հակառակ։ Սա ահաւոր ապացոյց մըն էր, որ Շահը, դուրս եկած իր մարդկայնութենէն, ոչ մէկ սրբութիւն չուզեր յարգել, վրէժի ու արիւնի ծարաւը այնքան գազանացուցած է զինքը։ Անգլ. և ռուս դեսպանները բողոքած և պահանջած են պատժումը ոճրագործներուն։

Չարագործ „օղրին“, Ռահիմ խանը, Ջուղայի մօտ պարսիկ անմեղ գիւղերուն մէջ կրակ կը թափէ և անպատիժ կը կողոպտէ սուրհանդակները. վերոյիշեալ երկու դեսպանները բողոքած են կատարուած չարագործութիւններուն դէմ։

Թիւրքիոյ դեսպանը խնդրած է իր կառավարութենէն որ զօրք ղրկէ օսմ. դրօշին տակ ապաստանած պարսիկներու պաշտպանութեան համար, որոնց գոյութեան վտանգ կսպառնայ։

Շահը մինակ չէ իր ազգասպան ծրագրին մէջ. Ռուսիան ունի իրր պահապան հրեշտակ։ Հակառակ անգլո-ռուս համաձայնութեան, Ռուսիա կը դաւադրէ որ Պարսկաստանը չը խաղաղի։ Վերջերս Թէպրիզի պատերուն վրայ խորհրդաւոր կոչեր փակցուած են, հրաւիրելով ժողովուրդը չխաբուիլ սահմանադրութենէն և դիմել Ռուսիոյ որ գայ փրկէ զիրենք։ Քիչ առաջ Թէհրանի մէջ ուրիշ կոչ մը կը հրաւիրէր պարսիկները ջարդել եւրոպացիները։

Ռուսիան է որ կը դրդէ այդ շիլ ու յուզիչ միջոցները որ պատրուակ ունենայ միջամտելու... կարգը վերահաստատելու համար։ Ռուսական մամուլին ազգայնամոլ և հակազատական մասը նոյն ստախօս և աղմկիչ դերը կը կատարէ Պարսկաստանի հանդէպ ինչ որ աւստրիական մամուլը կ'ընէ Պալքաններուն մասին, ամեն ինչ խեղաթիւրելով հանրային կարծիքը խաբելու համար։ „Նովոյէ Վրեմիա“ դրօշակակիրն է այդ գարշելի կեղծութիւններուն ու սուտերուն, այն տխուր գիտակցութիւնովը, թէ իր պետութեան շահերուն կը ծառայէ։

Յեղափոխականները յայտարարութիւններով կրգուշացնեն ժողովուրդը՝ որ չհետևի արքայականներու չարիմասա խորհուրդներուն որ ադէտ կը հրաւիրեն երկրի վրայ։ Եւրոպական թերթերը դիտել կուտան թէ այդ գրգռումները շահականներուն գործն են, և թէ յեղափոխականները միշտ սիրալիր եղած են դէպի եւրոպացիները։ Անգլ. և ռուս դեսպանները, „սրտառուչ“ զուգութիւն մը կազմած Շահը պատասխանատու բռնած են... եթէ եւրոպացիներու վտանգ մը գայ։ Այս վերջիններէն շատեր, սակայն, խոհեմութիւն համարած են հեռանալ։

Ռուսիա, ինչպէս միշտ, իր արջու դերին մէջ այնքան կոպիտ է, որ սկսած է լուրջ մտահոգութիւն պատճառել իր մշտակի ինտրիկներով, և պարսիկ ազատութեան դէմ ծածուկ խութեր կանգնելով։ Այդ կասկածը իբր թէ չքացնելու համար, Լիխնովը ձգեց ռուս բանակի աստիճանէն, որ ասկէ յետոյ կը դառնայ լոկ պարսիկ կօզակներու հրամանատար և անկախ։ Ուրեմն, պարսիկ Մէճլիսի դահիճը, ասկէ ետքը յեղափոխական դատավճռին տակ կ'ինայ իբր հզօր նեցուկը Իրանի ոճրագործ բռնաւորին։

Երբ այս արիւնհեղութիւնները անդուլ կը շարունակուին, յարաճուն բարբարոսութիւնով մը, աւեր ու սուգ սփռելով ամեն կողմ, Շահը աչքապուկ կը խաղայ, թէ սահմանադրութիւնը պիտի հաստատէ, բայց իր ուզած ձևով։ Մարտ 21-ին „խորհուրդ“ մը պիտի գումարէր դաստակարգերու ամենայետադիմական ներկայացուցիչներէն“։ Այս խայտառակ զաւեշտին դէմ բողոքեցին դարձեալ „եղբայրական“ համերաշխութիւնով մը—որ երթալով եղերական գոյն մը կ'առնէ — երկու ծանօթ դեսպանները, որոնց բոլոր գործնէութիւնը կը կայանայ ծիծաղելի նօթաներ տալ, յանդիմանութիւններ ընել Շահին, երբ իրենց ներքին քաղաքականութեան մէջ կ'անբարոյականեն իրարու դէմ, այնքան գռեհիկ միմոսութեան ձև մը տալով իրենց միսիոնին։

Եթէ ճիշտ է այն լուրը, թէ Գերմանիա կուզէ միջնորդել Շահին և յեղափոխականներուն միջև, ամենէն մեծ ապտակը պիտի ըլլայ այդ երկու պետութիւններուն, որոնք հիւլէի չափ օգտակար չկրցան ըլլալ և իրենց ազդեցութիւնը գործադրել յօգուտ պարսիկ ժողովրդի ազատութեան և հանգստութեան։

Ռուսիա նոյն խեղկատակ դերը ստանձնած է Իրանի մէջ, ինչ որ կ'ընէր Պոլսոյ մէջ, երբ ռուսական „պատմական“ կոչումի պատրանքներէն գինովնալով, ամեն միջազգային համաձայնութեան վրայ պաղ ջուր կը լեցնէր։

***

Յեղափոխութիւնը փողոտելու համար Շահը քանի ժամանակ է կ'աշխատի փոխառութիւն ընել Ռուսիոյ „բարեացակամ“ միջնորդութիւնով։ Ռուսիա որ միշտ պատրուակ կը փնտռէ Պարսկաստանի մէջ իր թաթը նետելու, կուսակից և պաշտպան է այդ փոխառութեան իր իրաւասութեան նիշերը աւելցնելու համար. բայց անգլո-ռուս համաձայնութիւնը (1907 օգ. 30) բաւական լուրջ պժուարութիւններ կը յարուցանէ իր մտադրութեան իրագործման։ Անգլիոյ ներկայացուցած յիշատակագրին մէջ, Ռուսիա անհրաժեշտ և էական կը համարի այդ փոխառութիւնը Շահին՝ երկրին „անիշխանական դրութեան վերջ մը դնելու և Շահին աւանդական ու անհատական իշխանութիւնը պահպանելու համար“։

Ռուսիոյ սոյն յիշատակագիրը վարպետ և երկդիմի դիւանագիտութիւնով մը խմբագրուած, ընդունելութիւն չգտաւ անգլիական մամուլէն որ անոր մէջ կը նշմարէ դաւ մը և ձգտում մը Շահի բռնակալութեան վերահաստատումին։ „Փոխառութիւն մը, կ'ըսէ „Մորնինկ Պոստ“, Պարսկաստանի ներքին գործերուն միջամտու-

թիւն կ'ենթադրէ, որ կրնայ հակառակիլ պարսիկներու զգացումին և նոյնիսկ Անգլիոյ շահերուն"։

Պարսիկ ազատականները բոլոր սրտով հակառակ են այդպիսի փոխատուութեան մը, որ ոճրագործ բռնակալութեան բազուկները պիտի ուժովցնէ։

Սատտար և Պաղիր խանները յանուն կուռող ազատութեան, հեռագրելով Բեթրսպուրկ Միլիուքովին, Ռուսաստանի ազատական պարագլուխներէն մէկը, կը խնդրեն քաղաքակիրթ աշխարհէն, յանուն արդարութեան և մարդկայնութեան չմիջամտել Պարսկաստանի գործերուն և չթողուլ որ՝ ազատութեան համար մղած երեք տարուայ կռիւը ոչնչանայ՝ դրամապէս օգնելով բռնակալին։ Ազգայնականները կը յայտարարեն և կը շեշտեն, որ ընդունելի պիտի չըլլայ ազգին կողմէ ոևէ փոխառութիւն որ առանց իր ներկայացուցիչներու հաւանութեան կնքուած է։

Ռուս թերթերէն ոմանք „Բէչ" ևն, կը յորդորեն Ռուսիան չքաջալերել այդպիսի փոխատուութիւն մը, որ միջամտութիւնը անխուսափելի կ'ընէ և չիյնալ ասիական նոր արկածախնդրութիւններու մէջ։

Ռուսիոյ նենգամիտ և առաձիգ յիշատակագրին Անգլիան պաշտօնապէս կը յայտարարէ, որ ինք „Պարսկաստանի գործերուն մէջ չմիջամտութեան սկզբունքէն չշեղիր", և կը շեշտէ սահմանադրական բարենորոգումներու պէտքին վրայ։

Սըր Էտուարդ Կրէյ, անգլիական խորհրդարանին մէջ բացէբաց մերժեց յարիլ Ռուսիոյ տեսակէտին, մինչև որ սահմանադրութիւնը չհաստատուի և Շահը չը հեռացնէ յետադիմական խորհրդականները։ Ռուսիա կ'ուզէ փոխատուութիւն ընել Շահին անմիջապէս՝ պայմանով որ սահմանադրութիւնը հաստատէ, Անգլիա կը պահանջէ նախ հաստատել սահմանադրութիւնը և թոյլ տալ որ խորհրդարանը քննարկէ փոխառութիւնը։

Դիւանագիտական ճարպիկ սուսերամարտ մըն է որ Անգլիա և Ռուսիա կը կատարեն Իրանի խուլ լեռնադաշտին վրայ։ Ռուսիոյ նպատակը շատ ակներև է, ամեն ջանք կ'ընէ գլխու Անգլիան և իր տեսակէտին լերելու զայն։ Անգլիա, որ այնքան քննադատեցաւ ժամանակին իր մամուլէն, թէ 1907-ի համաձայնութիւնով, Ռուսիոյ քմահաճոյքին կը զոհէր Պարսկաստանի ճակատագիրը, կարծես ձգտում մը ունի դարմանելու այդ թերին և ամեն անգամ որ Ռուսիան ծուղակ կը լարէ իրեն, կը գտնէ լաւագոյն կուանները և ընդհանուր սկզբունքները, հեռացնելու կամ չէզոքացնելու համար այն պատրուակները, որ կրնան առիթ ընծայել Ռուսիոյ կողմէն ոևէ ձեռնձգութեան Պարսկաստանի վրայ։

Հարթվիկ, Թէհրանի ռուսական դեսպանը, այժմ Բեթրսպուրկ, որ իր ինտրիկներով Պարսկաստանի ազատութեան չար ոգիներէն մէկը եղած է, հակառակ է որ Ռուսիա Պարսկաստանի մէջ գործակցի Անգլիային, „Ռուսիա, կ'ըսէ, նախ իր շահերը փնտռելու է, իրեն համար ձեռնտու է փոխատուութիւն ընել Շահին՝ փոխարէն Ատրպատականի մէջ մասնաւոր արտօնութիւններու և սահմաններու կանոնաւորման"։

Ռուսիոյ դիտումը արևի պէս պարզ է. կոպիտ միջոցի դիմելէ առաջ, դիւանագիտական խաղերով կ'ուզէ թեւարկել Պարսկաստանը։ Եւրոպայէն կնքած միլիոններով փոխառութիւնները, որոնք ձիւնի պէս կը հալին, Ռուսիա կը գործածէ թէ իր երկրին և թէ արևելեան երկիրներուն մէջ բռնակալութիւնը քաջալերելու և ոճրագործ վեհապետները հովանաւորելու։ Քաղաքակիրթ Եւրոպայի դրամատիրութիւնն է որ անուղղակի կերպով կը նպաստէ Ասիոյ դժբախտ ժողովուրդներու ստրկային վիճակին ու թշուառութեան։

Շահը մեծ յոյս ունէր որ անգլօ-ռուս բարեկամութիւնը պիտի չմերժէր իրեն տրամադրութեան տակ դնել քանի մը միլիոններ, որպէս զի բնաջինջ ընելով ազատական գաղափարի հետքերը Իրանի մէջ իր բոլոր մարմնով թաղուէր արևելեան խենէշ անառակութիւններու մէջ ուր կը գտնէ վեհապետի մը միակ արժանիքը ու մեծութիւնը։

Ժողովուրդը ապստամբ վիճակի մէջ և դրամապէս ամեն կողմէ ճարահատ, „արքայից արքան" որոշեր է ծախել իր մատենադարանը, ուր կան պարսիկ և հնդիկ արուեստի սուղթանկագին գործեր։ Այդ գրքերը և հնութիւնները, որոնք ազգին հարստութիւնը և պարծանքը պիտի կազմէին, պիտի անցնին օտարներուն ձեռքը և պիտի երթան զարդարել օտար թանգարաններ։

Մէհմէտ Ալի Շահ վերջապէս կ'ուզէ ապրիլ — կ'ուզեն ապրիլ Շահ և Սուլթան—ինք որ այնքան անգթօրէն և բարբարոս շլայտութիւնով մը մահացուց Իրանի ժողովոյն կուրծքին վրայ բուսած այնքան գեղեցիկ կեանքեր, որոնք ապագայ Պարսկաստանի հոգիին նախերգանքներ էին։ Այժմ, երբ փոթորկոտ ալիքները ամեհօրէն կը ծեծեն իր պալատին պարիսպները, երբ մահուան պաղ քրտինքը կը լողայ մարմնին վրայէն, Շահը կըզգայ թէ Իրանի վարդերը... փուշեր ալ ունին։

Գարնան վերադարձին հետ մեծ հաւանականութիւն կայ, որ Յեղափոխութիւնը աւելի մեծ և հսկայական քայլեր առնէ դէպի Թէհրան, ուր որջացած է արիւնռուշտ յետադիմութիւնը և արևելքի շքեղ արևը ողջունէ յաղթութեան կատարները, ուր երբեմն հին Իրանի մաքուր ատրուշաները կը բոցանային...

Այդ օրը պիտի ըլլայ Իրանի ճշմարիտ „Նէվրուզը"։

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

—

Պայքարը ուժեղ էր, կիրքոտ ու յուզումնալի։ Բոլոր կուսակցութիւնները հրապարակ նետեցին իրենց լաւագոյն հռետորներին։ Բէակցիան, յանձին Ջիոլիտտիի կառավարութեան, գործ դրեց բռնութեան ու կաշառքի իր սովորական սիստէմը։ Բեմ եկաւ նաև պապական կղերը, լիակատար սպառազինութեամբ։

„Տապալե՛լ սոցիալիստներին, դուրս մղել Օրէնսդիր Ժողովից ամբողջ ձախակողմը"—այդպէս էր նշանաբանը։ Բայց սոցիալիստները, այնուամենայնիւ, տարան չը տեսնուած յաղթանակ։ Աշխատաւոր պրոլեթարիատի ներկայացուցչութիւնը պարլամենտում աճեց 16 նոր պատգամաւորներով, հասաւ 42-ի։ Եւ դեռ չափազանց արատաւոր է տիրող ընտրողական սիստէմը, դեռ չը կայ Իտալիայում ընդհանուր ու հաւասար ձայնատուութիւն, դեռ տգիտութիւնը, անգրագիտութիւնն ու ծայրագոյն

խեղճութիւնը հեռու են պահում սոցիալիզմից աշխատաւոր ժողովրդի ստւար զանգւածները...

Իտալական սոցիալիզմը իրաւունք ունի տօնելու իր եզակի յաղթանակը։ Բոլոր խոշոր կենտրոններում ու գաւառներում նրա ազդեցութիւնը հաստատւում է անխախտ կերպով։ Դոժերի Վենետիկը, ազնւական Ֆլորենցիան, տիեզերական կաթոլիկութեան մայրաքաղաք Հռոմը, „Կամօռայի“ հայրենիք—Նապոլը, „Մաֆֆիայի“ ծննդավայր—Պալերմոն ու Կատանիան—բոլորն էլ „վարակւում են“ սոցիալական ազատագրութեան աշխարհանւաճ հոսանքով...։

Սոցիալիստներից զատ՝ ուժեղանում են և ռամկավար տարրերը—արմատականներն ու հանրապետականները, որոնք Իտալիայում առհասարակ համերաշխ գործակցում են սոցիալիստ կուսակցութեան հետ, կազմելով միասին պարլամենտի ծայր-ձախակողմեան թևը։ Այդ վերջինը ունի այժմ 114 պատգամաւոր,—մի պատկառելի թիւ, որ թէև տակաւին փոքրամասնութիւն, բայց իր ներդաշնակ ու դիմադրական գործունէութեամբ այսուհետև ուժգնօրէն կ'անդրադառնայ երկրի թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան վրայ։ Ծայր-ձախակողմեան պատգամաւորների թիւը անցեալ պարլամենտում միայն 84 էր։ Նոր ու թարմ հոսանքը կը կարողանայ թումբ դնել կառավարութեան ու կղերի յետադէմ շահատակութիւնների առջև և կը բանայ նոր դարագլուխ՝ ներքին բարենորոգումների, աշխատաւորական արգասաւոր օրէնսդրութեան համար։

Կղերը պարտւած յետ նահանջեց։ Նա զգաց, որ ապարդիւն է Արարչի ու աւետարանի անունով արծարծել ժողովրդական տառապող զանգւածների մէջ ստրկութեան, տիրասիրութեան զգացումներ, խոստանալով տառապանքների հատուցումը... երկնային թագաւորութեան մէջ։ Ժողովուրդը երկրի վրայ է ուզում հաստատել երջանկութեան թագաւորութիւնը...

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՀՈՍԱՆՔԸ

ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄ *)

ՄԵԹՈԴԸ

Անմիջական կռիւ—*action directe*...

Քննենք այժմ յեղափոխական սինդիկալիզմի փառաբանած այդ մեթոդը։

„Սինդիկատները (արհեստակցական միութիւնները), անկախ ամեն կուսակցութիւնից, անկախ ամեն վարդապետութիւնից ու տեսական համոզումներից՝ կռիւ են մղում ամեն օր ու ամեն վայրկեան, կապիտալի դէմ, պետութեան դէմ։ Նրանք մղում են դասակարգային պայքարը բոլոր ձևերով, խաղաղ ու արիւնոտ գործադուլներով, ժողովրդական, հակամիլիտարական ցոյցերով, ապստամբութիւններով։ Նրանք ձգտում են միշտ աւելի և աւելի ընդարձակել, ընդհանրացնել գործադուլները, և այդպիսով մօտենալ այն վերջնական ու վճռական վայրկեանին, երբ ընդհանուր, համատարած գործադուլով կը պայթի սոցիալական կատաստրոֆը“...

Ընդհանուր, համատարած, արդիւնագործութեան ու հանրային կեանքի բոլոր այլազան ճիւղերն ընդգրկող այդ գործադուլը—նա ինքն արդէն կը լինի վերջնական մեծ ցեղաշրջումը, որից կը ծագէ սոցիալիստական հաւասարութեան ու եղբայրութեան թագաւորութիւնը։ Եւ այդ նպատակին հասնելու համար արհեստակցական միութիւնները „պէտք չունին“ ուրիշ ուժերի ու գործօնների աշխատակցութեան, նրանք կը բաւեն իրենք իրենց։

„Բռնութիւնը“ (*la violence*), ինչպէս տեսանք, ամենաէական ատորոգելին է այդ „անմիջական գործողութեան“։ Սինդիկալիզմը խնկարկում է բռնութեան կուռքին, ներբողում է ցաւոտ, արիւնոտ զոհաբերութիւնները, որոնք միմիայն և պիտի հարթեն սոցիալական ազատագրութեան ճանապարհը։ Բռնութիւնը վերածւում է սիստեմի, և դասակարգային կռիւը դառնում է միջոցից՝ նպատակ։ Կարդացէք սինդիկալիզմի պարիզեան նշանաւոր ռազմաթերթը, Գիւստաւ Էրվէի „*La Guerre Sociale*“-ը և դուք կը տեսնէք դրեթէ իւրաքանչիւր համարում բռնութեան խանդավառ ներբողումներ։ Ցեղափոխական սինդիկալիզմը յանձին Էրվէների անդուլ շեփորում է կռիւ, արիւն ու բարբիկադներ և հռչակում է „ընտիր, մարտական փոքրամասնութեան“ ուժը, նրա „դանտոնեան“ յանդգնութիւնն ու վճռականութիւնը, որոնցով միմիայն և պիտի շարժւի ժողովրդային մեծ զանգւածը։ Եթէ անգամ այդ վերջինը չը շարժւի էլ, եթէ մասսաները դեգերեն իրենց աւանդական հնազանդութեան ու անշարժութեան մէջ—փոյթ չէ. խիզախ, յանդուգն փոքրամասնութիւնը՝ ինքն իրեն կը բաւէ... Եթէ անգամ սինդիկատային աշխատաւորութեան համեմատաբար նեղ շրջանի մէջ բանւորների ճնշող մեծամասնութիւնը դէմ լինի մի յայտնի վայրկեանում, դիցուք, ընդհանուր գործադուլ յայտարարելու կամ թէ մասնակի մի ընդհարման միջոցին ճակատ առ ճակատ կապիտալիստների, գօրքի դէմ ելնելու՝ դարձեալ փոյթ չէ. ըմբոստ ու անձնուրաց փոքրամասնութիւնը, եթէ վայրկեանը պատեհ է համարում, „կարող է“ և պէտք է մեն-մենակ հրապարակ ելնէ ու դիմագրաւէ ահաւոր վտանգին... Նա կ'ընկնի, ի հարկէ բարիկադների, պատնէշների տակ և շատ շատերը կը նահատակւին անհաւասար, շարունակական պատերազմների մէջ, բայց նահատակների արիւնից կը ծնի ազատութիւնը. ուրիշ շարքեր կը գան, ուրիշ լեգէօններ աշխատաւորութեան՝ որոնք անցնելով իրենց նախորդների դիակների վրայից, մի օր, վերջապէս, կը յաղթանակեն...

Ինչպէս տեսնում էք, դա կռւի հին, դարաւոր մեթոդն է, այն՝ որ կիրառել են ժողովրդական բոլոր դատերի ռահվիրաները պատմութեան ամենախոր ժամանակներից մինչև մեր օրերը, հռոմէական Գրակխուսներից մինչև ռուսական նիհիլիստները և հայկական ֆէդայիները։ Սակայն, ի՞նչ նմանութիւն... Անդունդ կայ հին ու այժմեան կացութեան միջև։ Մինչև օրս յեղափոխութիւնները եղել են սոսկ քաղաքական, նրանք ձգտել են փոփոխել այս կամ այն երկրի լոկ պետական կազմակերպութիւնը, փոխարինել բռնակալական ձևերը՝ սահմանադրական, հանրապետական ձևերով։ Այդ գործողութիւնը ևս, անշուշտ, դժւարին, հրսկայական էր. նա խլել է մարդկութիւնից անբաւ զոհեր, հոսեցրել է արեան անվերջ, անհատնում հեղեղներ։ Եւ, այնուամենայնիւ, նա համեմատաբար դիւրին է եղել. դիւրին այն պատճառով՝ որ քաղաքական յեղաշրջումների մէջ անմիջապէս վնասւողները կազմել են միշտ մի չնչին փոքրամասնութիւն—բռնապետական կամարիլլան, ազնւականութիւնը, կղերը։ Քաղաքական յեղաշրջումները սպառնացել են միմիայն այդ տարրերի շահերին, հանդիպել են միմիայն այդ տարրերի դիմադրութեան։ Եւ ժողովրդային զանգւածները, նոյնիսկ խոշոր, միջին սեփականատէրերը, բուրժուազիան, գիւղացիութիւնը սիրով հետևել են իրենց մարտական փոքրամասնութեան, սիրով մտել են ապստամբութեան դրօշակի տակ, և կամ թէ, յամենայն դէպս, պահպանել են բարեացակամ, համակրող դիրք, որովհետև այդ կարգի յեղափոխութիւնների մէջ նրանք կորցնում էին միայն իրենց շղթաները, ազատւում էին մի կատարեալ, անասնական ստրկա-

*) Տես „Դրօշակ“ N° 1։

յումից, ուր խեղդուած էին կեանքի բոլոր արտայայտութիւնները, ոտնահարուած էր մարդ-էակի ամենատարրական իրաւունքը։ Ահա թէ ինչու համեմատաբար դիւրին էր առաջ բերել քաղաքական յեղաշրջումներ. բաւական էր, որ իւրաքանչիւր մի ստրուկ երկրում հրապարակ դար պատմական արի փոքրամասնութիւնը և նա զինուած իր ժամանակի զէնքերով, մարդուած տերրորի, դաւադրութեան, արիւնոտ մարտի դպրոցում, յաճախ մեն-մենակ ամենավճռական ճակատամարտների մէջ, աջողում էր տարիների կամ տասնեակ տարիների ընթացքում, գրաւել ընդարձակ զանգուածները և տապալել փոքրաթիւ հակառակորդներին։

Այլ բան է ապագայ մեծ յեղափոխութիւնը։ Նրա անունն է սոցիալական (հասարակական) յեղափոխութիւն։ Նրա հակառակորդների թիւը շատ աւելի ստուար է ժամանակակից կապիտալիստական հասարակութեան մէջ։ Նա պիտի փորձէ—առաջին անգամը մարդկային ամբողջ պատմութեան ընթացքում—տապալել այն հսկաւոր պատնէշը, որ բազմաթիւ դարերից ի վեր խարիսխն է մարդկային հասարակութիւնների և ծնողն է ժամանակակից բուն աշխատաւոր զանգուածների ստրկացման ու թշուառութեան։ Այդ պատնէշը, որի վրայ կութնած են ներկայ բուրժուա-կապիտալիստական կարգերը—դա մասնաւոր սեփականութեան սկզբունքն է, որ իր բոլոր չարիքներով արիւն ու մարմին է դարձել մարդկութեան մի ահագին հատուածի մէջ...

Այդ է, որ պէտք է բառնալ, այդ է, որ պէտք է յեղաշրջել, գլխի վայր դնել. իսկ դա մի սիզիֆեան աշխատանք է, որ չի կարող ի կատար ածուել սինդիկալիզմի հրահանգած միջոցներով։ Դա մի հսկայական գործ է, որ շօշափում է լայնածաւալ շահեր ու խորարմատ բնազդներ և որ, հետևապէս, վճռական վայրկեաններում պիտի յարուցանէ շատ աւելի ընդարձակ ու զօրեղ դիմադրութիւն, քան այն՝ որ յարուցել են քաղաքական յեղաշրջումները բոլոր դարերում։ Անհրաժեշտ է կազմակերպման ու պրօպագանդի մի վիթխարի ու նախնական աշխատանք։ Քանի դեռ աշխատաւոր ընդհանրութեան մի պատկառելի հատուածը դուրս կը մնայ սոցիալական պայքարից, անտարբեր դէպի իր կենսական շահերն ու կապիտալիզմի կեղեքումները, քանի դեռ սոցիալիզմի ու համայնական կարգուսարքի պահանջները խորապէս չեն արմատանայ աշխատաւոր ժողովրդի ճնշող մեծամասնութեան ուղեղների ու սրտերի մէջ—անհնարին է և ծայրայեղօրէն անխելահաս՝ ենթադրել, որ սինդիկալիզմը, յենուած միմիայն իր սահմանափակ ուժերի վրայ, կարող է մի գեղեցիկ օր, ընդհանուր մի գործադուլով, դաւադրական մի յանդուգն հարուածով, աշխատանքը այլևայլ ճիւղերում կանգնեցնելով, ծնունդ տայ սոցիալական յեղափոխութեան, տակնուվրայ անել տասնեակ ու հարիւրաւոր միլիոնների աշխարհայեացքը, հիմքից վերակազմել սեփականութիւնն ու արդիւնաբերութիւնը։

Կան նոյնիսկ այնպիսի տաքարիւն մոլեռանդներ սինդիկալիզմի շարքերում, որոնք կարծում են, թէ բուրժուազական կարգերը տապալելու համար ընդհանուր գործադուլն անգամ անհրաժեշտ չէ, թէ բաւական է և մանանի մի գործադուլ... Բաւական է, օրինակ, որ լոյսը հանգչի ամենուրեք, որ հաղորդակցութեան բոլոր միջոցները—երկաթուղիներ, պոստ ու հեռագրատներ, կառք ու էլեքտրաշարժ—դադար առնեն... Իսկ դրա համար, ասում են նրանք, անհրաժեշտ էլ չէ լայն, ժողովրդական, մասսային շարժում, բաւական են միայն մի քանի հազար կտրիճ, վճռական յեղափոխականներ. . .

Հարկ կայ արդեօք բացատրելու, թէ որքան միամիտ ու վտանգաւոր ցնորքներ են դրանք, թէ որքան անբաւարար է նոյնիսկ „ընդհանուր“ անուանուած սինդիկալիստական գործադուլը՝ պատմութեան ամենամեծ վերիվայրումը առաջ բերելու և սոցիալական հաւասարութեան հոյակապ շէնքը կառուցանելու համար։

Բուրժուազական հասարակութիւնը այդքան հեշտութեամբ անձնատուր չի լինի։ Նախապաշարուած մի ըմբռնում կայ սոցիալիստական որոշ շրջաններում, որ պէտք է ջրել մի անգամ ընդմիշտ։ Շատերը կան սոցիալիստներից, որոնք իրենց ցանկութիւնը իրականութեան տեղ ընդունելով, կարծում են, թէ բուրժուազիան, իբրև դասակարգ, „արհամարհելի մի քանակութիւն“ է, փտած ու քայքայուած, կորովազուրկ ու անդամալոյծ։ Այդ նախապաշարումը տարածելու մեղքը մեծ մասամբ դարձեալ ընկնում է ուղղափառ մարքսիզմի և ուղղափառ սոցիալ-դեմոկրատիզմի վրայ, որոնք 60 տարուց ի վեր, թէ ժողովրդական գրուածքներում և թէ նոյնիսկ լուրջ, գիտական աշխատութիւնների մէջ, շարունակ թմբկահարում են „բուրժուազիայի անանկութեան“ մասին։ Կապիտալիզմը վաղուց է արդէն (դեռ անցեալ դարու 50-ական թուականներին), որ դատապարտուել է մարքսիզմի կողմից՝ շուտափոյթ մահուան։ Երկու „վարդապետները“—Մարքս և Էնգելս—վաղուց են ծանուցել բանուոր աշխարհին, թէ կապիտալը (դրամագլուխը), կենտրօնանում է առասպելական արագութեամբ, թէ նոյնքան արագութեամբ ընթանում է ժողովուրդների պրօլետարացումը (սեփականազերծումը), թէ ճնշող ու ճնշուած դասակարգերի միջև խրամատն արդէն դառնում է անանցանելի, թէ „Կատաստրօֆը“ շուտով, շատ շուտով վրայ կը հասնէ և պրօլետարական հզօր ու յաղթական մեծամասնութեան գրոհի առջև՝ միլիոնատէրների ու միլիարդատէրների չնչին փոքրամասնութիւնը զարհուրանքով յետ կը նահանջէ... Էնգելսը նոյնիսկ գուշակել էր այդ „Կատաստրօֆի“ մօտաւոր ժամանակը, նա պիտի պայթէր անցեալ դարու վերջերում... Իսկ Լիբկնեխտ, գերմանական մարքսիզմի աւագագոյն քարոզիչը, 12 տարի սրանից առաջ միջազգային „Cosmopolis“ ամսագրի մէջ, ի լուր աշխարհի ազդարարում էր, որ ոչ միայն սոցիալիզմի յաղթանակը մօտ է, այլ որ կատաստրօֆի, արիւնհեղութեան պէտք անգամ չի լինի, քանի որ շնորհիւ հարստութեան արագ ու վիթխարի կենտրօնացման, „միջին խաւերի“ նոյնքան արագ պրօլետարացման՝ վճռական վայրկեանին բուրժուազիան և պրօլետարիատը կանգնած կը լինին իրարու հանդէպ, որպէս երկու խիստ անհաւասար բանակներ, առաջինը՝ մի անանշան, ողորմելի փոքրամասնութիւն,—մի քանի հազար Կրուպներ ու Ռոշիլդներ—երկրորդը՝ մի ջախջախիչ մեծամասնութիւն — ամբողջ աշխատաւոր ընդհանրութիւնը, որի մի խաղաղ ժեստը բաւական կը լինի՝ հասարակական բովանդակ կերպարանափոխութիւն առաջացնելու համար...

Նոյն վարդապետական ցնորքներով տարուած էին երկար ժամանակ և անիշխանականները (անարխիստները). նրանք ևս, համոզուած, որ կապիտալիզմի վերջալոյսը մօտ է, որ մարդիկ ի բնէ ու ընդհանրապէս բարի լինելով, չեն կարող երկար հանդուրժել անիրաւ ու մարդասպան ռէժիմի տարկանոնութիւնները — յախուռն, զգայուն գործողութիւններով, իշխողների դէմ բռնութի՛ւն ու ռո՛ւմբ քարոզելով, շտապում էին օր առաջ վերջ դնել ստրկութեանը ու հիմնել տիեզերական կոմունիզմը (համայնատիրական կարգերը)։ Ո՞վ չի յիշում անարխիստական հռչակաւոր մահափորձերը 19-րդ դարի վերջին տասնամեակում, Ռավաշոլների ու Կազերիոների ռմբաձգութիւններն ու դաշունահարումները... որոնք, սակայն, մի նշանախեց օգուտ չը բերին աշխատաւոր դասակարգին, այլ միայն ուժեղացրին յետադէմ շարժումը, քաջալերեցին սոցիալիզմի թշնամիներին...

Ուղղափառ մարքսիզմ և անարխիզմ (անիշխանականութիւն)։ Այդ երկու ուղղութիւններից են ժառանգել սինդիկալիստները իրենց այսօրուայ գործելակերպը։ Նրանք քաւում են երկու ուղղութեան մեղքերը և քաւել են տալիս աշխատաւորների մի մասին. . .

Միամիտ է այդ գործելակերպը և վտանգաւոր։ Նա հիմնուած է մի սին, անհող լաւատեսութեան վրայ։ Բուրժուա դասակարգի և կապիտալիզմի այժմեան վիճակը չի արդարացնում այդ լաւատեսութիւնը։ Շատ էլ, ի հարկէ, բարգաւաճ չէ այդ դասակարգը, նրա ռէժիմը, նրա քաղաքական ու տնտեսական կարգուսարքը։ Փտութիւնը, անշուշտ, սկսուած է նրա մէջ և մարդկային բանականութիւնն ու արդարութեան բնազդը վաղուց նրա վրայ արտասանել են բարոյական մահավճիռը։ Նա պիտի կորչի, պիտի կազմալուծուի վաղ թէ ուշ, քանի որ իր ներքին հակասութիւնների, իր խո-

բունկ տարկանոնութիւնների զօրութեամբ իսկ դատապարտուած է դիտութեան վերլուծող հոսանքի կողմից, քանի որ նրա ծոցում բարդաւաճում են ժամանակակից աշխարհի ամենաղաղակող սնիրները, քանի որ նրա մէջ փոքրաթիւների պերճանքն ու ցնծութեան խրախճանները պայմանաւորում են միլիոնաւոր աշխատաւորների ծով թշուառութեամբ, զրկանքներով ու հեծեծանքով...

Սակայն... Սակայն այդտեղից մինչև բուրժուազիայի իրական անանկութիւնը դեռ բաւական տարածութիւն կայ։ Իշխող դասակարգի կենսական կորովը դեռ չի սպառուել. նա դեռ ունի դիմադրելու պատկառելի ուժ և նա արամադիր է կուելու յամառ ու յուսահատ կերպով, մինչև կատարեալ ուժասպառում։ Նրա կողմն է ամբողջ ահագին պետական մեխանիզմը, նրա կողմն է լայնատարած բիւրոկրատիան և միլիոնաւոր բանակը իր ինդանօթներով, նորահնար, կատարելագործուած զէնքերով, նրա կողմն է, վերջապէս, հասարակութիւնների, մասսաների աւանդական կրաւորականութիւնը, պահպանողական բնազդը, նորավախութեան հին հակումը, որ խիստ դանդաղ ու դժուարութեամբ է թեքւում դէպի ըմբոստացման փրկարար ճանապարհը։ Այդ բոլորը կայ։ Կայ և պատրաստի հնարաւորութիւն մաքառելու աշխատաւորութեան յաւակնութիւնների դէմ՝ նոյնիսկ բուն փոքրատէր դասակարգի շարքերում, բուն ինդուստրիական, արդիւնաբերական միջավայրում։ Բուրժուազիան անգործ չի մնում։ Սոցիալիզմի սպառնական արշաւանքի հանդէպ նա չի նստում ձեռնածալ ու անտարբեր, այլ ինքն էլ կազմակերպւում է։ Գործադուլներին նա յաճախ պատասխանում է lock-out-ներով, փակում է գործարանները և հազարաւոր աշխատաւորներին իրենց ընտանիքներով մատնում է ի սաստ ճակատագրի։ Նա հնարել է և „Տրեստների“ կազմակերպութեան վիթխարի սիստէմը,— շահագործումն ուժեղացնելու և իր գոյութիւնը յարատևելու համար։

Բանւորական համաճարակ գործադուլների դէմ բուրժուազիան գտել է և գտնում է միշտ մաքառելու միջոցներ։ Պայթում է գործադուլը արդիւնաբերութեան որևէ ճիւղի մէջ—և ահա անմիջապէս հրապարակ են գալիս հապարաւոր ձեռքեր, որոնք լաւ-վատ փոխարինում են գործադրող բանւորներին... Այսօր այդ կամաւոր ձեռքերը—զինւորներն են կամ „դեղինները“ (les jaunes), վաղը դա կը լինի ինքը բուրժուազիան—մանր, միջին, կամ խոշոր բուրժուազիան—որ միշտ նոյնպէս սովորում է կեանքից, միշտ նորանոր միջոցներ է փնտրում՝ յարմարելու առաջ գալիք ճգնաժամերին...

Ընդհանուր գործադուլը (Grève générale) իր մեծամեծ, գրեթէ անյաղթելի խոչընդոտներն ունի։ Որքա՞ն դժուար է առաջ բերել աշխատաւորների մի իրօք ընդհանուր „զօրաշարժ“, մի համատարած „մոբիլիզասիոն“... Ի՞նչ ձևով արդեօք և ի՞նչ տեսակ կենտրոնական մարմին կարող է մի ժեստով, շեփորի մի հնչիւնով միաժամանակ շարժման մէջ դնել միլիոնաւոր աշխատաւորներին, միաժամանակ գործադուլ հրատարակել և՛ երկաթուղիների և՛ հանքերի, գործարանների, և՛ հանրային պաշտօնատների, տպարանների, և՛ քաղաքների հաղորդակցութեան ու փոխադրութեան գծերի վրայ, և՛ էլեքտրական ու այլ տեսակ լուսաւորութեան կայաններում, և՛ գիւղական խոշոր հողային սեփականութեան աշխարհում ևայլն ևայլն,— մի հսկայական, բազմամիլիոն զանգուած, որի այլազան հատուածների մէջ, նայած միջավայրին և տնտեսական առանձնայատուկ պայմաններին, այնքան տարբեր են և կուելու հնարաւորութիւններն ու տրամադրութիւնները, այնքան դժուար է առաջ բերել միահամուռ, ընդհանրական ճիգը, որ միակ պայման-գրաւականն է գործի աջողութեան։ Որքա՞ն յաճախ գործադուլային տագնապների միջոցին նոյն կուող պրոլետարիատի ծոցում առաջ են գալիս տարբեր հատուածներ, վէճատութեան, յոռետեսութեան հոսանքներ, փոխադարձ անվստահութիւններ ու ընդհարումներ, որոնք ջլատում, վիժեցնում են գործը, ի մեծ ցնծութիւն իշխողների... Վերջին տասնամեակում արևմտեան մի քանի երկրների մէջ—Իտալիայում, Բելգիայում, Ֆրանսիայում—իրարու ետևից փորձեր եղան „ընդհանուր գործադուլ“ կազմակերպելու, և բոլոր փորձերն էլ վիժեցին, երբեմն աղէտալի հետևանքներով։ Իտալիայում, ուր յեղափոխական սինդիկալիզմը անիշխանականների հետ դաշնակցած գլուխ էր կանգնում „ընդհանուր գործադուլներին“, տեսանք, իբրև արդիւնք այդ յախուռն ու գահավէժ պոռթկումների՝ մի սոսկալի յետադիմութիւն, կապիտալիստական վայրենի հակահարուածներ և պրոլետարական արեան հեղեղներ (1898 և 1904)։ Եւ դեռ չը մոռանք, որ այդ բոլոր „ընդհանուր գործադուլները“ բաւականում էին սովորաբար առօրեայ կեանքին վերաբերող համեստ, սահմանափակ պահանջներով,— քաղաքական, ընտրողական կամ տնտեսական համեստ ռեֆորմների ծրագիրներով։ „Ընդհանուր գործադուլները“, բնականաբար, երբէք չէին էլ աջողում՝ լինել իրօք ընդհանուր, իր[illegible] մատարած։ Զը նայած տասնեակ տարիների պրոպա[illegible]ին, պրոլետարիատի մի ստուար հատուածը տակաւին հ[illegible] է կանգնած դասակարգային փրկարար կուից, տեղ-տեղ նոյնիսկ թշնամաբար է տրամադրուած դէպի այն։ Անգամ Բելգիայում, ուր բուն սոցիալիստ աշխատաւորութիւնը ահագին տոկոս է կազմում ընդհանուր ազգաբնակութեան համեմատութեամբ՝ „ընդհանուր գործադուլը“ չարաչար վիժեց (1902 թ.), թէև պահանջում էր ոչ թէ սոցիալական ընդհանուր յեղաշրջում ու վերակազմութիւն, այլ միայն քաղաքական մի տարածուած ռէֆորմ—ընդհանուր ու հաւասար ընտրական իրաւունք բոլոր բելգիական քաղաքացիների համար։

Ընդհանուր գործադուլի ամենափառաւոր և ամենայաջող փորձը եղաւ Ռուսաստանում, 1905 թուականին, երբ նա ռումբի պէս պայթեց յանկարծ բռնակալութեան երերուն հաստատութիւնների վրայ, կանգնեցնելով աշխատանքը արդիւնաբերութեան բազմաթիւ ճիւղերում, գրեթէ խպառ անդամալուծելով հասարակական-պետական մեքենան։ Դարձեալ զուտ քաղաքական վերանորոգումն էր նրա պահանջը և այդտեղ Ռուսաստանի աշխատաւորութեան հետ համերաշխ էր բուրժուազիան ևս, որ վաղուց ձգտում է թօթափել իրեն կաշկանդող բռնութեան լուծը։ Այդ տարերային յորձանքն էր, որ խլեց Ռուսաստանի բռնապետից „հոկտեմբերեան մանիֆեստը“։

Դա, յիրաւի, մեծ, լայնատարած ու յաղթական մի գործադուլ էր, որ չը նայած իր զուտ քաղաքական հանգամանքին, չը նայած բուրժուազիայի լուռ կամ գործօն հակակրութեան և այլ նպաստաւոր պայմաններին,—վերին աստիճանի կարևոր ու խրախուսիչ է, իբրև աշխատաւորական կուի ու գործադուլային մեթոդի մի փառահեղ արտայայտութիւն։

Անտարակո՞յս։ Եւ մենք չենք ուզում ժխտել այդ մեթոդի կարևորութիւնը։ Զգուշացնելով սինդիկալիստական յախուռն ու մասնակի բռնկումների և նրանց լաւատես ցնորքների դէմ՝ մենք չենք ուրանում, որ գործադուլները միշտ անգնահատելի ու առաջնակարգ դեր են խաղալու աշխատաւոր ժողովրդի ամենօրեայ պայքարի մէջ և որ նոյնիսկ „ընդհանուր գործադուլին“ վերապահուած է պատկառելի տեղ՝ գալոց վճռական ճակատամարտներում... Միայն թէ... արդասաւոր լինելու համար, արիւնալի ու աւերիչ ճգնաժամերից խոյս տալու համար՝ անհրաժեշտ է, որ սինդիկատները, արհեստակցական ընկերութիւնները, կուող ու տանջուող աշխատաւորութեան բոլոր անկեղծ բարեկամները կատարեն այն նախնական ու հսկայական աշխատանքը, որի մասին քիչ առաջ խօսեցինք. անհրաժեշտ է, որ նրանք կարողանան մի յայտնի երկրում գործադուլի դրօշակի տակ համախմբել միլիոնաւոր ու գիտակից պրոլետարներ։ Անհրաժեշտ է, բացի դրանից, որ ընդհանուր գործադուլը միացած լինի ուրիշ յեղափոխիչ գործօնների հետ։ Նոյն դժուարայաղթ խոչընդոտների է ենթակայ և սինդիկալիստների քարոզած զինւորական գործադուլը (grève militaire, զինադուլ). նա ևս աջողել կարող է միայն այն ժամանակ, երբ յեղափոխական դրօշակի շուրջը կը կազմակերպի պրոլետարական (նաև զինւոր-պրոլետարական) ճնշող մասսան։

Զենք ուրանում և բռնութեան դերը։ „Բռնութիւնը“ երկսայրի սրերից է. նա հանդիսանում է բացասական, մարդասպան մի ուժ՝ բոլոր արտօնեալ դասակարգերի ձեռքում։—Նա կարող է դառնալ գերազանցապէս փրկարար գործօն՝ սոցիալիստական ժողովրդի ձեռքում։

Կարլ Մարքսի կենդանի արտայայտութեամբ՝ „բռնի ուժը հանդիսանում է յաճախ իբրև „մանկաբարձ բժիշկ մի հին, կործանող հասարակութեան համար, որ յղի է նոր կարգերով“։ Մանկաբարձի պէս՝ նա փութացնում է ծննդաբերութիւնը—թեկուզ և յաւ ու ցնցումներ պատճառելով ծնող օրգանիզմին—կրճատում է ըստ կարելւոյն այդ ծննդաբերութեան տառապանքները և սղչ առողչ լոյս աշխարհ հանում նորածինին։ Եւ մենք յիրաւի տեսնում ենք, որ բռնի ուժը իր դերն է ունեցել բոլոր պատմական շրջաններում, բոլոր ծանրակշիռ յեղաշրջումների մէջ...

Մարդկութիւնը վաղուց արդէն ընտելացել է այդ բռնի ուժի կիրառութեանը՝ թէ բացասական, թէ դրական մտքով։ Անշուշտ, չը նայած այդ բազմադարեայ ու հրահանդիչ փորձին, այսօր դարձեալ գտնւում են խոհեմ, բարեպաշտ դէմքեր, ի պաշտօնէ և ի շահէ“ խաղաղասէրներ, որոնք շարունակ որոտում են յեղափոխական բռնութեան ոկրզբունքի դէմ, հռչակում են այն, իբրև անբնական ու անբարոյական, ջատագովում են խաղաղ, անարիւն էւոլիւսիօնը (հակառակ ռէվոլիւսիօնին), իբրև միակ և գերազանցապէս բնականը ու բարոյականը։ Դրանք „առաքինի“ բուրժուաներն են, որոնք մի ժամանակ կատաղի յեղափոխականներ էին, ռումբի ու արիւնի ջատագովներ, երբ հարկաւոր էր վայր գլորել աւատական բռնապետութիւնը և հաստատել նրա աւերակների վրայ իրենց սեփական, բուրժուական իշխանութիւնը։ Այժմ նրանք խելօքացել, խոհեմացել են, որովհետև մի նոր դասակարգ է բարձրացել—չորրորդ դասակարգը — որ սպառնում է իր հերթին վայր գլորել բուրժուաների տիրապետութիւնը. այժմ այլ ևս բռնի յեղափոխութիւնները ձեռնտու չեն փողի ու պերճանքի դասակարգին և նա գարշում է բարիկադներից, արիւնից, հռչակում է իր գիտնական փաստաբանների բերանով, թէ ռէվոլիւսիօնը, բռնի, արիւնոտ յեղափոխութիւնը անբնական է, թէ նա հակասում է բնութեան օրէնքին, թէ „բնութիւնը չի սիրում ոստիւններ“, թէ ամեն բան նրա մէջ—գործարանաւոր ու անգործարան աշխարհներում, գետնի տակ ու գետնի երեսին, տիեզերքի անհունութեան մէջ—ամեն բան իբր թէ ընթանում է սոսկ էւոլիւսիօնով, յամր ու անդուլ, աստիճանական բնաշրջումով...

Եւ սակայն, իրականութիւնը հակառակն է պնդում. նոյն բնութիւնը ժամանակ առ ժամանակ իր ցաւոտ ու խօլական թռիչքներով, երկրաշարժի, ծովաշարժի զարհուրելի տատանումներով, հրաբխային աւերիչ ժայթքումներով՝ գալիս է վկայելու, թէ որքա՞ն խախուտ ու ստայօդ է „էւոլիւսիօնի“ բուրժուազական ըմբռնումը։ Բնութիւնը ևս անում է թռիչքներ. անում է, անշուշտ երկարատև նախապատրաստական աշխատանքից յետոյ. պայթուցիկ նիւթերը ամբարւում են կամաց-կամաց ու հսկայական առատութեամբ և վրայ է հասնում մի վայրկեան, երբ այդ հանդարդիկ գործունէութիւնը կամ էւոլիւսիօնը, իր պաշտօնը կատարելուց յետոյ, տեղի է տալիս ռէվոլիւսիօնին, համայնաջինջ բռնկումներին... Նման այն բնական գործողութեան, որ կատարւում է... թռչնի ձուի մէջ. այդտեղ ևս կենսական նիւթը մթերւելով ու կամաց-կամաց կերպարանափոխւելով, մի վայրկեան է հասնում, երբ ձուի կեղևը յանկարծակի ճեղքւում է և բոլորովին նոր մի էակ, հիմնականապէս տարբեր ձուի բաղադրութիւնից՝ աշխարհ է գալիս ու շարժւում, ճչում... Ահաւասիկ դարձեալ մի „թռիչք“, մի ուշագրաւ ու ինքնատիպ „ոստիւն“ բնութեան մէջ։ Վարիկը, երկար իր որրանում սպասելուց, աստիճանաբար աճելուց, կազմակերպւելուց յետոյ՝ մէկէնմէկ հարւածում է, փշրում է կեղևը, որպէս զի կարողանայ ազատագրւել... Դա „բռնութեան“ վայրկեանն է. մօտաւորապէս նոյն եղանակով է աշխարհ գալիս և մարդ-էակը. նոյն եղանակովն են կատարւել մեծ մասամբ և մարդկային պատմութեան յեղափոխութիւնները,—այն տարբերութեամբ միայն, որ այնտեղ էւոլիւսիօնի, դարաւոր, աստիճանական գործողութիւնը կատարւել է մարդկային ջղերի ու մկանների վրայ, շարունակ հարւածելով. ցնցելով նրանց, շարունակ տոգորւելով ստրուկ ու տառապող ժողովուրդների մարտիրոսութեամբ, նրանց բողոքի աղաղակներով, նրանց յուսահատ հեծկլտոցներով...

Երկու գաղափարները ուրեմն, — էւոլիւսիօն և ռէվոլիւսիօն—իրար չեն հակասում, այլ լրացրում են։ Իսկանը հէնց էւոլիւսիօնն է. յեղափոխութիւնը հէնց նոր ծնունդի, նոր կարգերի այդ աստիճանական կազմակերպումն է հնի արգանդում։ Երբ այդ ծնունդի էական տարրերը, երբ նրա անհրաժեշտ օրգանները կազմ ու պատրաստ են,—յեղափոխութիւնը, կարելի է ասել, պատրաստ է արդէն. մնում է հասցնել վերջին հարւածը, որ կարող է լինել կամ մի արիւնոտ ու երկարատև կատաստրոֆ,—ինչպէս եղել է ամենից յաճախ—կամ թէ մի խաղաղ ու յաղթական ժեստ, որ նոյնպէս դիտւել է պատմութեան ընթացքում, և պիտի դիտւի, հաւանականօրէն, նաև ապագայում։

Յեղափոխութիւնը բռնութեան մէջ չէ։ Դա մի տարածւած նախապաշարմունք է, որի համեմատ „ռէվոլիւսիօն“, յեղափոխութիւն ասելով, հասկանում են անպատճառ՝ ռումբ ու պատնէշ, արիւն ու արհաւիրք։ Ճիշտ է, խիստ յաճախ, ինչպէս շեշտեցինք, քաղաքական վերիվայրումները ուղեկցւել են այդ արհաւիրքներով, բայց նրանք չեն „յեղափոխութիւն“ գաղափարի ծուծը, էութիւնը։

Ի՞նչ է յեղափոխութիւնը։ Խստօրէն տրամաբանելով, դա այն գործողութիւնն է, որի ընթացքում քաղաքական դեկը որևէ երկրի մէջ մի դասակարգի, մի տարրի ձեռքից խլւելով, անցնում է մի նոր դասակարգի, նոր տարրի ձեռքը։ 1789-ի Յեղափոխութիւնը՝ բուրժուազիայի յեղափոխութիւնն էր. գալոց մեծ վերիվայրումը կը կոչւի պրոլետարիատի կամ աշխատաւորութեան յեղափոխութիւն. և նա առաջ կը գայ միմիայն այն դէպքում, երբ աշխատաւոր դասակարգը կը խլէ բուրժուազիայից քաղաքական իշխանութիւնը, տէր կը դառնայ երկրի ճակատագրին։ Ղեկի, իշխանութեան այդ փոխադրութիւնն է, որ գիտական ճշգրիտ լեզուով անւանւում է յեղափոխութիւն և ոչ այն միջոցները — ռմբաձգութիւն, հրդեհումներ ու արիւնհեղութիւններ — որոնք յաճախ պէտք են եղել՝ քաղաքական ուժի այդ փոխանցումը կատարելու համար։ Յաճախ—բայց ոչ միշտ։ Յեղափոխութիւններ՝ մեր ձևակերպած որոշումով եղել են և կարող են լինել նաև առանց կատաստրոֆների ու արիւնահեղ ընդհարումների։ Երբ ասում են „Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւն“, հասկանում են գլխաւորապէս այն եղակի ու հանդիսաւոր վայրկեանը, երբ—1789 անմոռանալի թուականում—խաղաղ կերպով, առանց արիւնի ու ցնցումների գումարւեց Սահմանադիր ժողովը և իբրև մի բոլորովին նոր տարր, իբրև մի նոր դասակարգ—երրորդ դասակարգը (tiers état)—իբրև բուն ազգային ներկայացուցչութիւն իր ձեռքն առաւ Ֆրանսիայի ղեկավարութիւնը։ Մեր աչքերի առջև, մօտաւորապէս նոյն եղանակով, այսինքն խաղաղ մի ժեստով առաջ եկաւ օսմանեան յեղափոխութիւնը, որ արդէն եօթ ամսւայ կեանք ունի և խոստանում է յարատևել։

Իսկ միւս կողմից՝ կարող են լինել—շատ յաճախ—երկարատև ընդհարումներ, խիզախ, արիւնալի ճակատամարտներ, առանց ունենալու իբրև անմիջական հետևանք—„յեղափոխութիւնը կամ իշխանութեան փոխադրութիւնը“։

Բռնակալական երկրներում, անշուշտ, այդ երկարատև ու արիւնալի տագնապները, անվերջ ու խիզախ կռիւներն ու դաւադրութիւնները ունին իրենց գոյութեան խորունկ պատճառն ու իրաւունքը։ Յեղափոխական մարտիկի համար այդ երկրներում ուրիշ ելք չը կայ, բայց եթէ ցնցող զոհաբերութիւններով աստիճանաբար յեղաշրջել ժողովրդային հոգեբանութիւնը և հարթել ուղին դէպի վերջնական ժեստ-հարւածը... Այդպէս էր նախապատրաստւած և օսմանեան

յեղափոխութիւնը։ Նրա „էօլիւսիոնը“ յղփացած է ժողովուրդների արիւնով...

Այլ բան է ազատ, սահմանադրական երկրներում, ուր օրէնքը, խօսքի, մամուլի ազատութիւնը հնարաւորութիւն են տալիս սոցիալիստական քարոզիչներին՝ արծարծելու իրենց դաւանանքը, տարածելու այն ժողովրդական բոլոր խաւերում, կազմակերպելու և պատրաստելու սոցիալական յեղափոխութեան համար։ Այստեղ ևս, հարկաւ, կապիտալի ու աշխատանքի փոխադարձ մաքառումների մէջ երբեմն անխուսափելի են ուժգին, ցաւոտ ընդհարումները, և բռնի միջոցներին թերևս դեռ մեծ տեղ է վերապահուած ապագայում, բայց այստեղ այդ բռնի միջոցները և արիւնոտ զոհաբերութիւնները չեն կարող ընդունելի, իբրև դաւանանք, իբրև մշտական, սիստեմատիկ գործելակերպ։

Այդպէս են, սակայն, ըմբռնում յեղափոխական սինդիկալիստները։ „Բռնի միջոցների“ պաշտամունքը նրանց շրջանում հանում է մի տեսակ կուապաշտութեան։ Յեղափոխութիւնը նրանց աչքում հէնց այդ բռնի հարուածների մէջ է, որոնք պիտի տեղան ամեն առթիւ, ըստ կարելոյն յաճախ և ըստ կարելոյն աղմկալի ու արիւնալի։ Այսօր մի բուռն կտրիճներ ժողովրդական մի ցոյցի միջոցին գրոհ կըտան ոստիկանութեան ու բանակի դէմ և կը կոտրեն ու կը կոտրուին. վաղը, բանւորական մի գործադուլի առթիւ, քաջերի մի այլ խումբ, կամ ինքը գործադիր բանւորութիւնը ատրճանակի որոտումներով կ'որոշէ լուծել իր վէճը կապիտալիստների հետ, կը կործանէ մեքենաները, կը փճացնէ ապրանքը (sabotage) և զինուած ուժով կը փորձէ դիմադրել բուրժուազիայի պաշտպան զօրքերին։ Եւ այդպէս շարունակ, մինչև որ աշխատաւոր դասակարգը, աստիճանաբար մարզուելով կուի կրկէսում, աստիճանաբար ընտելանալով վառօդի հոտին ու ռազմի աղաղակներին, միշտ աւելի և աւելի վառուելով ատելութեամբ ու վրէժխնդրութեամբ՝ կը հասցնէ վերջապէս իր հակառակորդին մահացու հարուածը...

Տարաբախտաբար, բռնի միջոցների այդ մոլեռանդ ու սանձարձակ պաշտամունքը մինչև օրս տալիս է միայն ազատաւոր հետևանքներ. „խիզախների“ յեղափոխական շարժումները դառնում են յաճախ յետադիմութեան, ռեակցիայի շարժումներ։ Մենք քիչ առաջ յիշատակեցինք սինդիկալիստական վտանգաւոր մեթոդի ձախորդութիւնները Իտալիայում։ Նոյն հետևանքն ունեցաւ նա և Ֆրանսիայում, ուր վերջերս մի շարք անմտած ու անհաւասար ընդհարումների մէջ, բանւորները, սինդիկալիստ ու անիշխանական պարագլուխների առաջնորդութեամբ սլացան զօրքի դէմ և ներկեցին ընդհարման դաշտը իրենց սեփական արիւնով։ Դա դեռ բաւական չէր։ Առաջ եկան մի շարք ճնշող միջոցներ արհեստակցական միութիւնների դէմ, խմբական ձերբակալութիւններ ու բանտարկումներ... Ամեն մի այդպիսի փորձ „յեղափոխական սինդիկալիստների“ կողմից, կրակի հետ խաղալու ամեն մի այդպիսի միամիտ թռիչք ուժեղացնում է ռեակցիային, քաջալերում է կապիտալիստներին, յետ է մղում հանրային կարծիքը և ժողովրդական համակրութիւնը՝ սոցիալիզմից...

***

Սինդիկատները, արհեստակցական միութիւնները, իրենք ևս, վերջապէս, զգացին վտանգը և ահա նրանց մէջ սկսում է ռեակցիա, հակազդեցութիւն։ Յեղափոխական սինդիկալիզմի երկու հայրենիքում—Ֆրանսիայում և Իտալիայում—բանւորական ճնշող մեծամասնութիւնը, միացած սոցիալիստ քաղաքական կուսակցութիւններին՝ սկսում է սանձահարել խիզախ ու արիւնամոլ „փոքրամասնութեան“ ախորժակները։ Դժգոհութիւն ու բողոքը աճում են մանաւանդ այդ փոքրամասնութեան հակազգայնական ու հակամիլիտիրական վտանգաւոր ծայրայեղութիւնների դէմ, որոնք առանձնապէս նպաստում են յետադիմական հոսանքներին և թուլացնում սոցիալիստական կռիւը։ Անցեալ հոկտեմբերին (1908) Մարսէլում և Տուլուզում իրար ետևից տեղի ունեցած Ֆրանսիական սոցիալիզմի ու սինդիկալիզմի համագումարներում՝ ողջամիտ տարրերը յաղթանակեցին. դատապարտուեց՝ մասնաւորապէս Տուլուզի սոցիալիստական ընդհանուր, ազգային համաժողովում, յախուռն ապստամբութիւնների սիստեմը և հակամիլիտարիզմի ծայրահեղ հոսանքը։ Գեդի, Ժորէսի ու Վայանի կողմնակիցները համերաշխ գտնուեցին սինդիկալիստական ամենարձակութեան այդ հանդիսաւոր դատապարտման մէջ։ Տուլուզի կոնգրէսը ճնշող մեծամասնութեամբ որոշեց, որ սոցիալիստական կուսակցութիւնը, լինելով հանդերձ գերազանցապէս յեղափոխական մի մարմին, ձգտելով հանդերձ դէպի ժամանակակից կարգերի հիմնական լիակատար յեղաշրջումը, դարձնում է իր տակտիկի ծանրութեան կենտրոն՝ հանդարտ, կազմակերպական ու բարենորոգչական աշխատանքը, տնտեսական մասսային պայքարը միացած քաղաքական, պարլամենտական պայքարի հետ։ Սոցիալիզմը հռչակեց ինքզինքը, որպէս կեանքի ու շարժման կուսակցութիւն, կանգնած իրականութեան հաստատուն հողի վրայ, հեռու սինդիկալիստական հապճեպ ու վտանգաւոր մարզանքներից, կեղծ-յեղափոխական, անիշխանական բառամոլութիւնից։ Տուլուզի որոշումը հրաւիրում է պրոլետարիատին, աշխատաւոր դասակարգին՝ շարունակական, անդուլ ու կազմակերպուած գործունէութեան—թէ անուղղակի և թէ ուղղակի, անմիջական. նա չի հրաժարւում պրոլետարական պայքարի և ոչ մի ձևից, նա ծանրանում է հարստահարուած բանւորութեան ուրոյն ճիգերի անհրաժեշտութեան վրայ, շեշտում է գործադուլների ահագին կարևորութիւնը, թելադրում է միայն, որ գործադուլը, ինչպէս և կուի իւրաքանչիւր այլ ձև՝ առաջ տարուի որոշ մեթոդով և հեռատես ու շրջահայեաց խելամտութեամբ, առանց անպատեհ բռնկումների ու արիւնհեղութիւնների, ինչպէս այդ տեղի ունեցաւ Դրավելում, Վիլնեով Սէն Ժորժում և ուրիշ վայրերում։ Տուլուզի որոշումը—որ երկար ժամանակ վարիչ-ուղեցոյց կը հանդիսանայ Ֆրանսիայի միացեալ սոցիալիստական կուսակցութեան համար—մեծ տեղ է տալիս սինդիկատների ու պարլամենտական գործունէութեան հետ նաև կոօպերատիվ (գործակցական) շարժումին։ Համագումարի ձևակերպութեամբ՝ „Արհեստակցական և Գործակցական միութիւնները (Syndicats et Coopératifs) հանդիսանում են անհրաժեշտ տարրեր հասարակական կերպարափոխութեան համար“ (éléments nécessaires à la transformations sociales)—պայմանով միայն, որ գործեն ներդաշնակ, միաբան ճիգերով և ձեռք ձեռքի տուած սոցիալիստական մտաւորականութեան հետ, սոցիալիզմի պարլամենտական հատուածների հետ։

Զափաւոր հոսանքը շեշտում է նոյնիսկ ֆրանսիական սինդիկալիզմի հզօր միջնաբերդում — Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութեան մէջ։ „Զափաւոր“ խօսքը ներկայ դէպքում բնաւ համանիշ չէ պատեհապաշտութեան, հակայեղափոխութեան. ընդհակառակը. այդ մեծ մարմինը կամաց-կամաց ազատւում է անիշխանական կամ այսպէս կոչուած „անարխո-սոցիալիստ“ (կէս անիշխանական, կէս-սոցիալիստ) գործիչների ազդեցութիւնից, որոնք իրենց անկարգապահ ու անժամանակ ժեստերով յաճախ ծանր փորձութիւնների են ենթարկում պրոլետարիատի կաշին ու դատը։ Վերջին քարտուղարական ընտրութիւնների միջոցին, Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութեան ծոցում՝ այդ „անարխո-սոցիալիստ“ թեւը պարտութիւն կրեց և կազմակերպութեան ղեկն անցաւ չափաւորների ձեռքը, որոնց ներկայացուցիչն է նորընտիր քարտուղար Նիիլը։

Որքա՜ն հրահանգիչ է այդ „չափաւոր“ հոսանքի աջողութեան համար քիչ առաջ Պարիզում բռնկուած պօստհեռագրական պաշտօնեաների ընդհանուր գործադուլը, որ գրաւեց անմիջապէս Ֆրանսիայի բոլոր մեծ քաղաքները։ Տասհազար պաշտօնեաներ մղեցին տասնօրեայ չափ մի կռիւ, որպիսին չէր տեսնուած հռչակաւոր „Կոմմունայի“ օրերից ի վեր։ Այդտեղ չը կային արիւնահեղ ընդհարումներ ու պատնէշներ. կար, սակայն, այն մեծ ու ծանրակշիռ իրողութիւնը՝ որ պետական պաշտօնավարութեան մի կարևոր ճիւղ ապստամբում էր հէնց պետութեան դէմ, ամբողջ 10 օր անդամալուծում երկրի կեանքը—

առևտուր, արդիւնաբերութիւն, արտաքին յարաբերութիւններ։ Դա իր էութեամբ կատարելապէս յեղափոխական մի երևոյթ է, մի քայլ, որին անշուշտ կը հետևեն պետական ծառայութեան այլ ճիւղերի պաշտօնեաները, կազմակերպուած ուսուցչութիւնը և այլն։ Ամբողջ պօստային աշխատաւորական բանակը ոտքի էր կանգնել և ներդաշնակ ու կարգապահ շարքերով մղում էր իր խաղաղ մենամարտը պետական ահագին մեքենայի դէմ. նրա պահանջները օրինաւոր էին, հասարակաց կարծիքն էլ նրանց հետ էր—և նա յաղթեց։ Այլ բան կը լինէր, եթէ այդ փոքրիկ բանակը, ականջ դնելով Էրվէների քարոզներին, դիմէր բռնի միջոցներ...

Փոխուում, էւոլիւսիօնի է ենթարկուում և Իտալիայի սինդիկալիզմը։ Այնտեղ ևս նա ունի իր միջնաբերդը՝ „Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութիւնը“ (կենտրօնական կայանը՝ Միլանում), ուր նոյնպէս վաղուց ի վեր բուն են դրել անիշխանականները։ Նրանք սովորաբար մնում են պրօլետարիատի շարքերը չէզոքութեան քարոզով, յորդորում են բանւորներին՝ անկախ մնալ բոլոր քաղաքական հատուածներից ու վարդապետութիւններից, բայց իրօք քիչ են յարգում այդ չէզոքութիւնը, մատնում են վաղ թէ ուշ իրենց կուսակցական, հատուածամոլ ոգին, եռանդով արծարծում են անիշխանականութեան գաղափարն ու գործելակերպը։

Իտալիայում ևս, ինչպէս արդէն յիշատակեցինք նախորդ էջերում, այդ գործելակերպը մի շարք աղէտներ է բերել բանւոր դասակարգին, յարուցել է կատաղի ըէակցիա և ընդհանուր դժգոհութիւն։ Անցեալ սեպտեմբերին, Մօդանում գումարուած իր համաժողովի մէջ իտալական սինդիկալիզմը որոշեց ահագին մեծամասնութեամբ փոխել իր տակտիկը, հրաժարուել անմիջական գործողութեան, action directe-ի ծայրայեղութիւններից, ընդունել պարլամենտարիզմի ու բանւորական օրէնսդրութեան առաջնակարգ կարևորութիւնը և գործել առհասարակ սոցիալիստական կուսակցութեան հետ թև թևի տուած։

Դա առողջ դատողութեան յաղթանակն է երկու մեծ, աղդակից ու յեղափոխական ժողովուրդների մէջ. և դա գրաւականն է արագ ու անկաշկանդ յառաջխաղացութեան։ Միևնոյն նպատակին ձգտող բոլոր այլազան հոսանքները միացած մի ընդհանուր որարշաւ յորձանքի մէջ—այդպէս է ճշմարիտ, համաշխարհային ու ամբողջական սոցիալիզմի (socialisme intégrale) հրահանգը։ Սինդիկալիզմը՝ մենակ, կղզեացած, անզօր է, անգամ հերոսական իր խոյանքների մէջ։ Արհեստակցական միութիւններ, գործակցական ընկերութիւններ (կօօպերատիվներ), քաղաքներում ու գիւղերում, մտաւորականութիւն, պարլամենտական սոցիալիստ հատուածներ—բոլորը պէտք է միանան ազատագրական շարժման աւազանում, պահպանելով իւրաքանչիւրը իր որոշ տեղն ու անկախութիւնը։ Այդ նոյն իմաստով ձևակերպեց իր որոշումը նաև միջազգային սոցիալիզմի գերագոյն ատեանը, իր վերջին համագումարի մէջ, Շտուտգարտում (1907 թ. օգոստոս), ուր տենդային վիճաբանութեան ենթարկուեց այդ փշոտ հարցը—ինչպէ՞ս արդեօք հաստատել լաւագոյն կենցաղաձևը (modus vivendi) պօլիտիկի (քաղաքականութեան) և սինդիկալիզմի միջև, կամ ի՞նչ տեսակ յարաբերութիւններ սահմանել քաղաքական սոցիալիստ կուսակցութիւնների և զուտ արհեստակցական, բանւորական միութիւնների միջև. թողնե՞լ արդեօք, որ այդ վերջինները բոլոր դէպքերում, բոլոր ծանրակշիռ խնդիրներում գործեն ինքնագլուխ, իրենց բացարձակ ազատութեամբ ու պատասխանատուութեամբ — ինչպէս պահանջում էին յեղափոխական սինդիկալիստները—թէ՞ սահմանել սերտ համերաշխ գործակցութեան կապեր՝ երկու տարբեր սոցիալիստական մարմինների միջև, յանուն ընդհանուր դատի աջողութեան։ Շտուտգարտի կօնգրէսը երկար ու տաք վէճերից յետոյ, կանգ առաւ գրեթէ միաձայն՝ վերջին որոշման վրայ։ Ահաւասիկ այդ որոշումը.

„Պրօլետարիատին իր մտաւոր, քաղաքական ու տնտեսական ստրկութիւնից կատարելապէս ազատելու համար՝ կուսի երկու ձևերը—քաղաքականը և տնտեսականը—անհրաժեշտ են հաւասարապէս։ Եթէ Սոցիալիստ Կուսակցութեան գործունէութիւնը մղում է առաւելապէս պրօլետարիատի քաղաքական կուսի ասպարէզում,—ապա սինդիկատային (արհեստակցական) գործունէութիւնը շեշտւում է գլխաւորապէս բանւոր դասակարգի տնտեսական կուսի աշխարհում։ Ուստի կուսակցութիւնները *) և սինդիկատները հաւասարապէս ծանրակշիռ աշխատանք ունին կատարելու՝ պրօլետարիատի ազատագրական պայքարի մէջ։

„Իւրաքանչիւրը երկու մարմիններից ունի իր բնութեանը յատուկ աշխարհը, ուր նա պիտի վարէ իր գործունէութիւնը կատարելապէս ուրոյն ձևով։ Բայց կայ կուսի մի ուրիշ ու հետզհետէ լայնացող ասպարէզ, ուր արդիւնաւէտ գործ տեսնել հնարաւոր է միայն կուսակցութեան ու սինդիկատի փոխադարձ համաձայնութեամբ ու գործակցութեամբ։

„Հետևապէս, պրօլետարական կուսը այնքան աւելի աջողութեամբ ու արդիւնաւորութեամբ առաջ կը մղի, որքան աւելի սերտ կապերով կապուած լինին սինդիկատներն ու կուսակցութիւնը, առանց վտանգելու արհեստակցական շարժման անհրաժեշտ միութիւնը։

„Կօնգրէսը յայտարարում է, որ աշխատաւոր դասակարգի շահը կը պահանջէ՝ ստեղծել բոլոր երկրներում սերտ յարաբերութիւններ սինդիկատների ու կուսակցութեան միջև, դարձնել այդ յարաբերութիւնները մշտնջենաւոր։

„Կուսակցութիւնը և սինդիկատները պէտք է աջակցեն իրար բարոյապէս և պէտք է ի գործ դնեն իրենց պայքարի մէջ միմիայն այնպիսի միջոցներ, որոնք կարող են նպաստել պրօլետարիատի ազատագրութեան։ Երբ հայեացքների տարբերութիւն է առաջ գալիս երկու կազմակերպութիւնների մէջ՝ որոշ մեթօդների կիրառման նպատակայարմարութեան առիթով՝ երկուսը միասին պիտի քննեն խնդիրը և մշակեն համաձայնութիւն։

„Արհեստակցական ընկերութիւնները, սինդիկատները այն ժամանակ միայն լիովին կը կատարեն իրենց պարտաւորութիւնը բանւորական ազատագրութեան պայքարի մէջ, երբ նրանց գործունէութիւնը ներշնչուած կը լինի ճշմարիտ սոցիալիստական ոգով։ Կուսակցութիւնը պարտաւոր է օգնել սինդիկատներին՝ կուսելու յանուն բանւոր դասակարգի սոցիալական վիճակի բարձրացման ու բարելաւման։ Իր պարլամենտական պայքարի մէջ, Կուսակցութիւնը պարտաւոր է հրապարակ հանել սինդիկատային պահանջները, իրենց բովանդակ ծաւալով։

„Կօնգրէսը յայտարարում է, որ կապիտալիստական արդիւնաբերութեան ձևի առաջադիմութիւնը, արդիւնագործութեան միջոցների յարաճուն կենտրօնացումը, գործատէրերի միշտ աւելի և աւելի ծաւալուն միութիւնները, մասնաւոր արհեստների շարունակ ուժգնող կախումը բուրժուական հասարակութեան ամբողջութիւնից — այդ բոլորը կ'ընկճեցնէ բանւորական սինդիկատներին, կը հասցնէ նրանց ուժասպառութեան, եթէ նրանք (սինդիկատները) զբաղուին բացառապէս զուտ արհեստի շահերով (interets de métier), եթէ կանգնեն արհեստակցական եսամոլութեան հողի վրայ և ընդունեն „աշխատանքի ու կապիտալի ներդաշնակութեան“ տեսութիւնը։

*

Սինդիկատներ և կուսակցութիւն, բանւորութիւն և սոցիալիստ մտաւորականութիւն՝ միացած, թև թևի տուած, յանուն ընդհանուր իդէալի, յանուն ամբողջ հարստահարուած մարդկութեան ազատագրման—այդ է ելքը։ Եւ դա իրօք հին հրահանգ է, հին դրութիւն՝ սոցիալիզմի թէ տեսական մարզանքների, թէ գործնական պայքարի մէջ։ „Նոր հոսանքը“, „յեղափոխական սինդիկալիզմը“ վերջիվերջոյ ստիպուած կը լինի համակերպել այդ հին, փորձուած իմաստութեան։ Նա ստիպուած կը լինի վերջիվերջոյ դուրս գալ անձուկ իր սահմաններից, արհեստակցական էգօիզմից, թողնել անձուկ իր ըմբռնումը սոցիալիզմի առաքելութեան, թողնել կուսի վտանգաւոր ծայրայեղութիւնները, նրա փոքր

*) „Կուսակցութիւն“ բառով հասկացւում է սովորաբար սոցիալիստական քաղաքական մարմինը եւ զորօն մտաւորականութիւնը։

ինչ նահապետական, կոպիտ ձևը, թողնել նաև արիւնի իր անօգուտ պաշտամունքը, գետնատաքած երկրպագումը „խիզախ, արի փոքրամասնութեան“, նա ստիպուած կը լինի՝ հանրային, ժողովրդական ճնշման տակ՝ չափաւորել կատաստրոֆային ու անիշխանական իր տենդը, իր երազները ընդհանուր „հմամադարման“ գործադուլի արագ ու դիւրին յաղթութեան մասին—և կը գրկէ վաղ թէ ուշ ընդհանրական, ամբողջական սոցիալիզմի դատը։

Սոցիալիզմի իդէալը՝ ժողովուրդների բովանդակ ազատագրութեան իդէալն է. իսկ այդ հոյակապ նպատակը— կրկնենք դարձեալ մեր յանկերգը — չի կարող իրագործուել կղզիացած մի շարժումով, անակնկալ, թեկուզ և հզօր, մի հարուածով,—ընդհանուր մի գործադուլով կամ պարլամենտական մեծամասնութեան մի ժեստով... Երբ մի օր ապագայում, այս կամ այն երկրի պարլամենտի մէջ, ժողովրդական ձայնատուութեան մի յորձանքով, սոցիալիստները կազմեն ճնշող մեծամասնութիւն,—նրանք չեն կարող տիրանալ այդ երկրի ճակատագրին, տակնուվրայ անել ամեն ինչ, չեն կարող սահմանել սոցիալիստական հաւասարութեան նոր կարգերը, եթէ աշխատաւոր ընդհանրութիւնը, պրոլետարիատը պատրաստ չը լինի բուրժուազիային ըստ ամենայնի փոխարինելու, եթէ նա բաւականաչափ հասունացած չը լինի՝ այդ նոր կարգերն իրագործելու, „մարսելու“։ Ահա թէ ինչու, սոցիալական ռէվոլիւսիոնից, յեղափոխութիւնից առաջ՝ անհրաժեշտաբար ու պատշաճ ծաւալով պիտի կատարուի սոցիալական էվոլիւսիոնը (զարգացումը)—մի անհուն աշխատանք պրոպագանդի, կազմակերպման, ռեֆորմային օրէնսդրութեան, կրթութեան ու դաստիարակութեան...

„Անակնկալ հարուածների ժամանակն անցել է—յիշենք Էնգելսի նշանաւոր խոստովանութիւնը մահից առաջ.— այնտեղ, ուր հասարակական բովանդակ կերպարանափոխման հարց է դրուում, այնտեղ իրենք ժողովրդական զանգուածները պիտի մասնակցեն և պիտի հասկանան, թէ ինչի համար են կռիւ մղում։ Իսկ որպէս զի նրանք հասկանան իրենց անելիքը, անհրաժեշտ է երկարատև ու անդադրում աշխատանք“...

Պրոլետարիատը պէտք է առաջնայ դանդաղօրէն, յամառ, դժնդակ պայքարի մէջ, դիրքից դիրք անցնելով, նուաճումից դէպի նուաճում։ Երբ նա կ'ազատուի աստիճանաբար սև ու խեղդիչ թշառութեան ճիրաններից, երբ բանուորական օրէնսդրութեան կիրառումով՝ նա հետզհետէ կը կազդուրուի ֆիզիկապէս և հոգեպէս, երբ կրթութեան բարիքները տարածելով, ընդհանրանալով՝ կ'աճի նրա քաղաքակրթական պաշարը, հմտութիւնը, կը լայնանան նրա մտաւոր հորիզոնները, երբ նա կը դառնայ քաղաքական ու հասարակական պատկառելի ուժ, ընդունակ վարելու կեանքի վիթխարի, բազմակնճիռ մեխանիզմը, երբ ռազմավարական հաստատութիւնները—Հանրապետութիւն, „Ռէֆերենդում“, „Ժողովրդական Նախաձեռնութիւն“, Ժողովրդական զօրասիստեմ (milices) և այլն և այլն—կը կատարելագործուին ու կը կ'արմատանան մասսաների գիտակցութեան մէջ. երբ արհեստակցական ու գործակցական միութիւնները, սինդիկատներն ու կոոպերատիվները կը ցանցապատեն ամենուրեք, կը ճիւղաւորուին թէ արդիւնաբերական մեծ կենտրոններում և թէ գիւղական լայնարձակ հորիզոններում, երբ սոցիալիզմը անդուլ ու մեթոդիկ քարոզչութեամբ իր գիրկը կը հրապուրէ խեղճ ու տգէտ ժողովրդական ընդհանրութիւնից միլիոններ և միլիոններ, կը հաստատէ իր հմայքը կեանքի բոլոր ասպարէզներում, „կը վարակէ“ նաև զինուոր քաղաքացիներին, երբ պրոլետարիատի յարաճուն ազդեցութեան տակ, նրա քաղաքական պատգամաւորութեան ճիգերով՝ կը կատարուի երկրի այլ և այլ խոշոր, ընդարձակ գործառնութիւնների պետականացումը կամ ազգայնացումը— երբ նա մասնակի նուաճումներով կը բառնայ գէթ մի քանիսը մեծագոյն խոչընդոտներից, կը թունաւորէ կապիտալիզմը իր կենսական աղբիւրների մէջ, կը դառնայ ահեղ մի գործօն թէ պարլամենտում ու քաղաքային խորհրդարաններում, թէ նրանցից դուրս, հզօր իր թւով ու օրակով, գիտակ իր վեհ առաքելութեան, տոգորուած իր ջինջ իդէալով—այն ժամանակ Սոցիալական Յեղափոխութիւնը կը պայթի ապահովաբար, առանց նոյնիսկ արհաւիրալի կատաստրոֆների, այն ժամանակ ընդհանուր, համատարած գործադուլը ևս կարող է դուրս գալ զառանցանքների աշխարհից, դառնալ կենդանի իրականութիւն... այն ժամանակ՝ էլ ոչ մի ուժ — երկրաւոր կամ երկնային — չի դիմանայ աշխատաւորական լեգէօնների յորձանքին...

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

ՆԻԻՐԻՈՒՄ Է ՌՇԵԱՏԱՒՈՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

I

„Մենք կը յաղթենք ոչ միայն այն պատճառով, որ ուժ ենք, այլ և որովհետև մենք ենք կառուցանողը ճշմարտութեան ու արդարութեան կարգերի“։

Այդպէս էր ասում հռչակաւոր ռուս սոցիալիստ-յեղափոխական գրող, այժմ հանգուցեալ Պեսար Լավրով։ Եւ այդ խելացի, ճշմարիտ ու քաջալերող խօսքերը ոգի են տալիս իւրաքանչիւրին, ով դեռ չի յոգնել կուելու յանուն „ճշմարտութեան ու արդարութեան“ այդ կարգերի։

Ի՞նչ են այդ „կարգերը“ և ովքե՞ր են նրա կառուցանողները։

Ամբողջ ժամանակակից կեանքը—ստի և ապօրինութեան թագաւորութիւնն է։ Միլիոնաւոր մարդիկ աշխատում են առանց մէջքերը շտկելու և անցնում են իրենց օրերը սովի, ստրկութեան ու տգիտութեան մէջ, իսկ հազարաւոր երջանիկներ ոչ միայն վայելում են այդ միլիոնաւորների քրտինք-վաստակը, այլև պահպանում են նրանց, որպէս հլու իրաւազուրկ ծառաների։

Այդպէս չը պիտի լինի կեանքը „ճշմարտութեան ու արդարութեան“ կարգերի մէջ, այն կարգերի՝ որոնք բոլոր ժողովուրդների մօտ և բոլոր լեզուներով կոչւում են սոցիալիզմի թագաւորութիւն։

Այնտեղ մարդիկ այլևս բաժանուած չեն լինի—մի կողմից՝ հարուստների ու տէրերի, միւս կողմից՝ աղքատների ու ստրուկների։

Այնտեղ բոլոր հողերը, բոլոր հանքերը, գործարանները, կապիտալները, մեքենաները, աշխատանքի բոլոր գործիքները պիտի լինին սեփականութիւն ամբողջ ժողովրդի։

Այնտեղ ամենքը, բոլոր մարդիկ կ'աշխատեն ներդաշնակ ընկերակցութիւններով, համայնքներով, կ'աշխատեն յօգուտ բոլորի, և իւրաքանչիւրը պիտի ապրէ իր սեփական աշխատանքի արդիւնքով, պիտի վայելէ հաւասարապէս, եղբայրօրէն կեանքի բոլոր բարիքներն ու ուրախութիւնները, չը տեսնելով իր գլխի վրայ ոչ տէրերի արհամարհանքն ու ծաղրը, ոչ հարուստների իշխանութիւն, ոչ էլ կառավարութեան ապօրինութիւններ...

Ժողովուրդների մեծ կռիւը յանուն սոցիալիզմի, յանուն ազատ ու արդար հասարակական և տնտեսական կարգերի՝ մղւում է վաղուց ի վեր։ Վաղուց ի վեր — ահա արդէն կէս դար, եթէ ոչ աւելի—նա մղւում է և Ռուսաստանում, մերթ դադրում, մերթ վերստին

բորբոքում է։ Սկզբում այդ կռիւն առաջ տարան անհատները։ Ապա նոր կարգերի կառուցանողների թիւն աճեց արագութեամբ։ 3—4 տարի որանից առաջ սոցիալիստական կռիւը Ռուսաստանում պարզուել էր իր բոմանդակ ծաւալով, այժմ նա նորէն մեղմացաւ։ Ինչո՞ւ մեղմացաւ—պատճառները բազմատեսակ են։ Նրանցից մէկը—և խիստ կարևորը—հետևեալն է.

Իւրաքանչիւր կուսող պէտք է պարզ և ուղիղ ըմբռնէ, թէ ինչու համար է ինքը կուսում. պէտք է հիմնաւորապէս խորհէ, թէ ի՞նչ միջոցներով լաւագոյն է կուել, ինչ ճանապարհներով կարելի է ուղիղ հասնել նպատակին։ Դա բաւական չէ։

Իւրաքանչիւր կուսող պէտք է զգայ, որ իր գործը, իր վարած դատը արդար է, որ նա չի ղեկավարում շահախնդիր կամ այլ դիտաւորութիւններով, այլ սոսկ խղճի թելադրութեամբ։ Սակայն, այդ էլ դեռ բոլորը չէ։

Շատոնց ասուած է. „մէկ ծիծեռնակը գարուն չի բերի“։ Թող թէ առանձին անհատը միանգամայն ըմբռնում է իր կուի իմաստը և նրա միջոցները. թող թէ նա զգում է կատարելապէս իր դատի արդարութիւնը, սիրում է այն իր ամբողջ հոգով—միևնոյն է նա չի կարող դրական որևէ գործ անել, եթէ գործէ մենմենակ։ Յաղթանակը տանելու համար անհրաժեշտ է միաբան, ներդաշնակ աշխատանք շատ ու շատ կուսողների, որոնք բոլորն էլ հաւասարապէս գիտակից են իրենց գործի բանաւորութեան ու արդարութեան. անհրաժեշտ է միաբանութիւն՝ թէ մտքերի, թէ զգացումների և թէ գործողութիւնների մէջ։

Նոյնը—սոցիալիզմի պայքարի մէջ։ Պէտք է հասկանալ այն, հասկանալ թէ խելքով և թէ սրտով, թէ մտքով և թէ զգացումով։ Պէտք է հասկանալ միանգամ ընդմիշտ, ինչո՞ւմն է կայանում նրա ճշմարտութիւնը, ինչպէ՞ս ձեռք բերել „նոր կարգերը“, որ նա խոստանում է աշխատաւոր մարդկութեանը։ Պէտք է միաբանուիլ, պէտք է ձուլուիլ մէկ ամուր ու համերաշխ ընտանիքի մէջ՝ սոցիալիստական կուսի համար։ Իսկ այնտեղ, ուր բազմաթիւ մարդիկ միաբանուած գործում են համերաշխ՝ այնտեղ ամրապնդւում է և կամքը. այնտեղ աճում, հասունանում, և վերջապէս դուրս է ցայտում անդիմադրելի ցանկութիւնը՝ գնալ այն ուղղութեամբ, ուր մղում է խելքը և հրամայում է խիղճը... Ցանկութիւն՝ կուսելու նիւրական դատի համար, եթէ պէտք է նոյնիսկ մեռնելու։

Այո՛, գիտակցութիւնը, այսինքն ճիշտ ըմբռնումը այն նպատակի, որին ձգտում ես և այն միջոցների, որոնք լաւագոյնն են նպատակին հասնելու համար,—այդ գիտակցութիւնը մեծ ուժ է։ Ոչ պակաս մեծ ուժ է միաբանութիւնը։ Առանց դրանց կռիւը ընթանում է անկապ, ցան ու ցրիւ, առանց դրանց՝ յաղթանակը կարող է տարուիլ միայն պատահաբար և կարճ ժամանակով, մինչդեռ պարտութիւնը անխուսափելի է։

Գիտակցութիւն և միութիւն... Բայց կարո՞ղ ենք ասել արդեօք, թէ մեր մէջ շատ կար այդ „գիտակցութիւնից ու միութիւնից“ վերջին տարիներս, երբ ամբողջ Ռուսաստանը բռնուել էր ալէկոծութեամբ ու ապստամբութիւններով։ Եթէ ճշմարիտը խոստովանենք—ոչ, շատ քիչ։ Դեռ լաւ է, որ իւրաքանչիւր հազար մարդկանցից, որոնք իրենց համարում էին սոցիալիզմի մարտնչողներ, գոնէ մի հարիւր հոգի եղել են բաւականաչափ խելացիս, կարողացել են գլուխ հանել սոցիալիզմից, հասկացել են, թէ ինչ է նա և ուր է տանում։

Յամենայն դէպս, եղել է աւելի միութիւն,—այն էլ հազադէպ—քան գիտակցութիւն։ Ահա այդտեղ է մեր կրած ձախորդութեան պատճառներից մինը։ Ահա այդ պատճառով էլ ժողովրդի թշնամիները նորից գլուխ բարձրացրին, իսկ ինքը ժողովուրդը հանդարտուեց։

Գիտակցութիւն, միութիւն... Բոլորին պէտք են նրանք, բայց ամենից աւելի պէտք են աշխատաւոր ժողովրդին։ Առանց դրանց՝ նա չի դուրս գայ խեղճութիւնից, ստրկութիւնից ու խաւարից և չի մտնի նոր, բաղձալի թագաւորութեան ծոցը։ Չէ՞ որ հէնց նա ինքը, աշխատաւոր ժողովուրդն է, որ պիտի հրաշակերտէ այդ նոր թագաւորութիւնը։ Սակայն, տարաբախտաբար, իր տգիտութեան շնորհիւ, նա յաճախ չի կարողանում հասկանալ, թէ ո՞վ է իր բարեկամն ու իր թշնամին, ո՞րտեղ է ճշմարտութիւնը և որտեղ է սուտը, ինչի՞ց են առաջացել հասարակական չարիքները և ինչպէս վերջ դնել նրանց։

Եւ այդ հանգամանքը սարսափելի կերպով խանգարում է ազատագրութեան գործին, սաստիկ դանդաղեցնում է և նոր կարգերի կառուցումը։

Պարզ բան է, որ պէտք է բարձրացնել աշխատաւոր ժողովրդի գիտակցութիւնը, պէտք է հասկացնել, թէ ո՞րտեղ է լոյսն ու խաւարը, ո՞րտեղ է կորուստը և ո՞րտեղ փրկութիւնը։

Այդպիսի մի աշխատանք կատարել է մինչև օրս և այսօր էլ շարունակում է կատարել սոցիալիստական ինտելիգենցիան, մտաւորականութիւնը։ Նրա մասին էլ կը լինի մեր խօսքը։

II

Ի՞նչ է այդ սոցիալիստական ինտելիգենցիան *)։

Ի հարկէ ոչ ամեն մի ինտելիգենտ պաշտպան է մեր յիշատակած „նոր կարգերի“։ Ոչ ամենքն են սոցիալիստներ։ Կան, որ՝ թէև կրթուած ու ժողովրդական ցաւերին կարեկից՝ բայց դեռ չեն հասել մինչև նոր վարդապետութիւնը։ Դրանք շարունակ պտտւում են ժողովրդական թշուառութեան շուրջը, բայց թէ ո՞րտեղ է նրա արմատը և ինչպէ՞ս մի անգամ ընդմիշտ ոչնչացնել այդ թշուառութիւնը—գլուխ չեն հանում։

Ուրիշները կան, որոնք թէև ըմբռնում են նոր վարդապետութեան իմաստը, բայց չեն հաւատում նրա իրագործման։ „Բոլորը առակներ ու հնարքներ են, ասում են նրանք, ոչ մի այդ տեսակ „ճշմարտութեան ու արդարութեան թագաւորութիւն“ երբէք չի լինի երկրի վրայ, պէտք է մի կերպ կարկատել ժողովրդական թշուառութիւնը մերթ մէկ ծայրից, մերթ միւսից, իսկ շուտով հիմնականապէս, գլխի վայր դնել բոլոր տնտեսական ու հասարակական կարգերը—դատարկ միտք է. մեզնով չեն սկսել նրանք և մեզնով էլ չը պիտի վերջանան“։

Կան երրորդ տեսակի մտաւորականներ, որոնք սոցիա-

*) Լատինական „ինտելլեգո“ բառից, որ նշանակում է՝ հասկանում եմ, ըմբռնում եմ։

լիզմի մասին լսել անգամ չեն ուզում, որովհետև նրանց համար այդ սոցիալիզմը միայն չարիք ու պատուհաս է, որ սպառնում է վերջ դնել իրենց հարստութեան ու իշխանութեան, իրենց ձրիակեր ու շռայլ կենցաղին։

Բոլոր երեք տեսակի մտաւորականներն էլ—կրթուած մարդիկ են, բոլորն էլ գիտութիւն են սովորել, լուրջ գրքեր են կարդացել և ժողովրդի տառապանքների մասին էլ սիրում են երբեմն ճոռոմաբանել. բոլորն էլ կարծես թէ իսկական „ինտելիգենտներ“ են, բայց միևնոյն ժամանակ բոլորն էլ ոչ-սոցիալիստներ են. մէկը թերամտութեամբ, միւսը գուցէ չափազանց մեծ իմաստութեամբ, երրորդը իր շահախնդիր հաշիւներից դրդուած։ Սակայն, ամենից աւելի կատաղութեամբ սոցիալիզմի դէմ կռուում են—խօսքով ու գործով—նրանք՝ որոնց ձեռնտու չէ սոցիալիզմը. դրանք կապիտալիստներն են և բոլոր իշխանութիւն ունեցողները, որոնք այսօր, ներկայ տնտեսական ու հասարակական կարգերի մէջ ապրում են ազատ և ուրախ, այնքան ուրախ, որ աւելին պէտք էլ չէ։

Հետևո՞ւմ է արդեօք մեր ասածից, թէ բոլոր նրանք, որոնք տառապում են աղքատութիւնից ու զրկանքներից՝ սոցիալիստներ են։

Ի Հարկէ — ոչ։ Ի՞նչ կարող է լինել աւելի ծանր, քան աշխատաւոր գիւղացիների ու գործաւորների վիճակը։

Բայց շա՞տ կան նրանց մէջ ճշմարիտ սոցիալիստներ։

Ուրիշ հարց։ Պէ՞տք է արդեօք կարծել, թէ բոլոր նրանք, որոնք դուրս են գալիս ունևոր դասակարգերից—կալուածատէրերից, վաճառականներից — անպատճառ սոցիալիզմի թշնամիներ են և երբէք չեն կարող յարել սոցիալիստական գաղափարին։

Դարձեալ, ոչ։ Սոցիալիստները առաջ են գալիս ոչ միայն աշխատաւոր ժողովրդի շարքերից, այլ և հարուստ, ազնուական և այլ դասակարգերից։ Արդարև.

Դուք գուցէ գիտէք, ընթերցող, որ 35—40 տարի սրանից առաջ, հէնց Ռուսաստանի ազնուական դասից առաջ եկան բազմաթիւ ինտելիգենտ յեղափոխականներ, որոնք մտան ժողովրդի մէջ, որպէսզի բաց անեն նրա աչքերը, տեսնելու իսկական թշնամիներին, որպէսզի արծարծեն նրա մէջ յեղափոխութեան ու սոցիալիզմի գաղափարը և կազմակերպեն նրա կռիւը իշխանութեան ու կապիտալիստների դէմ։

Բայց դա մի նոր ազնուական ցեղ էր. նրանց կատակով անուանում էին „ապաշխարող ազնուականներ“։

Լինելով հարուստ մեծատունների զաւակներ՝ նրանք հասկացան, որ իրենց բովանդակ կրթութիւնը, ապահով կեանքը և վայելքները գնուած են խիստ թանկ գնով,— գիւղացու, մուժիկի անբախտութեամբ ու տանջանքներով։ Նրանք տեսան, որ իրենց շուրջը թագաւորում է խեղճութիւնն ու խաւարը, մինչդեռ իրենց սեփական կեանքը անցնում է պերճանքի, զւարճութեան և լիակատար անգործութեան մէջ. խիղճը ձայնեց նրանց մէջ. ամօթ զգացին հանդէպ այն բոլոր բարիքների, որոնք իրենց բաժին էին ընկել ոչ շնորհիւ իրենց արժանիքի ու աշխատանքի, այլ միայն այն պատճառով, որ ծնուել են ազնուական տաքուկ տներում, — ոչ գեղջկական ու բանուորական խրճիթների մէջ։ Եւ նրանց հոգիները խռովուեցին, ալէկոծուեցին. նրանք հարց տուին. „արդո՞ր բան է արդեօք՝ շայտ կեանք վարել ուրիշի հաշուով։ Ազնի՞ւ բան է արդեօք՝ լինել ժողովրդի անվճար պարտատէր,— այն ժողովրդի, որի աշխատանքով պահպանում էր այդ մարդկանց կեանքը։ Եւ այդ հարցումին մէկ պատասխան միայն կարող է լինել.

—„Ո՛չ, անարդար է“։ „Ո՛չ, անազնիւ է“։

Եւ քանի որ դա անարդար ու անազնիւ էր, ուստի մէկ ելք էր միայն մնում—աշխատել յօգուտ ժողովրդի, օգնել նրան խորհրդով ու գիտելիքներով, պաշտպանել նրան գիշատիչներից ու հարստահարիչներից, ձգտել բարեփոխելու նրա դառն ճակատագիրը, ուսուցանել նրան՝ սոցիալիզմը։ Եւ նրանք այդպէս էլ արին... Սլացան դէպի ժողովրդական տանջանքների ովկեանը և անվերջ նահատակուեցին ու նահատակուեցին...

Դրանք ինտելիգենտ-սոցիալիստներ էին և եկել էին, ինչպէս տեսաք, կալուածատէրերի ու մեծատունների դասակարգերից։

„Ապաշխարող ազնուականների“ հետ միասին, յանուն ժողովրդի բարձրացան այն ժամանակ և այսպէս կոչուած „դասազուրկները“, որոնք առաջ էին եկել մեծ մասամբ վաճառականական ու տէրտէրական միջավայրից։ Դրանք արդէն ապաշխարողներ չէին. ազնուականութեան մեղքերը չունէին դրանք և ժողովրդի առաջ իրենք իրենց յանցաւոր չէին զգում, քանի որ իրենք ևս նախ և առաջ աշխատաւորներ էին, ապրում էին սեփական վաստակով։ Մտքով առողջ, սրտով քնքոյշ ու զգայուն՝ նրանք ևս հասկացան բոլոր ընդվզիչ անարդարութիւնն ու անգթութիւնը այն կարգերի, որոնք բաժին են ընկել աշխատաւոր ժողովրդին և նոյնպէս մտան պայքարողների մեծ բանակը, նոյնպէս կուրծք տուին թշուառ, իրաւազուրկ ընդհանրութեան համար։

Դրանք ևս մտաւորական-սոցիալիստներ էին, թէև ծնուած ոչ գիւղացի կամ գործաւոր, այլ վաճառական ու կղերական միջավայրում։

(Շարունակելի)

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

Ազգի դժբախտ եւ վրդովեցուցիչ դէպքի առթիւ „Դրօշակի“ խմբագրութիւնը պարտք համարեց իր եղբայրական զգացումը եւ համակրութիւնը արտայայտող հեռեւեալ նամակը ուղղել Ռուս Սոցիալիստ-Յեղ. կուսակցութեան Պարիզի մարմնին, մի կուսակցութիւն, որ ռուսական վերջին յեղափոխութեան գործում ամենավեհ ակտերի հեղինակն հանդիսացաւ եւ թերեւս, եթէ չը լինէին Ազգի զարհուրելի դաւանանութիւնները, որոնց զոհ եղան այդ կուսակցութեան ամենարնտիր ուժերից շատերը, ռուսական ժողովրդի նակատագիրը այլ կերպ տնօրինուած կը լինէր:

Սիրելի ընկերներ,

Խորապէս յուզուած ձեր կուսակցութեան պատահած դժբախտութենէն, մեր անկեղծ համակրութիւնը և մեր եղբայրական զգացումը կը յայտնենք ձեզի, իբրև հաւատարիմ բարեկամներ և իբրև ընկերներ, անձկութեան և անդոհանքի այս օրերուն, որ կը համակեն յեղափոխական բանակը։

Մենք կը յուսանք և կը հաւատանք հաստատապէս թէ Ընկերվարական-Յեղափոխական Կուսակցութիւնը՝ հաւատարիմ մնալով իր գործելակերպին և սկզբունք-

ներուն, յաղթական պիտի ելլէ այս բարոյական և ցաւագին տագնապէն՝ շարունակելու համար հերոսական պայքարը Ցարիզմի արիւնռուշտ բռնակալութեան դէմ, միշտ առաջնորդուած յիշատակովը իր փառաւոր հերոսներուն, որ անձնուիրութեան հիանալի օրինակներ տուած են աշխարհի։

Ձեզի պատահած դժբախտութիւնները պէտք չէ վհատեցնեն ձեզ և կասեցնեն յեղափոխական թափը՝ այն ճանապարհին վրայ զոր պիտի կտրէք։

Ռուսիան՝ որ այժմ վերածուած է մարդկային սպանդանոցի մը, արդարավրէժ բազուկին կը սպասէ։ Ընկերվարական-Յեղափոխական Կուսակցութիւնը այդ բազուկը եղած է և պիտի ըլլայ ապագային, խորտակելու համար բէժիմ մը որ նախատինք է բովանդակ աշխարհի համար։

Քաջութիւն մաղթելով ձեզի, սիրելի ընկերներ, կը յայտնենք մեր անկեղծ և անձնուէր բարեկամութեան զգացումները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

11 փետր. 1909

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Փոքր Հայքի անդրանիկ Բայօնական ժողովը գումարուած Ζ քաղաքին մէջ, հազարաւոր ընկերներու կողմէ կ'ուղղէ եղբայրական ողջոյն կովկասահայ գաղափարապաշտ ժողովուրդին, անոր՝ որ նիւթական և բարոյական անփոխարինելի օժանդակութեամբ թև ու թիկունք հանդիսացաւ տանկահայ բազմաչարչար դատին, անոր՝ որ մտքի և բազկի հզօր անհատականութիւններով ազնական, անվեհեր և յար արթուն արծիւի մը պէս հսկեց, տարիներ անդադար, սահմանի այս կողմը տառապող բազմութեան վրայ, անոր՝ որ յանձնին իր լաւագոյն ներկայացուցիչներուն, իբրև նոր դարու առաքեալի մը, քարոզեց ու սորվեցուց, գրով և սրով, թէ երկրի վրայ անոնք միայն իրաւունք ունին ապրելու, որոնք գիտեն այդ իրաւունքը ծեռք բերել հաւաքական աշխատութեամբ։

Եւ Յեղափոխութիւնը յաղթանակեց Տանկաստան։ Բռնապետութիւնը գէթ առ այժմ սարսափած է ժողովուրդին ազատագրական ահեղ շարժումէն, արհաւիրքները դադրած կ'երևին որոշ չափով և սկսող խաղաղ աշխատանքի ասպարէզին մէջ մենք կը տեսնենք դարձեալ կովկասահայ մտաւորականութեան լաւագոյն տարրերը կանգնած առաջին գործօն շարքերում, իրենք զիրենք տուած մեղաւոր, բարեխիղճ, անաղմուկ, հոյակապ և շինարար աշխատանքի մը։

Պատի՛ւ կովկասահայերուն։

Եւ ի՜նչ դառնութեամբ կը համակուին մեր սրտերը հիմա, երբ մեր այս՝ համեմատաբար ուրախութեան օրերուն մենք կը տեսնենք անոնց մօտ ահաւոր տեսարան մը կախաղանի, արիւնի և աւազակութեան, երբ կը տեսնենք այն սոսկալի կեանքը բանտի, աքսորի ու տանջանքի, «քրիստոնեայ» ոճրագործին երկրին մէջ։

Մա՛հ բռնաւորներուն։

Մեզ փոյթ չէ թէ Թիւրքիա արդէն հանգստացեր է։ Հ. Յ. Դաշնակցութեան համար չկա՜ն սահմաններ։ Կովկասահային ցաւը ու պարսկահային ցաւը այսուհետև ալ պիտի ըլլան ցաւերը տանկահային, և փոխադարձաբար, ինչպէս այդ եղած է անցեալին մէջ, բազմաթիւ տարիներու ընթացքին։ Ու մենք այժմ պատրաստ ենք երթալու այնտեղ և մեր բողոքի ձայնը միացնելու մեր Կովկասի եղբայրներու ձայնին, որէն անգամ մը միասին գոչելու համար.

Մա՛հ բռնաւորներուն։

Հ. Յ. Դ. ՓՈՔՐ-ՀԱՅՔԻ ՐԱՅՕՆ. ԺՈՂՈՎ

28 փետր. 1909

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Պիւրօն ստացած է՝

Ս. Դաւիդովիչ (Սերպիա) 20 ֆր., Կար. Խանենեան (Օմդուրման) 24 ֆր. 20 սանթիմ:

Ադէբսանկրիոյ Ծնբակալմիտէն՝

Հետեւեալ խմբերէ՝ Խոզան-Տաղ 270 դրտ. ողջ, Սերոբ-Փաշա 330, Շամէ 196, Ռազմիկ 587. 50, Խոթորիկ 516, Թանքաի Արուսեակ 357:

Փոքրիկ խումբի ձեռամբ հետեւեալներէ՝ Երկ 20 դրտ. ողջ, Հրայր 20, Ֆրանկիլ 20, Վիշապ 10, Փամպուգճեան 5, Կ. Մ. Զ. 20, Ոմն 5, Ասուր Գուզուճեան 16, Խենք 15, Մելքոն Հանէեան 20, Վանազն ազնաւորեան 40, Շմաւոն 20, Ա. Հաֆէսեան 5:

Հետեւեալներէ՝ Յովհաննէս Մելքոնեան 97. 50 դրտ. ողջ, Խաչիկ 195, Կամսարական եղբարք 975, Յովակիմեան 195, Կ. Թիւրապեան 97. 50, Պերճ Օհանեան 146. 25, Գ. Իփէկեան 97. 50, Ն. Գարամանեան 97. 50, Ս. Ե. Թաճեան 97. 50, Տոքտ. Գլընճեան աւստրիակ. 5 ֆրանկնոց մը, 8 դրտ, Աղաւնի Մուղալեան 8, „Սեւ հողերու" ներկայացումէ զուտ հասոյթ 2275. 75: Ներկայացումի առթիւ հետեւեալներէ եւէր՝ Բարթող փաշա 50, Ա. Պէկեան 10, Ա. Կամսարական 20, Յ. Աբզարեան 10, Յ. Պէքարեան 10, Մխիթար Մարտիրոսեան 10, Հ. Քիւրճեան 10, Մի ոմն երեխայէ 2, Մինրան Ազատեան 20, Գ. Սակաւիկեան 5, Գ. Իփէկեան 30, Ե. Մաթոսեան մէկ ավանսէի փոխարէն 97. 50 դրտ. ողջ:

Ընդհանուր գումար 7037. 50 դրտ. ողջ:

Արմաշու Կոմիտէն՝

Հետեւեալ խումբերէ՝ Երիցասարդ 199 դրտ., Հայազան 110, Հէրմէս 138, Ասող 126, Մշակ 115, Շաւարշան 77, Հայրենիք 74, Արարատ 37, Արծիւ 64, Անդրանիկ 84, Կայծակ 59, Արշալոյս 86, Առիւծ 28: Գումար 1197 դրտ.:

Հ. Յ. Դ. VI Կեդր. Կոմիտէն՝

ԿԱՐՄԻՐ ՔԱՂԱՔԻ շրջան, 1909 յունուարին. — Զախքր 25 ռուբլի, Թորոս 20, Արշակ Գրիգորեան 15, Սենքունուց 25, Կարմիր մարդ 150, Մկրտիչ 30, Մովսէս 100, Կարօ Պ. 5, Թաքուլ 5, Հայի Սահակ 5, Վարդօ 5, Թազունի 10, Լուիկ 5, Ռաֆայէլ 5, Լուսին 10 ռ.:

ՄԱՐՏԱՆՍԿԻ շրջան.—Դազանցի Ներսէս 10 ռուբլի, Տիւլկէր Օհանէս 10, Բաբի մարդ 50 ռ.:

ՃԻՃԻ ՀԱԲԼԻ շրջան.—Լուսարար 50 ռուբլի, Պօղոս 10, Դաբրիէլ 15, Մկրտիչ 15, Եւա 10 ռ:

ԺԻՏՈՒԽՕՎՍԿԻ շրջան.—Սանամ 50 ռուբլի, Վասկանուշ 50, Սուրէն 25, Արեգ 25 ռ.:

ԿԱԶԱՆՍԿԱՅԻ շրջան.—Եղիշէ 10 ռուբլի, Լեւոնիկ 10, Արտաշէս 10, Արշակ 2, Ադամ 3, Սարգիս 10, Արքէնայ 4, Սելիմ 15, Պեսօ 10. Օհան 5, Արտաշ 30, Խեչօ 16, Վազգէն 10 ռ.:

ՉԵՐԵՊԱԽԻ շրջան.—Վահէգ 3 ռուբլի, Գէորգ 1, Հրայր 2, Անուշաւան 1, Տիգրան 15, Ցակոբ 5, Վազգէն 10, Մինաս 5 ռ.:

ԿԱՄԼՈՒԿԻ շրջան.—Ծխախոտ 25 ռուբլի, Երկաթ 15, Սարգիս 20, Արծաթ 5 ռ.:

ՃԻՆՃԻԵՎՍԿԻ շրջան.—Նիկօ 40 ռուբլի, Արօ 15, Առաւօտ 100, Մեծ 30, Սարօ 25 ռ.:

ՍԱԳԱԼԱԻ շրջան.—Սմբատ 70 ռուբլի:

ՌԱԶԱՆՍԿԻ շրջան.—Բասենի դաշտ խմբի 1906-ի ապառիկներից 30 ռուբլի, Աղորիկ 20 ռ.:

Ընդհանուր գումար 1307 ռուբլի:

Աւազանի Կեդր. Կոմիտէն՝

1908 թի աշնան. — Արծիւ խմբ. 20 դրուշ. Վասպուրական խ. 20, Եւս 35, Բրիսատիոր խ. 50, Ժայռ խ. 53. 75, Էնկուրաժ 2160, Հրայր խ. 42. 50, Ձօն 1620, № 444-ից 1620, Շանթ խ. 35, Ս. Ս. 1080, Ա. Ա. 1080, Պեռ-կիւլ 200, Մ. Մ. 864, Տ. Մ. 500, Մ. Կ. 2160, Յ. Թ. 540, Արծիւ խ. 20, Ց. Տ. 324, Հրայր խ. 50, Վասպուրական խ. 35, Շանթ խ. 35, Բրմապեռ 5400, Ժայռ խ. 54, Մ. Թ. 540, Բրիսատիոր խ. 60, Դեղքափ խ. 75, Անանիս խ. 43. 75, Ներկայացումից 4043. 25 դրտ.: Գումար 22,761 դրտ.:

ԱՒԱԶԱՆ Քաղաքի տեղական կոմիտէն 1908 նոյ.—1909 յունուար.—Հետեւեալ խմբերից՝ Երկաթ 18 դրտ., Կայծակ 41. 50, Հրայր 52. 50, Դեղքափ 75, Արծիւ 20, Սուլիչ 44, Բրիսատիոր 60, Շանթ 35, Բրիսատիոր 70, Ժայռ 54, Փոքրիկ 15, Մասիս 24, Վասպուրական 47. 50, Խանդ 7, Սլաք 68 50, Սուլիչ 44, Բրիսատիոր 60, Հրայր 50, Շանթ 45, Երկաթ 20. 50, Փայլակ 12. 50, Վրէժ 34, Ժայռ 53. 75, Մասիս 27, Կայծակ 36. 25, Վասպուրական 47. 50, վիճակահանութիւնից մնացած զուտ շահ 183: Գումար 1245 դրտ.: